

ZCMC

ԶԱՆԳԵՋՈՒՐ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացման
հաշվետվություն

2025

«Զանգեզուրի պղնձամուլիբդենային
կոմբինատ» ՓԲԸ

Սրահունդ Էլենուրայի

Հայկական Էնդեմիկ

Բովանդակություն

- 04 — 2025 թվականը՝ հակիրճ
- 06 — Գլխավոր տնօրենի ուղերձը
- 08 — Կայուն զարգացման գծով տնօրենի ուղերձ

1 Ընդհանուր նկարագիր. «Ջանգեգուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

- 12 — Ընդհանուր նկարագիր
- 14 — Ներգրավվածություն. գործընկերության ամրապնդում հանքարդյունաբերության ոլորտում
- 14 — Պատասխանատվություն մատակարարման շղթայում

2 Տնտեսական ազդեցություն՝ նպաստելով տեղական համայնքների և երկրի տնտեսական բարգավաճմանը

- 19 — Տնտեսական ազդեցությունը թվերով
- 22 — Գնումներ և տնտեսական զարգացում

3 Կորպորատիվ կառավարում. ամուր կառավարման ինստիտուտների ձևավորում էթիկական առաջնորդության միջոցով

- 28 — Կորպորատիվ կառավարում
- 32 — Վարձատրության ռազմավարություն. Կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ)-ների վրա հիմնված կատարողականի կառավարման համակարգ
- 33 — Կոռուպցիայի դեմ պայքար. զրոյական հանդուրժողականության միջոցառումների և էթիկական գործելակերպի ամրապնդում
- 37 — Վստահության պահպանում. արդար մրցակցության հանձնառություն
- 38 — Թվային փոխակերպման նախաձեռնություն. թվային ինտեգրման խթանում բոլոր գործառնություններում

4 Մարդկային կապիտալ. մարդիկ՝ կայուն կատարողականի հիմքում

- 42 — Մարդկային կապիտալ
- 44 — Մարդկային կապիտալի դինամիկա. տաղանդների ներգրավում և պահպանում
- 48 — Ներդրում մարդկային կապիտալում. աշխատողների մասնագիտական զարգացման հանձնառություն
- 51 — Արդար վարձատրություն և արտոնություններ. աշխատողների բարեկեցության ապահովում

5 Անվտանգության, առողջության և ընկերության գործունեության կայունության մշակույթի ձևավորում

- 58 — Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգը և դրա հիմքերը
- 60 — Վտանգների բացահայտում, ռիսկերի գնահատում և վերահսկման միջոցառումներ
- 62 — Աշխատողների անվտանգության ապահովում և առողջության պահպանում
- 64 — ԱՄԱ ազդեցության կանխարգելումը ընկերության գործունեության և գործարար հարաբերությունների շրջանակում
- 65 — Ավելի անվտանգ աշխատավայրի ձևավորում՝ ԱՄԱ վերաբերյալ դասընթացների միջոցով
- 68 — Աշխատողների առողջության խթանում աշխատավայրում առողջության պահպանման համապարփակ ծառայությունների միջոցով
- 69 — Առողջապահական ծառայությունների հասանելիություն
- 70 — Շարունակական մոնիթորինգ և կանխարգելում
- 71 — Աշխատանքի հետ կապված վնասվածքներ և առողջական խնդիրներ
- 73 — Արտադրանքի և ծառայությունների կատեգորիաների՝ առողջության և անվտանգության վրա ազդեցության գնահատում

6 Տեղական համայնքներ. ներառական աճի խթանում

- 76 — Տեղական համայնքներ
- 78 — Համայնքային ներդրումներ
- 82 — Համայնքների դիմակայունության և կենսապահովման միջոցների բարելավում
- 83 — Հահագրգիռ կողմերի ներգրավվածություն. մտահոգությունների ընկալում և երկխոսության ամրապնդում

7 Բնապահպանական կառավարում և արդյունավետություն. պատասխանատու գործունեության խթանում

- 88 — Բնապահպանական քաղաքականություններ և միջազգային ստանդարտներ. մեր գործունեության հիմքը
- 89 — Էներգիայի օգտագործման կառավարում և գործառնական արդյունավետության բարձրացում
- 90 — Էներգիայի սպառում և էներգատարություն
- 92 — Ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարում և գործառնական դիմակայունություն
- 98 — Թափոնների ազդեցության կառավարում և ռեսուրսների արդյունավետության խթանում
- 100 — Մթնոլորտ արտանետումների կառավարում և օդի որակի ցուցանիշների բարելավում
- 104 — Կենսաբազմազանության վրա ազդեցության կառավարում և բնական էկոհամակարգերի պահպանություն
- 107 — Մեր առաջընթացը Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TNFD) շրջանակում. Կախվածություններ, ազդեցություններ, ռիսկեր և հնարավորություններ
- 110 — Հրջակա միջավայրի վերականգնում և հողերի ռեկուլտիվացիա

8 Կլիմայական փոփոխության կառավարում. 2026-2040թթ. կլիմայական փոփոխության ռազմավարության ներկայացում

- 115 — Համապատասխանեցում միջազգային հայեցակարգերին
- 116 — Կլիմայական փոփոխության կառավարում
- 117 — Արտանետումների կառավարման գործառնական շրջանակը և կարգավորող համատեքստը
- 118 — Ռազմավարության իրականացման ճանապարհային քարտեզ
- 120 — Թափանցիկություն և շահագրգիռ կողմերի ներգրավում
- 121 — Ջերմոցային գազերի արտանետումների ամփոփ նկարագիր
- 123 — Հողերի վերականգնում և կանաչապատում

Հավելվածներ

- 124 — Հավելված 1: Այս Հաշվետվության մասին
- 125 — Հավելված 2: Կրկնակի էականության գնահատում
- 140 — Հավելված 3: Բնապահպանական թեմաներ
- 162 — Հավելված 4: Հապավումներ
- 164 — Հավելված 5: Հաշվետվողականության համաշխարհային նախաձեռնություն (GRI) բովանդակության ցուցիչ
- 174 — Հավելված 6: Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) բովանդակության ցուցիչ
- 178 — Հավելված 7: Հավաստիացման եզրակացություն
- 186 — Հավելված 8: Կոնտակտային տվյալներ

2025 թվականը՝ հակիրճ

203,919

տոննա (խոնավ)

Պղնձի խտանյութի արտադրության
ընդհանուր ծավալ

15,548

տոննա (խոնավ)

Մոլիբդենի խտանյութի
արտադրության ընդհանուր ծավալ



723.0

միլիոն ԱՄՆ դոլար

Հասույթ

4,828

Աշխատողների թիվ 2025թ.
տարեվերջին

3,829

Արական սեռի աշխատողներ



4,282

Աշխատողներ տեղական
համայնքներից

452

Նոր աշխատողներ

5.86%

Աշխատողների հոսունության
ցուցանիշ

99%

Արհմիության անդամ
հանդիսացող աշխատողներ

1.06

Յուրաքանչյուր աշխատող
միջինում անցել է 1.06 ժամ
տնտեսական ուսուցում



1,045,057

տոննա CO₂-ի համարժեք

Ջերմոցային գազերի (ՋԳ)
արտանետումների ընդհանուր ծավալ

98,095

ՋԳ շրջանակ 1-ի արտանետումներ



705,668

ՋԳ շրջանակ 3-ի արտանետումներ

241,293

ՋԳ շրջանակ 2-ի արտանետումներ

69,298

մեգալիտր

Ջրափ ընդհանուր ծավալ

35,317

մեգալիտր

Ջրահեռացման ընդհանուր
ծավալ



48,091,856

տոննա

Գոյացած թափոնների ընդհանուր
ծավալ

3,447,670

գիգաջուլ

Էներգիայի ընդհանուր
սպառում



1,800.62

կգ

Կլանված CO₂-ի ընդհանուր ծավալ

\$18.2

միլիոն

Տեղական
համայնքներում
ներդրումներ

42.5

հեկտար

Վերականգնված
տարածք



Գլխավոր տնօրենի ուղերձը

GRI 2-22



723.0

միլիոն ԱՄՆ դոլար

Հասույթ

203,919

տոննա (խոնավ)

Պղնձի խտանյութի արտադրության ընդհանուր ծավալ

15,548

տոննա (խոնավ)

Մոլիբդենի խտանյութի արտադրության ընդհանուր ծավալ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2025Թ. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ:

Մեզ համար այս հաշվետվությունն ավելին է, քան մեր ձեռքբերումների տարեկան ամփոփումը: Այն արտացոլում է մեր ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ շարունակական ուղին՝ պատասխանատվության, թափանցիկության և երկարաժամկետ կայուն զարգացման մշակույթը ամրապնդելու համար:

2025 թվականը շրջադարձային փուլ էր ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հաշվետվողականության կատարելագործման և մեր կողմից հրապարակվող տեղեկատվության նկատմամբ վստահության ամրապնդման տեսանկյունից: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ իրականացրել է իր կայուն զարգացման տվյալների անկախ արտաքին հավաստագրումը՝ ներգրավելով մասնագիտացված երրորդ կողմ հանդիսացող աուդիտորական կազմակերպության: Սա նշանակալի առաջընթաց է մեր ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ համար: Կայուն զարգացում հնարավոր չէ ապահովել առանց հավաստի տեղեկատվության, տվյալների համակարգված կառավարման, մեր առաջընթացի անաչառ գնահատման և հետագա բարելավում պահանջող ոլորտները նախանշելու պատրաստակամության:

Մեկ այլ նշանակալի ձեռքբերում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ առաջընթացը ԲՍԿ սկզբունքների գնահատման և միջազգային ոլորտային փորձի հետ համեմատական վերլուծության գործընթացում: Մեր ցուցանիշների բարելավումը հաստատում է, որ մեր ընտրած ուղին ապահովում է իրական արդյունքներ:

2025թ. ընթացքում մենք նաև շարունակեցինք ամրապնդել կորպորատիվ կառավարման համակարգը և որոշումների կայացման մշակույթը: Այնպիսի խոշոր արդյունաբերական ընկերության համար, ինչպիսին ՋՊՄԿ-ն է, կայուն զարգացումը սկսվում է արդյունավետ կառավարման համակարգից, հստակ կանոններից, թափանցիկ գործընթացներից, պատասխանատու առաջնություններից, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերի՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աշխատողների, տեղական համայնքների, պետական մարմինների, բիզնես գործընկերների, ներդրողների և ապագա սերունդների շահերը հավասարակշռելու կարողությունից:

ՋՊՄԿ-Ն ՈՒՆԻ ԱՎԵԼԻ ԶԱՆ
70 ՏԱՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:
ԱՅՐՈՒՀԱՆԴԵՐՁ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ
Է ՈՉ ՄԻԱՅՆ ՆՐԱ ԱՆՅՅԱԼՈՎ,
ԱՅԼԵՎ ԶԱՐԳԱՆԱԼՈՒ, ՍՈՎՈՐԵԼՈՒ,
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՏԱՀՈՒԹՅԱՄԲ
ԱՌԱՋ ՀԱՐԺՎԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ:



Տեղական համայնքների հետ համագործակցությունը շարունակում է մնալ կայուն զարգացման նկատմամբ մեր մոտեցման հիմնասյուներից մեկը: Մենք լիովին գիտակցում ենք, որ արդյունաբերական ձեռնարկության երկարաժամկետ հաջողությունը կախված է վստահությունից, բաց երկխոսությունից և խնդիրների համատեղ լուծումից: Հաշվետու տարվա ընթացքում մենք շարունակել ենք խթանել թափանցիկությունը, շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավվածությունը և գործընկերության վրա հիմնված մոտեցումը:

2025թ-ին շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանությունը առավել կարևոր տեղ զբաղեցրին մեր օրակարգում: Զանի որ Հայաստանը պատրաստվում է հյուրընկալել ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17), մենք համոզված ենք, որ հատկապես կարևոր է ներկայացնել այն դիրքորոշումը, որ պատասխանատու հանքարդյունաբերությունը կարող է և պետք է լինի բնության, կլիմայի, բնական ռեսուրսների և կայուն ապագայի շուրջ ծավալվող ազգային և միջազգային ավելի լայն երկխոսության անբաժանելի մասը:

ՋՊՄԿ-Ն ունի ավելի քան 70 տարվա պատմություն: Այրումանդերձ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կայունությունը որոշվում է ոչ միայն ՆՐԱ անցյալով, այլև զարգանալու, սովորելու, պատասխանատվություն ստանձնելու և վստահությամբ առաջ շարժվելու կարողությամբ: 2025թ. ձեռքբերումները վերահաստատում են, որ մենք հավատարիմ ենք այս ուղուն:

Իմ անկեղծ երախտագիտությունն եմ հայտնում ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աշխատողներին, մեր բիզնես գործընկերներին, տեղական համայնքներին, պետական կառույցներին և բոլոր շահագրգիռ կողմերին՝ իրենց վստահության, համագործակցության և ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ շարունակական զարգացման գործում ունեցած ներդրման համար: Վստահ եմ, որ համատեղ ջանքերով մենք կշարունակենք ձևավորել ավելի պատասխանատու, ժամանակակից և մրցունակ հանքարդյունաբերության ոլորտ Հայաստանում:



Ռոման
Խուդոլի

«ՋՊՄԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳԼՃԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Կայուն զարգացման գծով տնօրենի ուղերձ

GRI 2-22



ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆ

4,828

աշխատակից

Աշխատողների թիվ 2025թ.
տարեվերջին

42.5

հեկտար

Վերականգնված տարածք

\$18.2

միլիոն

Տեղական համայնքներում
ներդրումներ

Ուրախ եմ ներկայացնել արդեն հինգերորդ տարին անընդմեջ հրապարակվող ԶՊՄԿ-ի Կայուն զարգացման հաշվետվությունը: Ամեն տարի մենք ձգտել ենք օբյեկտիվորեն ներկայացնել մեր ձեռքբերումներն ու բացթողումները՝ ոչ թե պարզապես որպես հաշվետվողականության պարտականություն, այլ որպես ինքնազնադատման միջոց՝ հետագա կատարելագործման համար:

2025թ. փոխակերպումների կարևոր ժամանակաշրջան էր «Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության համար:

2025թ. ընթացքում բացահայտվեցին աշխատողների գոհունակության հետ կապված էական խնդիրներ, որոնք հանգեցրին 10-օրյա բողոքի ցույցի ԸՆԿերության տարածքում: Աշխատանքային տարածայնությունը լուծվեց խաղաղ ճանապարհով՝ բարձրագույն ղեկավարության միջոցով իրականացվող բանակցությունների շրջանակում: Այդուհանդերձ, ցավոք, ստիպված եղանք դադարեցնել աշխատանքային հարաբերությունները ութ աշխատողների հետ, ովքեր նախաձեռնել էին այդ անօրինական գործունեությունը: Այդ միջադեպն ընդգծեց աշխատողների առավել նպաստակալին ներգրավվածություն և հաղորդակցություն ապահովելու անհրաժեշտությունը, ինչն էլ իրականացվեց տարվա ընթացքում՝ նպաստելով վստահության ամրապնդմանը և մարդկային ռեսուրսների կառավարման բարելավմանը:

Հաշվետու տարվա ընթացքում կայուն զարգացմանն ուղղված բազմաթիվ նախաձեռնություններից շատերը կառուցվածքային բնույթ էին կրում: Այդ նախաձեռնությունների ամբողջական արդյունքներն առավել տեսանելի կդառնան 2026 թվականի ընթացքում և հաջորդ տարիներին: Այնուամենայնիվ, 2025թ-ին իրականացված աշխատանքը նշանակալի քայլ է հանդիսանում կայուն զարգացման սկզբունքների՝ ԸՆԿերության կառավարման, գործունեության կազմակերպման և զարգացման գործընթացներում առավել խորությամբ ներդնելու ուղղությամբ:

Առաջընթացի առանցքային ուղղություններից մեկը կայուն զարգացման և ԲՍԿ հարցերի, ինչպես նաև ձեռնարկատիրական դիսկերի կառավարման նկատմամբ ԸՆԿերության հորիզոնի մակարդակով վերահսկողության հետագա զարգացումն էր: 2025թ. ընթացքում ԸՆԿերությունն առաջընթաց գրանցեց Կայուն զարգացման, ԲՍԿ և դիսկերի հանձնաժողովի ձևավորման գործընթացում, որի պաշտոնական հաստատումը նախատեսվում է 2026թ-ին: Դա ևս մեկ ապացույց է, որ ԸՆԿերության ղեկավարությունը և բաժնետերերը հանձնառու են ինտեգրելու կայուն զարգացումը և դիսկերի կառավարումը բիզնես ռազմավարությունում:

ԶՊՄԿ-ն ստեղծել է Համապատասխանության հանձնաժողով՝ ևս մեկ կարևոր քայլ կատարելով ԸՆԿերությունում էթիկական, թափանցիկ և հաշվետու գործարար գործելակերպի ամրապնդման ուղղությամբ:

Տարվա ընթացքում մենք նաև նախաձեռնել և խթանել ենք մի շարք կարևոր կորպորատիվ քաղաքականությունների և ներքին կանոնակարգերի, այդ թվում՝ Կայուն զարգացման քաղաքականության և Գնումների քաղաքականության մշակումը: Այս փաստաթղթերը նպաստակ ունեն ապահովել առավել հստակ ուղեցույցներ, ամրապնդել որոշումների կայացման հետևողականությունը և աջակցել կայուն զարգացման սկզբունքների ինտեգրմանը առօրյա բիզնես գործընթացներում: 2026թ-ին նախատեսվում է մշակել և ընդունել լրացուցիչ կորպորատիվ քաղաքականություններ՝ ԸՆԿերության կառավարման և ղեկավարման համակարգին էլ ավելի ամրապնդելու համար:

Կարևոր ձեռքբերումներից էր Կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ)՝ վրա հիմնված Կատարողականի կառավարման համակարգի ներդրումը: Այն փաստը, որ բարձրագույն ղեկավարության կատարողականի հիմնական ցուցանիշները փոխկապակցված են կայուն զարգացման ցուցանիշների, մասնավորապես՝ առողջության և անվտանգության ապահովման ցուցանիշների ու ԲՍԿ գնահատականի հետ, ևս մեկ ապացույց է, որ ԶՊՄԿ-ում կայուն զարգացումը միայն Կայուն զարգացման տնօրինության պատասխանատվությունը չէ, դա հանձնառություն է, որին կամավոր միացել է բարձրագույն ղեկավարության ամբողջ թիմը, որի համար ես առանձնահատուկ շնորհակալ եմ և հպարտ:

Տարին վերահաստատեց նաև ԶՊՄԿ-ի Ընդլայնման նախագծի ռազմավարական կարևորությունը: Վերջինս առանցքային նշանակություն ունի ԸՆԿերության երկարաժամկետ աճի և հետագա մրցունակության համար: Միևնույն ժամանակ, դրա հաջող իրականացումը պահանջում է պատասխանատու և հավասարակշռված մոտեցում, որը հաշվի է առնում գործունեության արդյունավետությունը, բնապահպանական և սոցիալական ցուցանիշները, շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը և ԶՊՄԿ-ի գործունեության հետ կապված համայնքների ու տարածաշրջանների երկարաժամկետ զարգացումը: Հատուկ ձևավորված թիմը մեծ աշխատանք է իրականացրել Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվության պատրաստման ուղղությամբ, որը կհամապատասխանի ոչ միայն ՀՀ օրենսդրությանը, այլև միջազգային ստանդարտներին: 2025թ-ին մենք նաև սկսել ենք աշխատել մեր Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TNFD) հաշվետվության պատրաստման ուղղությամբ, որի ներկայացումը նախատեսվում է 2026թ-ին: ԶՊՄԿ-ն շարունակում է անդամակցել առաջատար միջազգային նախաձեռնություններին, որոնք նպաստում են պատասխանատու բիզնես գործելակերպի զարգացմանը: 2026թ-ին մենք նախատեսում ենք միանալ ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրին (UNG)՝ ևս մեկ կարևոր քայլ կատարելով մեր գործունեությունը միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ԶՊՄԿ-ի ղեկավարությանը, բաժնետերերին, Տնօրենների խորհրդին, մեր աշխատակիցներին և այս աշխատանքում ներգրավված բոլոր գործընկերներին: Կայուն զարգացմանն ուղղված վերափոխումը պահանջում է հանձնառություն ԸՆԿերության բոլոր մակարդակներում: 2025թ. ձեռքբերումներն այս համատեղ ջանքերի արդյունքն են և ամուր հիմք են ստեղծում ԶՊՄԿ-ի զարգացման հաջորդ փուլի համար:

Արմեն Ստեփանյան

«ԶՊՄԿ» ՓԲ ընկերության
կայուն զարգացման գծով
տնօրեն

6.531

միլիոն մետրիկ տոննա



Ընդհանուր պղնձի/մոլիբդենի հանքաքանակի պաշարները
Քաջարանային հանքավայրի ավազանում

1



Ընդհանուր նկարագիր. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

12

Ընդհանուր նկարագիր

14

Ներգրավվածություն. գործընկերության
ամրապնդում հանքարդյունաբերության ոլորտում

14

Պատասխանատվություն մատակարարման
շղթայում

Ընդհանուր նկարագիր

GRI 2-1

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-Ն (ԱՅՍՈՒՇԵՏ՝ ԶՊՄԿ ԿԱՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ Է: ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՏԵՂՎՈՒՄ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԸ. ՀՀ-Ն ՏԻՐԱՊԵՏՈՒՄ Է ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ 21.875%-ԻՆ, ՄԱՅԱԾ ՄԱՍԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՄԱՍՆԱՎՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ:

Ընկերության գլխամասային գրասենյակը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում: Գործունեությունն ամբողջությամբ իրականացվում է Հայաստանի տարածքում և ընդգրկում է Քաջարանի բացահանքը, Քաջարանի հարստացուցիչ ֆաբրիկան և Կապանի մոտակայքում գտնվող Արծվանիկի պղնձամբարային տնտեսությունը: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային ընդլայնում կամ գործունեության ծավալների փոփոխություն չի գրանցվել:

Ընկերության բաժնետերերի կազմը.

45,000062%




«Արդյունաբերական ընկերություն» ԲԸ (ՌԴ)



2025թ-ին Ընկերությունը շարունակել է իրականացնել իր փոխկապակցված արտադրական ցիկլը, որը ներառում է հանքաքարի արդյունահանումը, վերամշակումը և պղնձի ու մոլիբդենի խտանյութերի մատակարարումը: Այս արտադրատեսակները շարունակում են մտալ կարևոր հումքային բաղադրիչներ համաշխարհային արդյունաբերության մի շարք ճյուղերի, այդ թվում՝ շինարարության, արտադրության և էներգետիկ անցմանը նպաստող տեխնոլոգիաների համար:

2025թ-ին արտադրական ցուցանիշները պահպանվել են դրական մակարդակում՝ պղնձի խտանյութի արտադրության ծավալների աճի շնորհիվ, միևնույն ժամանակ խտանյութի արտադրությունը մի փոքր նվազել է՝ պայմանավորված հանքաքարի բնութագրերով: Պղնձի խտանյութի արտադրությունը նախորդ տարվա համեմատ աճել է 12%-ով և կազմել է 203,919 տոննա





Արտադրության ծավալները՝ ըստ խտանյութի տեսակների



(խոնավ), ինչն արտացոլում է գործունեության կայունության բարելավումը և հանքաքարի վերամշակման ավելի մեծ ծավալները: Մոլիբդենի խտանյութի արտադրությունը կազմել է 15,548 տոննա (խոնավ)՝ ինչը համապատասխանում է հաշվետու ժամանակաշրջանում վերամշակված հանքաքարի բաղադրությանը:

Վաճառքի միտումները/ծավալները համապատասխանել են արտադրության դինամիկային: Պղնձի արտադրության աճը հանգեցրել է վաճառքի ծավալների ավելացմանը՝ 10%-ով, կազմելով 201,074 տոննա (խոնավ): Ի հակադրություն դրա՝ մոլիբդենի վաճառքի ծավալները նվազել են 15%-ով՝ ընդհանուր կազմելով 15,614 տոննա (խոնավ), ինչն արտացոլում է ինչպես արտադրության միտումները, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանի շուկայի դինամիկան:

Վաճառքի ծավալները՝ ըստ խտանյութի տեսակների



21,87500%

Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե (ՀՀ)

15,00000%

«Ուրբանեվենտ Պլյուս» ՍՊԸ (ՌԴ)

12,49990%

«Զանգեզուր Մայինգ» ՍՊԸ (ՀՀ)

5,62504%

«ԱՄՓ Հոլդինգս» ՓԲԸ (ՀՀ)

Ներգրավվածություն. գործընկերության ամրապնդում հանքարդյունաբերության ոլորտում




GRI 2-28

ԶՊՄԿ-ն շարունակել է ակտիվորեն մասնակցել ոլորտի առանցքային նախաձեռնություններին՝ նպաստելով ոլորտում երկխոսության և պատասխանատու հանքարդյունաբերության զարգացմանը: ԶՊՄԿ-ն շարունակում է ներգրավված լինել հետևյալ կազմակերպությունների աշխատանքներում:²

- ▶ Հայաստանի հանքագործների և մետալուրգների ասոցիացիա (ՀՀՄԱ),
- ▶ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (ԱՃԹՆ),
- ▶ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (ՀԱԳՄ),
- ▶ Հայ-բրիտանական գործարարության պալատ (ՀԲԳՊ),
- ▶ Հայաստանի եվրոպական բիզնես ասոցիացիա (ԵՎԲԱ — Հայաստան):

2026թ-ին ԶՊՄԿ-ն նախատեսում է միանալ ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրին (UNGCC)²՝ էլ ավելի ամրապնդելով իր հանձնառությունը կայուն գործարար գործելակերպին և միջազգայնորեն ճանաչված բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) սկզբունքներին:

Պատասխանատվություն մատակարարման շղթայում



2025թ-ին Ընկերությունը շարունակել է կատարելագործել մատակարարման շղթայի կառավարման իր մոտեցումը՝ հիմնվելով նախկինում իրականացված բարելավումների վրա և անցում կատարելով առավել կառուցվածքային, համակարգահեն և կայուն զարգացման սկզբունքները ներառող մոդելի: Այս անցմանը նպաստել է Ընկերության Գնումների քաղաքականության վերանայումը 2025թ. հունիսին և Գնումների նոր ուղեցույցների հաստատումը 2025թ. հոկտեմբերին: Միասին

այդ փաստաթղթերն ապահովել են գնումների գործունեության առավել ամբողջական համապատասխանությունը ISO 20400:2017 ստանդարտին և լավագույն միջազգային փորձին՝ մինչև ժամանակ սահմանելով ավելի հստակ ընթացակարգեր և արդյունավետ հսկողության մեխանիզմներ, ապահովելով կայուն զարգացման նկատառումների առավել հետևողական ինտեգրում գնումների գործընթացում:

Տարվա ընթացքում կառավարման համակարգերն էլ ավելի են ամրապնդվել՝ Ընկերության գործունեության հետ կապված լրացուցիչ ընթացակարգերի մշակումն ավարտելու միջոցով, ներառյալ՝ պահեստների կառավարման ստանդարտների վերաբերյալ ընթացակարգերի, որոնցում սահմանված են առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները, պահեստավորման պատշաճ գործելակերպը և կարգուկանոնի պահպանման սկզբունքները: Հաստատվել է նաև ջարդոնի և չօգտագործվող նյութերի կառավարման առանձին ընթացակարգը: Այդ միջոցառումները միասին նպաստել են ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը և պահեստների աշխատանքի շրջանակում բնապահպանական ցուցանիշների բարելավմանը:

Կառավարման համակարգերի բարելավմանը զուգահեռ Ընկերությունը կենտրոնացել է նաև մատակարարման շղթայում համակարգված մոտեցման և արդյունավետության ամրապնդման վրա: Գնումների գործընթացները վերանայվել են՝ նպատակ ունենալով ամրապնդել գնումների դասակարգերի կառավարումն ինչպես գործառնական, այնպես էլ կապիտալ ծախսերի ուղղություններով, իսկ գնումների, պլանավորման և գործառնական ստորաբաժանումների միջև միջֆունկցիոնալ համագործակցությունն առավել սերտացել է: Միաժամանակ շարունակվել են Ընկերության ռեսուրսների պլանավորման համակարգի արդիականացման նախապատրաստական աշխատանքները՝ ներառյալ հիմնական տվյալների շտկումը, ստանդարտացումը և թվային գործիքների ներդրումը՝ տվյալների ճշգրտությունն ու գործընթացների թափանցիկությունը բարձրացնելու նպատակով:

Այդ անցման հաջորդ քայլը մատակարարների գնահատման և հաստատման գործընթացների արդիականացումն էր՝ էլեկտրոնային փոստի միջոցով իրականացվող հաղորդակցությունից անցում կատարելով կենտրոնացված էլեկտրոնային հարթակի կիրառմանը: Այդ փոփոխությունը բարելավել է գնումների վերաբերյալ որոշումներին հետևելու հնարավորությունը, վերահսկողությունը և աուդիտի ելքարկվելու հնարավորությունը՝ դրանով իսկ բարձրացնելով գործընթացների թափանցիկությունն ու արդյունավետությունը:

Վերահսկողության առավել արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ մատակարարման շղթայի արդյունավետությունը գնահատվել է կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ) ընդլայնված համակարգի միջոցով, որն ընդգրկել է գործառնական, ֆինանսական և կայուն զարգացման ուղղությունները: Այդ ԿՀՑ-ները ներառել են պաշարների շրջանառելիությունը և օպտիմալացումը, գնումների արդյունավետությունը, մատակարարների գործունեության գնահատումը, չօգտագործվող ակտիվների կառավարումը, համապատասխանության ապահովման արդյունքները և բնապահպանական ցուցանիշներ, այդ թվում՝ փոխադրումների հետ կապված արտանետումները և ռեսուրսների սպառումը:

2025թ. ընթացքում ԶՊՄԿ-ի ռազմավարական առաջնահերթությունները շարունակել են կենտրոնացած մնալ անկայուն արտաքին միջավայրում մատակարարումների անընդհատության ապահովման, աշխատուժի կարողությունների զարգացման և գնումների ու փոխադրումների գործընթացներում կայուն զարգացման սկզբունքների առավել համակարգված ներդրման վրա: Հատուկ շեշտադրում է կատարվել կանխատեսումների ճշգրտության բարձրացմանը, գնումների իրականացման ժամկետների կրճատմանը, շրջանառու կապիտալի օպտիմալացմանը, փոխադրումների գործընթացների օպտիմալացմանը և պաշարների բարելավված կառավարման միջոցով Ընկերության գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանը:

Ընդհանուր առմամբ, 2025թ. նշանավորվեց նաև մեկ քայլով դեպի մատակարարման շղթայի առավել զարգացած մոդելի ձևավորումը, որը ենթադրում է ամրապնդված կառավարում, թվայնացման ավելի բարձր մակարդակ, գործառնական ինտեգրման բարելավում և կայուն զարգացման սկզբունքների առավել հետևողական ինտեգրում ԶՊՄԿ-ի ամենօրյա գործունեության շրջանակում:

GRI 301-1

2025թ-ին Ընկերությունը շարունակել է վերահսկել և կառավարել արտադրության և փաթեթավորման գործընթացներում օգտագործվող հիմնական նյութերի սպառումը՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պատասխանատու սպառման իր հանձնառության շրջանակում: Նյութերի սպառման միտումները հիմնականում արտացոլում էին արտադրական ակտիվության աճը և վերամշակման պահանջների կարգավորումը:

Արտադրության և փաթեթավորման համար օգտագործված նյութեր³

Նյութ	Չափման միավոր	2023	2024	2025
Հանքաքար	Տոննա	21,433,511.0	22,333,137.0	22,674,379.0
Յուղ	Տոննա	654.9	647.1	559.6
Բսալնյութեր	Տոննա	153.8	141.2	64.9
Գնդեր	Տոննա	14,982	15,305	15,162
Չհանգած կիր և ավելի քան 80% ակտիվացված կիր	Տոննա	16,803	11,678	14,449
Սոճու յուղ	Տոննա	89	123	144
Փրփրագոյացնող ռեագենտ	Տոննա	250	273	316
Բսալնոգենատ	Տոննա	493	499	586
Նատրիումի սուլֆիդ և Նատրիումի հիդրոսուլֆիդ	Տոննա	11,750	13,239	14,625

² Այս կազմակերպությունների և դրանց աշխատանքներում ԶՊՄԿ-ի ներգրավվածության բնույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է [2024թ. կայուն զարգացման հաշվետվությունում \(բաժին 1, էջ 15\)](#):

³ Առավել մանրամասն բացվածքը ներկայացված է [Հավելված 3-ում](#):

\$73.5

միլիոն



Պետական բյուջե կատարված ընդհանուր
վճարումները 2025 թվականին

2


Տնտեսական ազդեցություն՝ նպաստելով տեղական համայնքների և երկրի տնտեսական բարգավաճմանը

19

Տնտեսական ազդեցությունը թվերով

22

Գնումներ և տնտեսական զարգացում



GRI 3-3

Ընկերությունը շարունակում է ամրապնդել տնտեսական կառավարման իր ինտեգրված մոտեցումը՝ առօրյա գործունեությունում ավելի հետևողականորեն ներդնելով հաստատված քաղաքականությունները, ճահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը և ներքին կառավարման հայեցակարգը:

Բարձրագույն ղեկավարությունը շարունակում է ակտիվորեն ներգրավված լինել տնտեսական առաջնահերթությունների ձևավորման և ճահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի իրականացման վերահսկման գործում: Դազմավարական վերահսկողությունն ապահովում է ֆինանսական որոշումների համապատասխանությունը կորպորատիվ նպատակներին, օրենսդրության պահանջներին և կայուն զարգացման հանձնառություններին՝ միաժամանակ պահպանելով հաշվետվողականության և թափանցիկության բարձր մակարդակ բոլոր գործընթացներում:

2025թ-ին հատուկ ուշադրություն է դարձվել տնտեսական դիմակայունության ամրապնդմանը և ներառական աճի հնարավորությունների ընդլայնմանը: Ընկերությունը խթանել է տեղական տնտեսություններին աջակցող նախաձեռնությունները, այդ թվում՝ տեղական մատակարարների հետ կայուն համագործակցությունը, շարունակական ներդրումները համայնքներում ելթակառուցվածքների զարգացումը և շահագրգիռ կողմերի հետ ընթացիկ երկխոսությունը՝ ձևավորվող կարիքներն ու ակնկալիքներն ավելի լավ հասցեագրելու նպատակով:



Տնտեսական ազդեցությունը թվերով

ԶՊՄԿ-ն շարունակում է առաջատար դիրք զբաղեցնել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տնտեսությունում՝ նպաստելով ինչպես ազգային արտադրանքի ձևավորման գործընթացին, այնպես էլ ընդհանուր տնտեսական գործունեությանը: 2025թ-ին, համաձայն արտաքին հավաստիացում անցած ֆինանսական հաշվետվությունների, Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է 723.0 միլիոն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.4%-ով:

2025թ-ին Ընկերությունը շարունակել է պահպանել իր դիրքը Հայաստանի խոշորագույն հարկատուների շարքում՝ զբաղեցնելով երրորդ տեղը երկրում: Այս փոփոխությունը հիմնականում պայմանավորված է ուղայթի գծով հաշվեգրումների ավելի ցածր մակարդակով՝ նախորդ տարում գրանցված բացառիկ բարձր ցուցանիշի համեմատ: Պետական բյուջե կատարված ընդհանուր վճարումները կազմել են մոտ 73.5 միլիոն ԱՄՆ դոլար, ներառյալ շահութահարկը և ուղայթիները, ինչը վկայում է պետական ֆինանսների ապահովման գործում Ընկերության կայուն ներդրման մասին:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԲԱԾԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՊԱՐԲԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎՈՂ ԱՐՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՁԻՆ ԱՐԴՅՈՒՑՈՒՄ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է ՄՈՏ 2.5%, ԻՆՉԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՊՐԱԶԻ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՑ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՐԺԵՔՈՎ: ԱՅՍ ՈՒՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՌԱՎԵԼ ԸՆԴԱՄՅՆՎՈՒՄ Է ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՂԹԱՆԵՐԻ ԵՎ ՄՊԱՌՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ ԶՊՄԿ-Ի ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԸՆՈՐՉԻՎ:

Տնտեսական ազդեցություն, միլիոն ԱՄՆ դոլար

GRI 201-1, SASB EM-MM-000.A

Ցուցանիշ	2023	2024	2025
1. Ստեղծված ուղղակի տնտեսական արժեք	795.8	713.1	723.0
Հասույթ	795.8	713.1	723.0
2. Բաշխված տնտեսական արժեք	619.5	1,009.6	641.5
Գործառնական ծախսեր	289.9	317.8	291.1
Աշխատավարձեր, այլ վճարումներ և լրավճարներ	117.1	120.1	142.7 ⁵
Վճարումներ կապիտալ ներդրողներին (շահաբաժիններ)	0	337.6	115.8
Վճարումներ պետությանը, այդ թվում՝	192.3	215.8	73.6
– Շահութահարկ	56.7	48.6	34.7
– Ուղայթիներ	135.6	167.2	38.8 ⁶
Սոցիալական ներդրումներ	20.2	18.3	18.2
3. Պահպանված տնտեսական արժեք (1 – 2)	176.3	-296.5	81.6



\$723.0

միլիոն

Ընկերության կողմից 2025 թվականին գրանցված ընդհանուր հասույթը



+1.4%

Ընկերության ընդհանուր հասույթի աճը 2025 թվականին



\$73.5

միլիոն

Պետական բյուջե կատարված ընդհանուր վճարումները



2.5%

Ընկերության ուղղակի ներդրումը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ

⁴ ԶՊՄԿ նախագծի համար «տեղական» է համարվում Հայաստանի Հանրապետության Բաջարան և Կապան քաղաքները, որտեղ կենտրոնացված է Ընկերության հիմնական գործառնական գործունեությունը: Այս վայրերը համարվում են նաև Ընկերության գործունեության հիմնական տարածքներ:

⁵ Աճն արտացոլում է Ընկերության հանձնառությունն արդար վարձատրության ապահովմանը (տես «Դեպքի ուսումնասիրություն. աշխատանքային հարաբերություններ, գործունեության խափանում և վերականգնում (2025թ.) բաժինը):

⁶ 2025թ-ին ուղայթի գծով ստացվելիք գումարը նվազել է, քանի որ տարվա ընթացքում ուղայթի հաշվեգրումներն ավելի ցածր են եղել, քան նույն ժամանակահատվածում մարված գումարները:

2025թ. գործունեության հիմնական ցուցանիշների ամփոփ ներկայացում, միլիոն ԱՄՆ դոլար

GRI 207-4



Նյութական միջոցներ, բացի դրամական միջոցներից և դրանց համարժեքներից



⁷ Տես [Հավելված 1](#):

Անուղղակի տնտեսական ազդեցություն

GRI 203-2

Ընկերության տնտեսական ազդեցությունը տարածվում է իր հիմնական գործունեության շրջանակներից զգալիորեն դուրս: Զբաղվածության մոլտիպլիկատիվ 5-էֆեկտով ԶՊՄ-ի գործունեությունը թույլ է տալիս աշխատանքով ապահովել զգալիորեն ավելի մեծ թվով աշխատողների հարակից ոլորտներում: Վերջինիս շնորհիվ, գործարար հարաբերությունների և տնտեսական փոխկապվածության շնորհիվ անուղղակիորեն պահպանվում է մինչև 20,000 լրացուցիչ աշխատատեղ:

Այս ընդլայնված ազդեցությունը բխում է գնումների գործընթացներից, կապալառուների ներգրավումից և աշխատողների կատարած ծախսերից՝ օգուտ բերելով ոլորտների լայն շրջանակի, այդ թվում՝ տրանսպորտի, տեխնիկական ծառայությունների, առևտրի և այլ աջակցող ոլորտների:

5



ԶՊՄ-ի գործունեության գնահատված զբաղվածության մոլտիպլիկատորը

>20,000

լրացուցիչ աշխատատեղեր

անուղղակիորեն պահպանվում են բիզնես հարաբերությունների և տնտեսական փոխկապվածության շնորհիվ

Գնումներ և տնտեսական զարգացում

GRI 204-1

~\$359.4

միլիոն

Ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնումների) ընդհանուր ծախսերը 2025 թվականին

ԶՊՄԿ-Ն ՀԱՌՈՒՆԱԿՈՒՄ Ե ԶԱՆՁՆԱԴՈՒ ՄԱՍԼ ՏԵՂԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԶՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒ ԵՎ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԶԱՆԱԿՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԱՅՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

Գնումների բացվածք. ապրանքներ և ծառայություններ (ԱՄՆ դոլարով)

Ընկերության՝ տեղական աղբյուրներից գնումներին առաջնահերթություն տալու մոտեցումն արտացոլված է 2025թ. արդյունքներում. բոլոր ապրանքների 62%-ը ձեռք է բերվել Հայաստանից՝ 392 հայաստանյան մատակարարների միջոցով, ծառայությունների 91.6%-ը ձեռք է բերվել Հայաստանից՝ 475 տեղական ծառայություններ մատուցողների միջոցով: Արդյունքում տեղական գնումների կշռված միջին մասնաբաժինը կազմել է 77.3%:

2025թ-ին ապրանքների և ծառայությունների գծով գնումների ընդհանուր ծախսերը կազմել են մոտավորապես 359.4 միլիոն ԱՄՆ դոլար: Այդ գումարից 278 միլիոն ԱՄՆ դոլարը (մոտ 77%) հատկացվել է 22 տարածքում գործող 867 ընկերություններին, ինչպես ներկայացված է ստորև: Այս ռազմավարական բաշխումն ուղղակիորեն նպաստում է երկրում աշխատատեղերի ստեղծմանը, բարձրացնում է տեղական բիզնեսների մրցունակությունը՝ հնարավորություն տալով նրանց բարելավել իրենց ապրանքների և ծառայությունների որակը, և խթանում է ավելի լայն տնտեսական աճ ողջ երկրում:

Ապրանքների ձեռք բերում

2024թ. 51%-ի համեմատ՝ 2025թ-ին տեղական աղբյուրներից ձեռք բերված ապրանքների մասնաբաժինը աճել է՝ կազմելով 62%-ի: Եվրոպայից կատարված գնումների մասնաբաժինը նույնպես աճել է՝ 8%-ից հասնելով 10%-ի, մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ) կատարված գնումների մասնաբաժինը նվազել է՝ 23%-ից մինչև 18%:


Նմանատիպ միտում է նկատվում նաև ապրանքների գնումների ոլորտում. 392 մատակարարներ (ապրանքների բոլոր մատակարարների 60%-ը) գտնվում են Հայաստանում, մինչդեռ 134 մատակարարներ (21%) տեղակայված են Ռուսաստանի Դաշնությունում:

Պատմական միտումներին համապատասխան՝ Երևանը շարունակում է մնալ ապրանքների ձեռքբերման հիմնական ուղղությունը՝ կազմելով ներքին գնումների ընդհանուր ծախսի 75.8%-ը, ինչը փոքր-ինչ ավել է 2024թ. 73%-ի համեմատ: Սյունիքի մարզի այդ թվում՝ Կոտայքի և Սյունիքի, յուրաքանչյուրին բաժնի է ընկնում ներքին մասնաբաժնի մոտ 8.5%-ից 9.8%-ը:

Սյունքի մարզում կատարված գնումների ընդհանուր ծախսից.


- 51.6%-ը բաժին է ընկնում Կապանին,
- 26.8%-ը՝ Ագարակին,
- 17.9%-ը՝ Զաջարանին,
- 3.4%-ը՝ Սյունիքի մարզի այլ համայնքներին,
- 0.3%-ը՝ Գորիսին:

2025թ.ապրանքների ձեռքբերման աշխարհագրությունն ըստ ծավալի




● ՀՀ ● ՌԴ ● Եվրոպա ● Չինաստան ● Այլ (Կանադա, ԱՄՆ, Նիդերլանդներ և այլն)

2025թ.ապրանքների ձեռքբերման աշխարհագրությունն ըստ ընկերությունների թվի



● ՀՀ ● ՌԴ ● Եվրոպա ● Չինաստան ● Այլ (Կանադա, ԱՄՆ, Նիդերլանդներ և այլն)

Ապրանքների ձեռքբերման ծախսերի աշխարհագրական բաշխումը Հայաստանում



● Երևան ● Կոտայք ● Սյունիք ● Այլ

Սյունիքի վերագրվող մասնաբաժինը համամասնորեն նվազել է՝ 13.5%-ից կազմելով 9.8%, մարզի ներսում բաշխվածությունը պահպանել է նախորդ տարիների դասակարգմանը համապատասխան: Գնումների գործընթացները ըստ ռազմավարության կենտրոնացվում են Ընկերության գործունեության տարածքներին ամենամոտ համայնքներում՝ տեղական տնտեսական մոլտիպլիկատիվ ազդեցությունն առավելագույնի հասցնելու նպատակով:

359,418,393 Ընդամենը



170,542,064

Ծառայություններ

47.45%



188,876,329

Ապրանքներ


52.55%



Ապրանքների մատակարարները Հայաստանում

Հայաստանում գործող 392 տեղական մատակարարներից 213-ը (ընդհանուր մատակարարների 54%-ը) գտնվում են Երևանում, իսկ 66-ը (17%)՝ Սյունիքում: Մատակարարների մյուս մասը գտնվում է Կոտայքում (4%) և այլ մարզերում (25%), ինչպես ներկայացված է ստորև:

2025թ.ապրանքների տեղական մատակարարների աշխարհագրական բաշխումը Հայաստանում



● Երևան ● Կոտայք ● Սյունիք ● Այլ

Ծառայությունների ձեռք բերում

2025թ-ին ձեռք բերված ծառայությունները ցույց են տվել տեղական ինտեգրման բարձր մակարդակ՝ զգալիորեն գերազանցելով տեղական ապրանքների ձեռք բերման մասնաբաժինը: Ծառայությունների ձեռքբերման ընդհանուր ծախսերը կազմել են 188.9 միլիոն ԱՄՆ դոլար, որը Ընկերության տվյալ տարվա ընդհանուր գնումների ծախսերի 53%-ն է, մինչդեռ ապրանքների գնումներին բաժին է ընկել մնացած 47%-ը:

\$188,9 **53%**
միլիոն

Գնված ծառայությունների ընդհանուր ծախսերը

ընկերության տարվա գնումների ընդհանուր ծախսերից

Ծառայությունների ընդհանուր ծավալի

6.6%

\$12.4
միլիոն

ձեռք է բերվել Ռուսաստանի Դաշնությունում գործող

23
մատակարարներից

Ծառայությունների ընդհանուր ծավալի

1.8%


\$3.4
միլիոն

ձեռք է բերվել այլ տարածաշրջաններում գործող

41
միջազգային մատակարարներից


▶ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ 88%-Ը ԳՏՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

2025թ. ծառայությունների ձեռք բերման աշխարհագրական բաշխումն ըստ ընկերությունների թվի



Ի տարբերություն ապրանքների ձեռք բերումների միտումների՝ ծառայությունների ձեռք բերումների ամենաբարձր ծախսերը գրանցվել են Սյունիքում⁸՝ կազմելով Հայաստանում ծառայությունների ձեռք բերումների ընդհանուր ծախսերի ամենամեծ մասնաբաժինը՝ 48.9% (84.6 միլիոն ԱՄՆ դոլար): Այս հանգամանքը վկայում է տարածաշրջանի ծառայություններ մատուցողների հետ Ընկերության սերտ փոխկապակցվածության և գործառնական ու տեխնիկական կարիքների ապահովման հարցում նրանցից ունեցած կախվածության մասին: Երևանը շարունակում է կարևոր դեր ունենալ ծառայությունների ձեռք բերման կառուցվածքում՝ ապահովելով դրանց ընդհանուր ծավալի 42.3%-ը (73.2 միլիոն ԱՄՆ դոլար) Հայաստանում՝ հիմնականում 312 մասնագիտացված կապալառուների միջոցով: Մյուս մարզերը, այդ թվում՝ Արմավիրը (5.7%) և Արագածոտնը (1.3%), նույնպես ներդրում ունեն Ընկերության ներքին մատակարարման շղթայում՝ վկայելով էական տնտեսական ազդեցությունը ՀՀ տարածքում:

Հայաստանում ծառայությունների ձեռք բերման մասնաբաժինը



● Սյունիք ● Երևան ● Արմավիր ● Արագածոտն ● Կոտայք ● Այլ

Ծառայությունների ընդհանուր ծավալի

91.6%

\$173.1
միլիոն

ձեռք է բերվել Հայաստանում գործող

475
տեղական մատակարարներից

⁸ Սյունիքի մարզում ծառայությունների ձեռք բերման ծախսերի ավելի մեծ մասնաբաժինը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքներով, որոնք իրականացվել են Կապանում և Քաջարանում գտնվող գործընկեր կազմակերպությունների կողմից:

15

ավագ ղեկավարներ

2025 թվականին կազմել են բարձրագույն ղեկավարությունը, պատասխանատվություն կրելով ընկերության հիմնական գործառույթների ամենօրյա կառավարման և ռազմավարական վերահսկողության համար

3

Կորպորատիվ
կառավարում.
ամուր կառավարման
ինստիտուտների
ձևավորում էթիկական
առաջնությունների
միջոցով

28	Կորպորատիվ կառավարում
32	Վարձատրության ռազմավարություն. Կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ)- ների վրա հիմնված կատարողականի կառավարման համակարգ
33	Կոռուպցիայի դեմ պայքար. գրոյական հանդուրժողականության միջոցառումների և էթիկական գործելակերպի ամրապնդում
37	Վստահության պահպանում. արդար մրցակցության հանձնառություն
38	Թվային փոխակերպման նախաձեռնություն. թվային ինստեգրման խթանում բոլոր գործառնություններում

Կորպորատիվ կառավարում



GRI 3-3, 2-23, 2-24

Պատասխանատու հանքարդյունաբերությունը և հասարակության համար երկարաժամկետ, կայուն արժեքի ձևավորումն առանցքային են Ընկերության կորպորատիվ կառավարման մոտեցման համար: ԶՊՄԿ կառավարման կառուցվածքը հիմնված է թափանցիկության, հաշվետվողակ անության, բաժնետերերի, Տնօրենների խորհրդի, աշխատողների, օրենսդրական

մարմինների, տեղական համայնքների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային գործընկերների հետ հարգալից փոխգործակցության վրա: Հաճախորդի կողմերի հետ բաց երկխոսության միջոցով մենք նպատակ ունենք ապահովել էթիկական որոշումների կայացում, Ընկերության գործունեության բարեխղճություն և կայուն արժեքի ստեղծում ներգրավված բոլոր կողմերի համար:

ԶՊՄԿ կորպորատիվ կառավարման համակարգը կառուցված է 14 քաղաքականությունների ամուր հիմքի վրա, որոնք համապատասխանում են ոլորտի լավագույն փորձին: Մենք շարունակում ենք առաջնորդվել առաջատար միջազգային ստանդարտներով՝ պատասխանատու, թափանցիկ և էթիկական բիզնես գործելակերպի նկատմամբ մեր հանձնառությունն ամրապնդելու նպատակով: Խթանելով հաշվետվողականությունը, թափանցիկությունը և ներառական ներգրավվածությունը՝ ԶՊՄԿ-ն ամրապնդում է իր երկարաժամկետ կայուն զարգացման ցուցանիշները և ձևավորում տևական վստահություն շահագրգիռ կողմերի հետ:

2025թ-ին Խորհուրդը հաստատել է ևս երկու քաղաքականություն, որոնք հասանելի են մեր [կայքում](#):⁹

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԱՆԱԶԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս քաղաքականությունը սահմանում է Ընկերության հանձնառությունն՝ կայուն զարգացման սկզբունքներն իր գործունեության բոլոր ուղղություններում ինտեգրելու: Այն ընդգծում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու, աշխատողների աշխատանքի անվտանգությունն ապահովելու և առողջությունը պահպանելու, տեղական համայնքներին աջակցություն տրամադրելու և շահագրգիռ կողմերի թափանցիկ ներգրավվածությունն ապահովելու մեր հանձնառությունը: Ընդհանուր առմամբ, քաղաքականությունը կայուն զարգացումը սահմանում է որպես Ընկերության գործունեության առանցքային սկզբունք, որն ընկած է երկարաժամկետ արժեքի ստեղծման, ռեսուրսների պատասխանատու կառավարման և միջազգային լավագույն փորձի հետ համապատասխանության ապահովման հիմքում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ


Այս քաղաքականությունը սահմանում է Ընկերության գնումների գործընթացը կարգավորող սկզբունքներն ու ընթացակարգերը և նպատակ ունի ապահովել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այն հիմնված է առանցքային սկզբունքների, այդ թվում՝ արժեքի և որակի հարաբերակցության, արդարության, մրցակցության և էթիկական վարքագծի վրա՝ ներառելով շահերի բախման կառավարումը և մատակարարներին ներկայացվող պահանջները: Քաղաքականությունը սահմանում է գնումների պլանավորման, ռիսկերի կառավարման, մատակարարների ընտրության և պայմանագրերի կատարման կառուցվածքային գործընթացները՝ լիազորությունների հստակ պատվիրակման և բոլորը արկման մեխանիզմների հետ մեկտեղ: Այն նաև ընդգծում է շահագրգիռ կողմերի ներգրավվածության կարևորությունը և խթանում է բնապահպանական ու սոցիալական առումով պատասխանատու գնումների գործընթացը:



ԶՊՄԿ-ՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԸ Է ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԱԿԵՏ ՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ:

GRI 2-9

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կառուցվածքը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:



GRI 2-10

Բաժնետերերի ընդհանուր ժողովը ԶՊՄԿ-ի կառավարման կառուցվածքի բարձրագույն մարմինն է: Այն համախմբում է բաժնետերերի ներկայացուցիչներին՝ Ընկերության ռազմավարական ուղղությունները սահմանելու և կառավարմանն առնչվող առանցքային որոշումներ կայացնելու, այդ թվում՝ Տնօրենների խորհրդի անդամներին ընտրելու նպատակով:¹⁰

Ընդհանուր ժողովին աջակցելու նպատակով ԶՊՄԿ-ի Վերստուգիչ հանձնաժողովն անկախ վերահսկողություն է իրականացնում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Հանձնաժողովը բաղկացած է Ընկերության աշխատողներ չհանդիսացող՝ բաժնետերերի կողմից ընտրված երեք անդամից, և ստեղծվել է Ընդհանուր ժողովի կողմից: Այն ուսումնասիրում է ֆինանսական հարցերը, վերահսկում է ղեկավարության որոշումները և օգնում է ապահովել կիրառելի օրենքների և Ընկերության կանոնադրության հետ համապատասխանություն:

Թեև Ընկերության կանոնադրությամբ նախատեսված է անհրաժեշտության դեպքում Հաշվիչ հանձնաժողովի ստեղծում, հաշվի առնելով Ընկերության բաժնետերերի թիվը և դրա կազմակերպարարական ձևը՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն, 2025թ. ընթացքում Հաշվիչ հանձնաժողովի գործառույթներն իրականացվել են Կորպորատիվ քարտուղարի կողմից:

GRI 2-11

ԶՊՄԿ-ի **Տնօրենների խորհուրդն** իրականացնում է Ընկերության գործունեության ռազմավարական կառավարման վերահսկողությունը: Խորհրդի անդամներն ընտրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից. յուրաքանչյուր բաժնետեր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ունի իր ներկայացուցիչը, Տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված են նաև Ընկերության բարձրագույն ղեկավարության երկու ներկայացուցիչ՝ Գլխավոր տնօրենը և Գլխավոր տնօրենի տեղակալը: Տնօրենների խորհրդի երեք անդամներն ունեն ոլորտային փորձ: Անդամներից միայն մեկն է հանդիսանում ոչ գործադիր տնօրեն:

Ընկերության գործունեության կառավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը՝ որպես Ընկերության միանձնյա գործադիր մարմին, ով պատասխանատու

է նաև տնտեսության, շրջակա միջավայրի և մարդկանց վրա ԶՊՄԿ-ի գործունեության ազդեցության մոնիտորինգի և բոլոր գործառույթներում որոշումների հետևողական իրականացման ապահովման համար: Գլխավոր տնօրենն ունի անուղղակի մասնակցություն ԶՊՄԿ բաժնետիրական կապիտալում միջնորդ ընկերությունների միջոցով՝ 6.0703% չափով:

Տնօրենների խորհրդի նախագահը նախագահում է Խորհրդի նիստերը և ապահովում արդյունավետ ռազմավարական վերահսկողություն: Խորհրդի նախագահը Ընկերությունում գործադիր պաշտոն չի զբաղեցնում:¹¹

Հաշվետվողականության համաշխարհային նախաձեռնության (GRI) պահանջներին համապատասխան՝ ԶՊՄԿ-ն որպես բարձրագույն ղեկավարություն սահմանում է Գլխավոր տնօրենին և այն գործադիր ղեկավարներին, որոնք անմիջականորեն հաշվետու են Գլխավոր տնօրենին կամ պատասխանատու են ռազմավարական ուղղությունների համար: 2025թ.-ին բարձրագույն ղեկավարությունը բաղկացած է եղել 15 ղեկավարներից, որոնք պատասխանատվություն են կրել Ընկերության հիմնական գործառույթների ամենօրյա կառավարման և ռազմավարական վերահսկողության համար:

Տնօրենների խորհրդի հանձնաժողովներ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ, ԲՍԿ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՃԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2025թ.-ի վերջում Ընկերությունը ձևավորեց Կայուն զարգացման, ԲՍԿ և ռիսկերի հանձնաժողովը: ԶՊՄԿ-ի Տնօրենների խորհուրդը հետագայում՝ 2026թ.-ի փետրվարին, հաստատեց հանձնաժողովի ստեղծումը: Վերջինս մշտական գործող հանձնաժողով է, որը պատասխանատու է նախաձեռնություններ առաջարկելու, խորհրդատվական աջակցություն տրամադրելու և Տնօրենների խորհրդին ու կառավարման այլ մարմիններին ռիսկերի կառավարման, կայուն զարգացման և կորպորատիվ կառավարման վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու համար: Հանձնաժողովի հիմնական նպատակն է ապահովել Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի, կայուն զարգացման ռազմավարության և ԲՍԿ ցուցանիշների ռազմավարական վերահսկողությունը, ինչպես նաև ապահովել, որ այդ երեք ուղղությունները համապատասխանեն ԶՊՄԿ-ի բիզնես նպատակներին և շահագրգիռ կողմերի ակնկալիքներին:

Հանձնաժողովը բաղկացած է չորս անդամից՝ Տնօրենների խորհրդի մեկ ոչ գործադիր անդամից, Տնօրենների խորհրդի երկու գործադիր անդամից և Գլխավոր տնօրենի տեղակալից (Կայուն զարգացման գծով տնօրեն): Այն աջակցում է Տնօրենների խորհրդին ռիսկերի և կայուն զարգացման հարցերի վերաբերյալ հիմնավորված որոշումների կայացման գործում՝ նպաստելով հիմնական ռիսկերի բացահայտմանը, վերլուծությանը և գնահատմանը, ինչպես նաև միջազգային կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրմանը: Բացի այդ, Հանձնաժողովն առանցքային դեր ունի կայուն զարգացման հստակ թիրախների սահմանման գործում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են աշխատանքի անվտանգությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, համայնքների ներգրավվածությունը և կլիմայի փոփոխությունը՝ միաժամանակ վերահսկելով այդ նպատակների իրագործման առաջընթացը: Հանձնաժողովը նաև աջակցում է Ընկերության կողմից կայուն զարգացման ոլորտում իր ստանձնած հանձնառությունների հետևողակ կատարմանը և շահագրգիռ կողմերի համար թափանցիկ հաշվետվողականության ապահովմանը:

ԶՊՄԿ-ՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Ե ԷՖԵԿՏԱՆ ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՌԻԴՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՌՈՒՆԱԿԱՆ ՌԷՍՈՒՐՍԻԹՅԱՆ ՇՆՈՐՉԻՎ:

GRI 2-12, 2-13, 2-14

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերության գործունեության տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցությունների կառավարման համար հաշվետվողականությունը հանդիսանում է վերջինիս առաջնորդության և գործունեության մասով մոտեցումների անբաժանելի մասը: Գլխավոր տնօրենը՝ որպես Ընկերության միանձնյա գործադիր մարմին, իրականացնում է ԶՊՄԿ-ի՝ տնտեսության, շրջակա միջավայրի և մարդկանց վրա ունեցած ազդեցությունների ընդհանուր վերահսկողությունը, իսկ բարձրագույն ղեկավարները պատասխանատու են իրենց համապատասխան ոլորտներում ազդեցությունների կառավարման համար:

Այս վերահսկողության գործընթացն ապահովվում է Ներքին հաշվետվությունների կանոնավոր համակարգի միջոցով. բարձրագույն ղեկավարները ազդեցություններին առնչվող հարցերը

ներկայացնում են Գլխավոր տնօրենի հետ շաբաթական և արտահերթ հանդիպումների ընթացքում՝ ապահովելով ժամանակին որոշումների կայացում և հետագա քայլերի իրականացում: Ռազմավարական հարցերը և էական զարգացումները հետագայում ներկայացվում են Տնօրենների խորհրդին՝ վերահսկողության և ուղղորդման նպատակով:

Կայուն զարգացման, ԲՍԿ և ռիսկերի կառավարման հանձնաժողովը ստեղծվել է հետադարձ կապի այս մեխանիզմն ամրապնդելու նպատակով՝ աջակցելով ռիսկերի կառավարման, կայուն զարգացման առաջնահերթությունների և ԲՍԿ ցուցանիշների նկատմամբ Խորհրդի մակարդակով վերահսկողությանը՝ դրանով իսկ օգնելով ապահովել դրանց համապատասխանությունը ԶՊՄԿ-ի կայուն զարգացման հանձնառություններին:

Ընկերության բարձրագույն ղեկավարությունն իրականացնում է հաշվետվության ընդհանուր վերանայում՝ ապահովելով դրա ռազմավարական վերահսկողություն, դրա հրապարակայնության վերաբերյալ լինելու/ենթակա լինելու: Թեև Տնօրենների խորհուրդը և Բաժնետերերի ընդհանուր ժողովը չեն իրականացնում անմիջական վերահսկողություն հաշվետվության նկատմամբ, նրանք պարբերաբար ստանում են ԲՍԿ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն՝ կորպորատիվ նպատակներին և առաջնահերթություններին համապատասխանություն և ապահովելու համար:

GRI 2-15

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

ԶՊՄԿ-ն ապահովում է բարեվարքություն որոշումների կայացման գործընթացում՝ սահմանելով հստակ պահանջներ շահերի բախման բացահայտման և կառավարման համար ողջ Ընկերությունում: Շահերի բախման կանխարգելումն ու կարգավորումն իրականացվում են Ընկերության կայքում հասանելի Վարքագծի կանոնագրքում ներկայացված շահերի բախման վերաբերյալ դրույթներին համապատասխան:

Վարքագծի կանոնագիրքը պահանջում է, որ բոլոր աշխատողները, ներառյալ բարձրագույն ղեկավարությունը և Տնօրենների խորհրդի անդամները, գործեն Ընկերության լավագույն շահերից ելնելով և խուսափեն անձնական նկատառումներից, որոնք կարող են ազդել նրանց մասնագիտական դատողության վրա: Կանոնագիրքը սահմանում է, թե ինչն է համարվում շահերի բախում, և տրամադրում է ուղեցույցներ նման իրավիճակների հայտնաբերման, դրանց մասին տեղեկացման, բացահայտման և կարգավորման վերաբերյալ:

Թափանցիկ և պատասխանատու որոշումների կայացմանը նպաստելու նպատակով՝ աշխատողները պարտավոր են անհապաղ բացահայտել շահերի բախման ցանկացած հնարավոր կամ փաստացի դեպք: Դեպքերի վերաբերյալ պետք է հաղորդել Կայուն զարգացման գծով տնօրենին և Իրավաբանական դեպարտամենտի ղեկավարին՝ գնահատման և ուղղորդման համար: Գլխավոր տնօրենի տեղակալները շահերի բախման հնարավոր դեպքերի մասին տեղեկացնում են Իրավաբանական դեպարտամենտի ղեկավարին/Գլխավոր տնօրենի տեղակալին և Գլխավոր տնօրենին՝ հետագա վերանայման և դիտարկման համար:¹²

30 ¹¹ Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 3, էջ 43):

¹² Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ԶՊՄԿ-ի 2024թ. Կայուն զարգացման հաշվետվությունում (բաժին 3, էջ 46):



Վարձատրության ռազմավարություն. Կատարողականի հիմնական ցուցանիշների (ԿՀՑ)-ների վրա հիմնված կատարողականի կառավարման համակարգ

GRI 2-19, 2-20

2025թ-ի 3 ԶՊՄԿ-ն ՆԵՐԴՐԵԼ Է ԿՀՑ-
ՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ԻՐԸ ՆԱԽԱՏԵՍԱԿԱՆ
Է ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄՐԱՊԵՐՈՒ
ՀԱՄԱՐ:

Համակարգը համադրում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
մակարդակով սահմանված ցուցանիշները
(այդ թվում՝ միջև տոկոսների վճարումը,
հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի
մասնաճնշումները շահույթի (EBITDA) աճը, ԲՍԿ
ոեյտիկոգը, առողջության և անվտանգության
ապահովման ցուցանիշները, ընդհանուր
դրամական միջոցների արդյունավետությունը
և այլն) համարժեքով արտադրության
ծավալը) կատարողականի հստակ սահմանված
թիվայինների հետ՝ ապահովելով գնահատման
միասնական հիմք: Այս մոտեցման համաձայն՝
ղեկավարության վարձատրությունը
փոխկապակցված է ԲՍԿ մատրիցայով
սահմանված ցուցանիշների ապահովման հետ՝
ամրապնդելով պատասխանատվությունը ինչպես
ֆինանսական, այնպես էլ կայուն զարգացման
առնչվող արդյունքների համար:

Այս ցուցանիշներին լրացնում են գործառույթների
հատուկ ԿՀՑ-ները, որոնք ռազմավարական
նպատակները վերաժող են հստակ և
չափելի պարտականությունների ինչպես
ստորաբաժանումների, այնպես էլ անհատական
մակարդակներում: Տվյալ մոտեցումն ամրապնդում
է թափանցիկությունը, հետևողականությունը
և հաշվետվողականությունը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ամբողջ կառուցվածքում և նպաստում է
անհամապատասխանությունների ժամանակին
բացահայտմանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝
ուղղիչ գործողությունների իրականացմանը:

Կատարողականի գնահատումը լրացվում է անմիջական
ղեկավարների կողմից իրականացվող որակական չափանիշների
գնահատումներով: Վերջիններս ենթադրում են ոչ միայն
քանակական նպատակների ապահովում, այլև իրականացման
որակը, գործառնական խնդիրներին արձագանքելու
կարողությունը, առաջնությունների ցուցանիշները և ընդհանուր
ներդրումն ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ նպատակների իրագործման գործում:



Կոռուպցիայի դեմ պայքար. գրոյական հանդուրժողականության միջոցառումների և էթիկական գործելակերպի ամրապնդում

GRI 3-3, GRI 205-1, GRI 205-2, SASB EM-MM-510a.1

ԶՊՄԿ-ն ՀԱՆՁՆԱՌՈՒ Է ՊԱՀՊԱՆԵԼ ԷԹԻԿԱԿԱՆ
ՎԱՐՔԱԳԾԻ ԱՄԵՆԱԲԱՐՁԻ ՀԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ Ե ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՐ
ԶՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ
ՍԱՀԱՄԱՆԱԿԱՆ Ե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ
ԿԱՆՈՆԱԳՐԻ ԵՎ ՀԱՄԱԿՈՐՈՒՊՑԻԱՆ
ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ:
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
Ե ՀԱՍՏԱՎԱԾ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՆԵՐՔԻՆ ՀԱՅՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ
ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:

2025թ-ին ԶՊՄԿ-ն Հարունակել է ամրապնդել իր
բարեկարգության և էթիկական կառավարման
հիմունքները՝ ընդլայնելով իր ուշադրությունը
գրավոր հանձնառություններից դուրս՝ ընդգրկելով
նաև այն համակարգերն ու գործընթացները,
որոնք ապահովում են այդ հանձնառությունների
պատշաճ կատարումը: Թեև Հասկարողացիկ
քաղաքականությունը դեռևս չի սահմանում
դիսկրիմինացիան պաշտոնական,
պարբերական շրջափուլ, կոռուպցիոն
դիսկրիմինացիան կառավարվում են նպատակային
համապատասխանության ապահովման
գործողությունների միջոցով, որոնք ներառում են՝

- համապատասխանության մոնիտորինգը
և համապարփակ ուսումնասիրության
իրականացումը բարձր դիսկրիմինացիային
գործընթացային ոլորտներում, որոնցից
են գնումները և երրորդ կողմերի հետ
փոխգործակցությունը,
- կոռուպցիայի, խաբուխության և շահերի
բախման դեպքերի կանխարգելման
ուղղված ներքին հսկողության
մեխանիզմները,
- անանուն ազդարարման ուղիներ, որոնք
աշխատողներին հնարավորություն են տալիս
հաղորդել ոչ էթիկական վարքագծի մասին:

Կոռուպցիոն ռիսկերի կառավարման հիմնական ոլորտները

- Գնումներ և պայմանագրերի կնքում. արդար մրցակցության և
անկախ որոշումների կայացման ապահովում բոլոր դեպքերում:
- Երրորդ կողմերի հետ հարաբերություններ. մատակարարների,
կապալառուների և բիզնես գործընկերների համապարփակ
ուսումնասիրության հուսալի ընթացակարգերի առկայություն:
- Նվերներ և հյուրընկալություն. ներքին հստակ սահմանափակների
առկայություն՝ անհարկի ազդեցությունը կանխելու նպատակով:
- Փոխգործակցություն պետական պաշտոնյաների հետ.
էթիկայի նորմերի և համապատասխանության պահանջների
պահպանում պետական պաշտոնյաների հետ բոլոր
շփումներում:

GRI 205-3

2025թ-ի վերջում Համապատասխանության
հանձնաժողովը հայտնաբերել է
անհամապատասխանության երկու դեպք՝ հետագա
ընթացք տալու համար: Երկու դեպքերն էլ առնչվել
են Վարքագծի կանոնագրի խախտումներին:
Առաջին դեպքը հանդիսացել է նաև Աշխատավարձ
բոնուսային, ուսնագրությունների, խտրականության և
հաշվեհարդարի դեմ պայքարի քաղաքականության
խախտում: Երկրորդ դեպքը ներառում էր նաև
Գնումների քաղաքականության, մասնավորապես՝
շահերի բախմանը վերաբերող դրույթների
անհամապատասխանություն: Համապատասխանության
հանձնաժողովի նիստից հետո միաձայն որոշում է
կայացվել խախտում կատարած աշխատողներին
տալ պաշտոնական գրավոր նախազգուշացումներ՝
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքին քաղաքականությունների և
ընթացակարգերի համաձայն: Այդ աշխատողներին
խորհուրդ է տրվել վերանայել Վարքագծի կանոնագիրը
և համապատասխան քաղաքականությունները՝ իրենց
իրազեկվածությունն ամրապնդելու և Հարունակական
համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Մրցակցային
համապատասխանություն,
էթիկա և հակակոռուպցիոն
միջոցառումներ

ԶԴՊԿ-Ն ՄՇԱԿԵԼ Է
ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿՈՄՊԼԱՆԵՍԻ
ԾՐԱԳԻՐ՝ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ
ԵՎ ՀՈՒԿԱՅՈՒՄ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ
ՎԱՐՔԱԳԻԾԸ ԿԱՆԽԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ: ԹԵԵՎ ԾՐԱԳՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ Ի
ՍԿԶԲԱՆԵ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԷՐ 2025Թ-
ԻՆ, ՍՈՒՅՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԴՐԱ
ՄՇԱԿՈՒՄԸ ԴԵՌ ԸՆԹԱՅՔԻ ՄԵՉ
Է, ԵՎ ԶԳԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՒՄ ԱՅՆ ԱՎԱՐՏԻՆ
ՀԱՍՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ: ԾՐԱԳՐԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է
ՄՆԱԼ 2026Թ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԱՌԱՋՆԱՇԵՐԹՈՒԹՅՈՒՆ:

հիշպետ նշել էինք Նախորդ տարի,
Ընկերությունն ամրապնդել է իր
համապատասխանության ապահովման
համակարգը՝ ստեղծելով առանձին
Համապատասխանության կոմպլեքսի
ծառայություն: Գործառույթում ներառված
են Հակամրցակցային կոմպլեքսի
համակարգողի և կոմպլեքսի գլխավոր
մասնագետի հաստիքները, որոնց
պարտականությունները ներկայումս
իրականացվում են Հակամրցակցային
կոմպլեքսն համակարգողի և
իրավաբանական դեպարտամենտի
կողմից: Հակամրցակցային կոմպլեքսն
համակարգողը ուսումնասիրում է գնումների
առնչվող տեխնիկական առաջադրանքները
և վերահսկում է վաճառքի ու գնումների
գործընթացները՝ մրցակցության,
հավասարության և թափանցիկության
սկզբունքների պահպանումն ապահովելու
նպատակով: 2025թ-ի ընթացքում
Համակարգողի կողմից ուսումնասիրվել են
ավելի քան 60 գնումների ընթացակարգեր
և 40-ից ավելի տեխնիկական բնութագրեր՝
հակամրցակցային կոմպլեքսի
շարունակական վերահսկողության
շրջանակում: Համակարգողը նաև
առանցքային դեր է խաղում հնարավոր

մրցակցային ռիսկերի, այդ թվում՝ շահերի հնարավոր բախումների, հակամրցակցային համաձայնությունների հավանական դրսևորումների և այլ օրինաչափությունների բացահայտման և մեղմման գործում, որոնք կարող են վկայել հակամրցակցային վարքագծի մասին:

Կումպլանսի գլխավոր մասնագետը պատասխանատու է պատժամիջոցների առկայության ստուգումների, բիզնես գործընկերների համապարփակ ուսումնասիրության և համապատասխանության ապահովման հետ կապված ռիսկերին առնչվող այլ հարցերի կառավարման համար: Միասին նրանք ապահովում են Ընկերության գործունեության համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը, այդ թվում՝ մրցակցության պաշտպանության մասին օրենքին և ներքին քաղաքականություններին ու կանոնակարգերին: Բացի այդ, Համապատասխանության ապահովման ծառայությունը տրամադրում է մրցակցային համապատասխանության հետ կապված աջակցություն միաձուլումների և ձեռքբերումների գործարքներում՝ դրանով իսկ ամրապնդելով Ընկերության ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման գործելակերպը:

Որպես Հնչեկության բարեկարգության ավելի ընդգրկուն համակարգի մաս՝ Հակակոռուպցիոն ջաղաքականության ներքո մշակվում է մանրամասն Հակակոռուպցիոն կանոնակարգ, որի ընդունումը նախատեսվում է 2026թ-ին:

Թափանցիկությունը հիմնարար նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում վստահության ամրապնդմանն ուղղված ԶՊՄԿ-ի ձեռնարկվող քայլերի համար: Մենք ակտիվորեն աջակցում ենք Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) իրականացմանը ազգային մակարդակով և կատարում ենք բոլոր իրավական պարտավորությունները ֆինանսական գործարքներում կոորդացիայի դեմ պայքարի և թափանցիկության ապահովման հետ կապված: Ամեն տարի մենք հրապարակում ենք մեր գործունեության արդյունքները՝ ԱՃԹՆ հաշվետվողական ստանդարտին համապատասխան: ԶՊՄԿ-ն նաև մասնակցում է ԱՃԹՆ բազմաշահառու խմբի աշխատանքներին՝ նպաստելով ազգային ԱՃԹՆ հաշվետվությունների կազմմանը և արդյունահանող ոլորտում թափանցիկությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացներին:

Այդ հասնառությունները գործնականում իրականացնելու համար 2025թ-ին ՋՊՄԿ-ն կազմակերպել է տարբեր ուսուցման և իրազեկման ծրագրեր: Որոշ աշխատողներ մասնակցել են դասընթացների, որոնք անդրադարձել են հետևյալին՝

- Էթիկական որոշումների կայացում,
- հակակոռուպցիոն միջոցառումների հետ կապված ակնկալիքներ,
- Ընկերության Վարքագծի կանոնագիրք,
- տեղեկացման ուղիների պատշաճ օգտագործում,
- կորուպցիոն ռիսկերի կառավարումը բարձր ռիսկային պաշտոններում:

Այս ուսուցողական միջոցառումները նախատեսված էին ոչ միայն կանոնակարգերի մասին տեղեկացման, այլև իրական իրավիճակներում ճիշտ կողմորոշվելու հարցում մասնակիցներին աջակցելու և, այդպիսով, բարելավողության նկատմամբ ընդհանուր պատասխանատվության ձևավորմանը նպաստելու համար:

ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՐՃՐԱԾԱՅՆԵԼՈՒ ՄՇԱԿՈՒԹԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

GRI 2-26

Թափանցիկության սկզբունքներով առաջնորդվող կազմակերպությունը ձևավորում է այնպիսի միջավայր, որտեղ անհատները կարող են անվտանգ բարձրաձայնել իրենց մտահոգությունները: Այս նպատակով ԶՊԿ-ն շարունակում է խթանել իր Ազդարարման քաղաքականությունը, որն ապահովում է խախտումների մասին մտահոգությունների հաղորդման գաղտնի ուղիներ: Անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է ոչ պատշաճ վճարումներին, շահերի բախմանը, հովանավորչությանը, խտրականությանը կամ անբարեխիղճ վարքագծի այլ դրսևորումներին, աշխատողներն ու շահագրգիռ կողմերը միշտ խրախուսվում են բարձրաձայնել իրենց մտահոգությունները: Համապատասխանության հանձնաժողովը, որը նախագահում է Կայուն զարգացման գծով տնօրենը և որի կազմում ընդգրկված են բարձրաստիճան ղեկավարության ներկայացուցիչները, պատասխանատու է վարքագծի կանոնադրի խախտումների առնչվող կարևոր հարցերի, այդ թվում՝ էթիկական նորմերի խախտումների, աշխատավայրում անպատշաճ վարքագծի, Ընկերության գործունեության ռիսկերի ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում դրանց էսկալացիայի, ինչպես նաև Ազդարարման և բողոքների դիտարկման քաղաքականությունների շրջանակում հաշվետվությունների ներկայացման համար:

ԶՊՄԿ-ի մոտեցման առանցքային տարրերից է մտահոգությունները բարեխղճորեն բարձրաձայնող անձանց պաշտպանության հանձնառությունը։ Ազդարարման քաղաքականությունը երաշխավորում է գաղտնիությունը և արգելում է հաշվեհարդարի ցանկացած ձև՝ լինի դա ուղղակի, թե անուղղակի։ Այդ պաշտպանական ընթացակարգերը կիրառվում են անկախ խնդրի դիտարկման արդյունքից՝ ընդգծելով Ոսկերության այն ուղերձը, որ մտահոգությունների բարձրաձայնումը ոչ միայն պաշտպանված է, այլև խրախուսվում է։

Խնդիրների մասին հաղորդելու գործընթացը հնարավորինս հասանելի դարձնելու համար ԶՊՄԿ-ն ապահովում է տեղեկացման տարբեր ուղիներ, ներառյալ տարածքներում տեղադրված բողոքների արկղերը, հատուկ թեժ գիծը, էլեկտրոնային փոստի հասցեն՝ 13, սոցիալական մեդիա հարթակները և կայքում տեղադրված հետադարձ կապի ձևը՝ աշխատողներին, գործընկերներին և արտաքին շահագրգիռ կողմերին տրամադրելով մտահոգություններն անվտանգ և իրենց համար հարմար եղանակով ներկայացնելու հնարավորություններ [այն շրջանակ:



¹³ ԶՊՄԿ-ի Բողոքների դիտարկման ընթացակարգ, կապի ուղիներ՝ թեժ գիծ: +374 95 364587; էլ. հասցե. grievance@zcmc.am.

Բողոքարկման մեխանիզմ

GRI 2-25

2025թ-ի ընթացքում ԶՊՄԿ-ն շարունակել է արձագանքել համայնքների կողմից բարձրացրած մտահոգություններին: Առաջնորդվելով Բողոքների դիտարկման քաղաքականությամբ՝ Ընկերությունը կիրառել է կառուցվածքային մոտեցում բողոքների ընդունման, գնահատման և կարգավորման գործընթացներում:¹⁴

Յուրաքանչյուր բողոք դիտարկվում է առանձին հիմունքով: Բողոքի բնույթից կախված՝ ԶՊՄԿ-ն ներգրավում է համապատասխան ստորաբաժանումներին կամ արտաքին փորձագետների՝ բողոքը գնահատելու կամ հետաքննություն իրականացնելու նպատակով: 2025թ-ին բողոքների լուծման արդյունքները ներառել են ինչպես ուղղակի փոխհատուցում և ուղղիչ գործողություններ, այնպես էլ շարունակական երկխոսություն բողոքը ներկայացված անձանց հետ՝ նրանց մտահոգությունները լիարժեք հասկանալու և հասցեագրելու համար:

Համայնքների ներգրավվածությունը գործընթացի առանցքային մասն է: Հետադարձ կապը հավաքագրվում է հանդիպումների, հանրային քննարկումների և տեղական շահագրգիռ կողմերի հետ շարունակական փոխգործակցության միջոցով: Ընկերությունը վարում է մանրամասն գրառումներ, այդ թվում՝ բողոքների մատյաններ, համայնքների հարցումների տվյալների բազաներ և հանդիպումների արձանագրություններ՝ խնդիրներին հետևելու և կրկնվող խնդիրները հայտնաբերելու համար: Հնարավորության դեպքում իրականացվում են ուղղիչ գործողություններ հետևանքները մեղմելու կամ կանխելու համար:

Կիրառելով այս մոտեցումը՝ ԶՊՄԿ-ն շարունակում է ձևավորել բողոքների կառավարման թափանցիկ և արձագանքող համակարգ՝ ապահովելով բողոքների արդարացի քննությունը և քաղված դատերի օգտագործումը շարունակական բարելավումների համար:

2025թ-ին ԶՊՄԿ-ն ստացել է հողի հետ կապված 12 նոր բողոք: Դրանցից 11-ը լուծվել է հաշվետու տարվա ընթացքում, իսկ մեկը մնացել է բաց՝ մինչև արտաքին գնահատումների ավարտը:¹⁵

Հողին և գույքին հասցված վնասի դեպքերի լուծման գործընթացը հեշտացնելու նպատակով ԶՊՄԿ-ի սոցիալական և բնապահպանական հարցերով զբաղվող թիմերը Զաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչների հետ իրականացրել են համատեղ տեղայցեր՝ ելակետային տվյալներ հավաքագրելու համար: Իրավաբանական դեպարտամենտը լրացուցիչ աջակցություն է տրամադրել փոխհատուցման գործընթացին՝ ներքին ընթացակարգերի և կարգավորող մարմինների կողմից կիրառելի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Որոշ դեպքերի հանգուցալուծումներ պահանջել են լրացուցիչ ժամանակ՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով.

- Հողօգտագործման իրավունքի հաստատման դժվարություններ, երբ հողակտորները մշակվել են ոչ թե գրանցված սեփականատերերի, այլ օգտագործողների կողմից,
- Համայնքային մամլինների հետ համագործակցելու անհրաժեշտություն՝ համապատասխան գրառումները ստանալու, վավերացնելու կամ թարմացնելու նպատակով,
- Հողի պատմական օգտագործման կամ ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) պայմանավորվածությունների հետևանքով առաջացած վեճեր, որոնք պահանջում են մանրամասն պարզաբանում:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՂՆԴՈՒՄ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

2025թ-ին ԶՊՄԿ-ն մշակել է երկու կարևոր նոր ընթացակարգային փաստաթուղթ.



Հողին և գույքին հասցված վնասի վերաբերյալ բողոքների դիտարկման մանրամասն ընթացակարգ,



Կայուն զարգացման տնօրինությունում բողոքների դիտարկման և ազդարարման դեպքերի ուսումնասիրության կառուցվածքային, քայլ առ քայլ ուղեցույց:

Սույն հաշվետվության պատրաստման դրությամբ փաստաթղթերը դեռևս գտնվում են վերանայման փուլում և դրանց պատրաստումն ավարտի կհասցվի Գլխավոր տնօրենի հաստատմանը ներկայացնելու համար: Փաստաթղթերի ներդրումը կնպաստի գործելակերպի ստանդարտացմանը, ստորաբաժանումների միջև աշխատանքի համակարգավածության բարելավմանը և շահագրգիռ կողմերին կտրամադրի հստակ պատկերացումներ բողոքների դիտարկման գործընթացից ակնկալվող արդյունքների վերաբերյալ:

¹⁴ Բողոքների դիտարկման ընթացակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ընկերության 2024թ. Կայուն զարգացման հաշվետվությունում (բաժին 3, էջ 51):

¹⁵ 2024թ-ին ներկայացված բոլոր բողոքները կարգավորվել են. ընդհանուր վճարվել է 53,674 ԱՄՆ դոլար 28 հողօգտագործողի և մեկ հողատիրոջ, մեկ պահանջ ճանաչվել է անհիմն, իսկ մյուս դեպքերը, տեղին լինելու դեպքում, փոխանցվել են համայնքային մարմիններին:

Վստահության պահպանում. արդար մրցակցության հանձնառություն

GRI 2-27, 206-1

ԶՊՄԿ-ն ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԽԱՏՈՐԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ ՆԱԿԱՄԵՆԱՇՆՈՐԶԱՅԻՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ԿԻՐԱՌԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՆՍԱԿՈՐԵՆ ԱՐԳԵԼՈՒՄ Է ԱՅՆՊԻՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԻՍԻՔ ԵՆ ԳՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ, ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՄԱՆԻՊՈՒԼԱՅԻՄԵՆ ԵՎ ԱՐԴԱՐ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ ԲԱՑԱՍՏԱՐ ԱՇԴՈՂ ԱՅԼ ՎԱՐՔԱԳԻՐԸ: ԳՆՈՒՄՆԵՐԻ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՄ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱԿԱԾ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱԿՈՐ ԵՆ ԽԱՏՈՐԵՆ ՀԵՏԵՎԵԼ ԱՅՍ ԱԿՔՐՈՒՆԵՐՈՒՆ:

Հաշվետու տարում՝

- ▶ չեն եղել ԶՊՄԿ-ի մասնակցությամբ՝ հակամրցակցային վարքագծի հետ կապված ընթացքի մեջ գտնվող կամ ավարտված դատական գործեր:
- ▶ ԶՊՄԿ-ի նկատմամբ դատական վարույթ չի հարուցվել մրցակցության պաշտպանության մասին օրենքի խախտումների համար:
- ▶ արձանագրվել են որոշ վարչական տույժեր. կիրառելի օրենքների և քաղաքականությունների խախտումների համար սահմանված բոլոր տույժերի մանրամասները ներկայացված են Հավելված 3-ում:

Թվային փոխակերպման նախաձեռնություն. թվային ինտեգրման խթանում բոլոր գործառնություններում



9

ԶԴՄԿ-ն շարունակել է խթանել իր թվային փոխակերպման ծրագիրը՝ ամրապնդելով արդյունավետ, անվտանգ և կայուն հանքարդյունաբերական գործունեության համար անհրաժեշտ տեխնոլոգիական հիմքերը: Հիմնվելով նախկինում ձևավորված ռազմավարական հայեցակարգի հիման վրա 2025թ. նշանավորվեց գնահատման և պլանավորման փուլից դեպի արտադրական, կորպորատիվ գործընթացներում, անվտանգության և SS ենթակառուցվածքներում թվային փոխակերպման ծրագրի լայնածավալ ներդրման անցմամբ:



ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2025թ-ին ԶԴՄԿ-ն հաջողությամբ ավարտել է ավտոմատացման և թվային ինտեգրման ծրագրի նախնական փուլը: Ավտոմատացվել է հիմնական արտադրական ստորաբաժանումների աշխատանքը, իսկ տեղական համակարգերն ամբողջությամբ ինտեգրվել են DELTA V SCADA հարթակին՝ բարելավելով գործառնական վերահսկողությունն ու արդյունավետությունը: Դրան զուգահեռ, երեք նմուշառման կետերում ներդրվել է Courier 6 վերլուծական համակարգը՝ բարելավելով գործընթացների իրական ժամանակում մոնիտորինգը և բարձրացնելով գործառնական հուսալիությունն ու արդյունավետությունը: Գրանցված առաջընթացը ներառել է նաև հնացած 0.4 կվ լարման էլեկտրական սարքավորումների փոխարինման համար անհրաժեշտ մանրամասն նախագծային փաստաթղթերի մշակումը:

2026թ.-ի իրականացման ճանապարհային քարտեզի շրջանակում ԸՆկերությունը կշարունակի խթանել ավտոմատացման և գործընթացների օպտիմալացման աշխատանքները: Նախատեսվող աշխատանքները ներառում են պոչերի խտացման համակարգի ավտոմատացումը, Courier 6 համակարգի ընդլայնումը՝ նմուշառման լրացուցիչ կետերի ավելացմամբ և էլեկտրական սարքավորումների առաջիկա արդիականացման համար տեխնիկական բնութագրերի և նախագծային փաստաթղթերի կազմման գործընթացի եզրափակմամբ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2025թ-ին ԸՆկերությունը ներդրել է մի շարք առանցքային արտադրական համակարգեր և մի շարք նախաձեռնություններ մոտեցել են մշակման և ներդրման եզրափակիչ փուլերին: Ավտոպարկի դիսպետչերական կառավարման համակարգը և Արտադրության կառավարման համակարգը (ԱԿՀ) գտնվում են օգտատերերի կողմից ընդունման թեստավորման փուլում, մինչդեռ Արտադրության պլանավորման համակարգի նախագծման փուլն ավարտվել է: Լաբորատորիայի տեղեկատվության կառավարման համակարգը (LS42), երկրաբանական տվյալների բազան և Բացահանքի պատերի կայունության մոնիտորինգի համակարգը հաջողությամբ ներդրվել են:

ԶԴՄԿ-ն նախատեսում է ավարտել ավտոպարկի դիսպետչերական կառավարման համակարգի և ԱԿՀ-ի ներդրումը, ինչպես նաև ներդնել արտադրության պլանավորման համակարգ՝ գործառնական պլանավորումը բարելավելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

2025թ-ին ԶԴՄԿ-ն զգալի առաջընթաց է արձանագրել թիրախային համակարգի ճարտարապետության և բիզնեսի փոխակերպման հիմնական նախադրյալների մշակման ուղղությամբ: Հիմնական ձեռքբերումները ներառում են թիրախային համակարգի ճարտարապետության սահմանումը, երեք հիմնական տեղեկատու տվյալների բազաների (Նյութատեխնիկական ռեսուրսներ, Ծառայություններ և գործընկերներ) նախապատրաստումն ու կրկնօրինակների հեռացումը և փոխակերպման նպատակներին համապատասխանող կազմակերպական փոփոխությունների

որոշումը: Ճանապարհային քարտեզին համապատասխան մեկնարկել է ավտոմատացման նախնական փուլը, իսկ ձեռնարկության ռեսուրսների պլանավորման (ՁՌԴ) մարդկային ռեսուրսների (ՄՌ) մոդուլը մշակվել է և պատրաստ է օգտատերերի կողմից ընդունման թեստավորմանը:

ԶԴՄԿ-ն նախատեսում է ավարտել իր հիմնական տեղեկատու տվյալների բազաների կարգավորումը և պաշտոնական ընդունումը, ներդնել ՁՌԴ ՄՌ մոդուլը և նախապատրաստել հիմնական ՁՌԴ մոդուլները օգտատերերի կողմից ընդունման թեստավորման համար՝ ինտեգրված բիզնես գործընթացներին աջակցելու նպատակով:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2025թ-ին ԸՆկերությունը առաջնահերթություն է տվել ապագա համակարգի ներդրմանն աջակցող տեխնիկական և նախագծային փաստաթղթերի պատրաստմանը: Առաջընթացը ներառել է մուտքի վերահսկման համակարգի նախագծային փաստաթղթերի և հրդեհային ազդանշանային համակարգի տեխնիկական բնութագրերի շարունակական մշակումը:

ԸՆկերությունը նախատեսում է ավարտել մուտքի վերահսկման համակարգի փաստաթղթերի մշակումը և նախաձեռնել ներդրման առաջին փուլը: Աշխատանքները կշարունակվեն նաև հրդեհային ազդանշանային համակարգի տեխնիկական բնութագրերի և նախագծային փաստաթղթերի վերջնականացման ուղղությամբ, որից հետո կմեկնարկի ներդրման նախնական փուլը:

SS ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ

2025թ-ին ԶԴՄԿ-ն զգալի առաջընթաց է արձանագրել SS ենթակառուցվածքի արդիականացման ուղղությամբ. կառուցվել են նոր տվյալների մշակման կենտրոններ, որոնք գտնվում են օգտատերերի կողմից ընդունման թեստավորման փուլում: Միաժամանակ արդիականացվել են սերվերային և ցանցային ենթակառուցվածքները, և սկսվել է հնացած համակարգերի տեղափոխումը նոր, խափանումների նկատմամբ դիմակայուն միջավայր:

Հեռանկարում ԸՆկերությունը նախատեսում է ամբողջությամբ շահագործման հանձնել տվյալների մշակման կենտրոնները և ավարտին հասցնել հնացած համակարգերի տեղափոխումը՝ համակարգերի դիմակայունությունը, գործառնական հասանելիությունը և կիբերանվտանգությունը բարելավելու նպատակով:

4,828

մարդ



Աշխատակիցների թիվը 2025թ.
վականի վերջի դրությամբ

4



Մարդկային կապիտալ. մարդիկ՝ կայուն կատարողականի հիմքում

- 42 Մարդկային կապիտալ
- 44 Մարդկային կապիտալի դիմամիկա.
տաղանդների ներգրավում և պահպանում
- 48 Ներդրում մարդկային կապիտալում.
աշխատողների մասնագիտական
զարգացման հանձնառություն
- 51 Արդար վարձատրություն և
արտոնություններ. աշխատողների
բարեկեցության ապահովում

Մարդկային կապիտալ

GRI 3-3, GRI 2-30, SASB EM-MM-310a.1.

Մարդիկ,
համայնքները և
նպատակները
ԶՊՄԿ-ի
գործունեության
հիմնասյուղներն են:

99%

աշխատակիցները ծածկված են
կոլեկտիվ բանակցությունների
պայմանագրերով

⁶⁶ Հաշվետվության ներկայացման նպատակներից
եյնելով աշխատող են համարվում ԸՆկերության
հաստիքացուցակում ներառված անձինք,
այդ թվում՝ լրիվ դրույքով, ոչ լիարժեք
դրույքով, կարճաժամկետ պայմանագրով
աշխատող, ղեկավար, բանվոր, ֆիքսված
դրույքացափով, սեզոնային, միգրանտ և
ժամավճարով աշխատողները՝ բացառությամբ
պայմանագրային աշխատողների:
Պայմանագրային աշխատողներ են
համարվում այն անձինք, որոնք ընդգրկված
չեն ԸՆկերության հաստիքացուցակում, սակայն
վերջիններիս վերահսկում և ղեկավարում
է ԸՆկերությունը: Պայմանագրային
աշխատողների շարքում ներառված են նաև
անկախ կապալառուները և երրորդ կողմերի
(օրինակ՝ ժամանակավոր զբաղվածության
գործակալությունների և աշխատողների
ընդունման միջնորդների) կողմից աշխատանքի
ընդունված անձինք:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

ԶՊՄԿ-ն իր աշխատողներին⁶⁶ դիտարկում է որպես
շահագրգիռ կողմերի առանցքային խումբ և գործունեության
անընդհատության ու երկարաժամկետ կայունության հիմնական
շարժիչ ուժ: Մարդկային կապիտալի կառավարման նկատմամբ
ԸՆկերության կողմից կիրառվող մոտեցումը կենտրոնացած
է անվտանգ և պատշաճ աշխատանքային պայմանների
ապահովման, հավասարության և խտրականության բացառման
խթանման, հմտությունների զարգացմանը նպաստելու և
արդյունավետ սոցիալական երկխոսություն ապահովելու վրա:

Մարդկային կապիտալի կառավարման շրջանակում
ԸՆկերությունն ապահովում է իր գործունեության
համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության
կիրառելի օրենքներին և կանոնակարգերին, այդ թվում՝
ՀՀ աշխատանքային օրենսգրքին: ՀՀ աշխատանքային
օրենսդրության հետ համապատասխանությունը հանդիսանում
է բոլոր աշխատանքային գործընթացների և ներքին
քաղաքականությունների հիմքը:

Աշխատողներին առնչվող ռիսկերն ու հնարավորությունները
դիտարկվում են քաղաքականությունների, ներքին
ընթացակարգերի և գործառնական գործելակերպի միջոցով,
որոնք ընդգրկում են աշխատանքային պայմանները,
աշխատանքային իրավունքները, անվտանգությունն
աշխատանքի վայրում, ուսուցումն ու մասնագիտական
զարգացումը և աշխատողների ներգրավվածությունը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատողների կառավարման համար պատասխանատու է
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը, որը գործում է
Վարչական ղեկարարամենտի կազմում և հաշվետու է Գլխավոր
տնօրենի տեղակալին: Կառավարման այս կառուցվածքն
ապահովում է, որ մարդկային կապիտալի կառավարման
ոլորտում ԸՆկերության գործընթացներն արդյունավետ
վերահսկվում են և շարունակում են համապատասխանել
ռազմավարական և գործունեության նպատակներին:

ԶԲԱՂԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԱՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ

ԶՊՄԿ-ն առաջնահերթություն է տալիս տեղական
զբաղվածության ապահովմանը՝ որպես իր գործունեության
հիմնական տարածքների զարգացմանն ուղղված
հանձնառության մաս: 2025թ.-ին ընդհանուր աշխատողների
շուրջ 89%-ը և նոր ընդունված աշխատողների 83%-ը տեղական
համայնքների բնակիչներ են հանդիսացել, ինչը վկայում
է տեղացի աշխատողների ներգրավման և համայնքային
ինտեգրման հանդեպ ԸՆկերության շարունակական
ուշադրության մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶՊՄԿ-ն հարգում է աշխատողների միավորման ազատության
և կոլեկտիվ բանակցությունների իրավունքները՝ կիրառելի
օրենքների և ներքին քաղաքականությունների համաձայն:
Աշխատողները կարող են օգտվել այդ իրավունքներից առանց
ահաբեկման, հաշվեհարդարի վտանգի կամ խտրականության:
ԸՆկերությունը պահպանում է շարունակական և կառուցողական
փոխգործակցությունը իր աշխատողներին ներկայացնող
Արհեստակցական կազմակերպության հետ: Արդյունքում
աշխատողների 99%-ի աշխատանքային հարաբերությունները
կարգավորվում են կոլեկտիվ պայմանագրերով: Այն
աշխատողների համար, որոնք պաշտոնապես ընդգրկված չեն
այդ պայմանագրերում, աշխատանքային ու զբաղվածության
պայմանները կիրառվում են նույն կոլեկտիվ պայմանագրերին
համապատասխան՝ բոլոր աշխատողների համար միասնական
մոտեցում և հավասար պայմաններ ապահովելու նպատակով:

Մարդկային կապիտալի դինամիկա. տաղանդների ներգրավում և պահպանում

+3.7%



Աշխատակիցների թվի աճը՝ 2024 թվականի համեմատ

GRI 2-7

Աշխատակիցների ընդհանուր բաշխվածությունն ըստ սեռի¹⁷

ԶՊՄԿ-Ն ՄՇԱԿՈՒՄ Է ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԱՐԺԵՔԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ Է, ԵՎ ԽԹԱՆՈՒՄ Է ԱՅՆՊԻՍԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ, ՈՐՈՆՔ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐՈՒԹՅԱՆԸ:

2025թ-ին ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թիվը կազմել է 4,828, արձանագրելով 3.7% աճ 2024թ. համեմատ: 2025թ-ին աշխատողների ընդհանուր թվի աճը հիմնականում պայմանավորված է եղել Կապանից արական սեռի աշխատողների թվի ավելացմամբ, ինչը փոխկապակցված է ԶՊՄԿ-ի կողմից նախաձեռնված լայնածավալ շինարարական աշխատանքների հետ:



● Կին
● Տղամարդ

Աշխատակիցների ընդհանուր բաշխվածությունն ըստ տարածաշրջանների¹⁷



● Սյլ
● Կապան
● Քաջարան

¹⁷ Աշխատողների ընդհանուր թվի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, այդ թվում՝ բացվածքն ըստ զբաղվածության տեսակի, սեռի և մարզի, ներկայացված է [Հավելված 3-ի](#) «Մարդկային կապիտալ» բաժնում:

¹⁸ 2023թ-ի ցուցանիշը ներկայացնում է «տեղացի» աշխատողների ընդհանուր թիվը՝ Ներայայտարարության և Զաքարանից Կապանից:

GRI 402-1

2025թ-ին Ընկերությունը աշխատանքի է ընդունել 452 նոր աշխատողի, մինչդեռ աշխատողների ընդհանուր հոսունությունը կազմել է 278 մարդ, որի արդյունքում հոսունության ցուցանիշը կազմել է 5.86%: Տեղական համայնքներից նոր ընդունված աշխատողների հետևողականորեն բարձր մասնաբաժինն արտացոլում է Ընկերության սերտ կապը իր գործունեության տարածքներին հարակից համայնքների, մասնավորապես՝ Զաջարանի և Կապանի հետ:

Նոր աշխատողներ և հոսունության ցուցանիշ

Ցուցանիշ	2023թ.		2024թ.		2025թ.	
	Նոր աշխատողներ	Հոսունության ցուցանիշ, %	Նոր աշխատողներ	Հոսունության ցուցանիշ, %	Նոր աշխատողներ	Հոսունության ցուցանիշ, %
Ըստ սեռի						
Տղամարդ	259	5.30	167	5.25	377	4.43
Կին	76	6.10	49	3.66	75	11.10
Ըստ տարիքային խմբի						
30 տարեկանից ցածր	105	2.70	71	3.46	183	2.62
30-50 տարեկան	181	1.90	117	2.43	231	3.49
50 տարեկանից բարձր	49	15.90	28	11.91	38	13.71
Ըստ մարզի						
Տեղացիներ (Զաջարան և Կապան համայնքներ)	256	4.60	160	4.26	374	5.83
Հայաստանի այլ մարզեր և արտերկիր	79	12.00	56	9.92	78	6.17
Ընդամենը	335	5.53	216	4.89	452	5.86

Կառավարման մարմինների և աշխատողների բազմազանություն

GRI 405-1, GRI 202-2

Բարձրագույն ղեկավարությունը բաղկացած է 15 հոգուց, որոնցից 9-ը՝ Երևանից են, 2-ը՝ Հայաստանի այլ մարզերից, իսկ 4-ը՝ արտերկրից:

Կառավարման մարմինների և աշխատողների բազմազանություն

Ցուցանիշ	2023թ.			2024թ.			2025թ.		
	ՏՄ	Բարձրագույն ղեկավարություն	Աշխատողներ	ՏՄ	Բարձրագույն ղեկավարություն	Աշխատողներ	ՏՄ	Բարձրագույն ղեկավարություն	Աշխատողներ
Ըստ սեռի									
Տղամարդ	6	15	3,625	6	14	3,603	6	15	3,814
Կին	1	0	1,026	1	0	1,037	1	0	999
Ըստ տարիքային խմբի									
30 տարեկանից ցածր	0	0	603	0	0	578	0	0	645
30-50 տարեկան	3	12	2,885	2	10	2,916	2	11	3,027
50 տարեկանից բարձր	4	3	1,163	5	4	1,146	5	4	1,141
Ընդամենը	7	15	4,651	7	14	4,640	7	15	4,813

Ընկերությունը չի ընդունել առանձին քաղաքականություն գեղեցիկային հավասարության վերաբերյալ: Այնուամենայնիվ, մեր աշխատողների շուրջ 20%-ը կանայք են, ինչը գերազանցում է ոլորտի միջին ցուցանիշը: Բացի այդ, մարդու իրավունքների և աշխատանքի հավասար հնարավորությունների նկատմամբ հանձնառությունն ամրագրված է ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ Ընկերության Վարքագծի կանոնագրով, որն ուղղակիորեն արգելում է խտրականությունը ռասայի, էթնիկ պատկանելության, ազգային ծագման, սեռի, սեռական կողմնորոշման, կրոնի, համոզմունքների, հաշմանդամության, տարիքի կամ որևէ այլ անձնական կամ սոցիալական բնութագրերից ելնելով: Առաջնորդվելով այդ սկզբունքներով՝ ԶԴՄԿ-ի աշխատակազմում ընդգրկված են աշխատողներ և պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցողներ Ռուսաստանից, Ուզբեկստանից, Ղազախստանից, Անգլիայից, Գերմանիայից և այլ երկրներից:

Ընկերությունը կարևորում է Վարքագծի կանոնագրի վերաբերյալ դասընթացների կազմակերպումը և այն դիտարկում է որպես 2026թ-ին իր շարունակական ուշադրության կենտրոնում գտնվող ուղղություն:- Հաշվետու տարվա ընթացքում 55 աշխատող անցել է Վարքագծի կանոնագրի վերաբերյալ հատուկ դասընթաց: Միևնույն ժամանակ, բոլոր աշխատողները տեղեկացվել են Վարքագծի կանոնագրի մասին՝ Ընկերության ներքին հաղորդակցության միջոցներով: Ընկերությունը կշարունակի ամրապնդել իրազեկման և հաղորդակցության ձևաչափերը, ներառյալ առկա հանդիպումները և այլ միջոցառումները՝ անհրաժեշտության դեպքում:

Կապալառու կազմակերպությունների ներգրավում

GRI 2-8

2025թ-ին կապալառու կազմակերպությունների միջոցով ԶԴՄԿ-ն ներգրավել է 1,210 ոչ հաստիքային աշխատողի: Այդ հիմունքներով ներգրավված աշխատողները հիմնականում խորհրդատուներ են հանդիսացել, որոնք տրամադրել են թարգմանչական, վարչական, իրավաբանական և բիզնես խորհրդատվական ծառայություններ, ինչպես նաև աջակցություն՝ շինարարությանն ու արտադրությանը առնչվող աշխատանքներում: Համապատասխան ստորաբաժանումների հետ ինտեգրված լինելով՝ նրանք Ընկերությանը հնարավորություն են տալիս իր ներքին կարողությունները լրացնել մասնագիտացված արտաքին փորձագիտական գիտելիքներով:

Աշխատողներ և կապալառուներ


Ցուցանիշ	Units	2023	2024	2025
Աշխատողների ընդհանուր թիվը ¹⁹	People	5,268	7,554	6,038
Կապալառուների թիվը ²⁰	People	602	2,900	1,210 ²¹
Կապալառուների տոկոսը	%	11.43	38.4	20.04

¹⁹ Այս ցուցանիշը ներառում է ինչպես ԶԴՄԿ-ի աշխատողներին, այնպես էլ կապալառուներին:

²⁰ Ընկերության աշխատող չհանդիսացող մասնագետների թիվը հաշվարկվում է աշխատողների փաստացի թվի հիման վրա, որն ապահովում է ճշգրիտ և վերահսկելի տվյալներ: Տվյալները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստացված տվյալների հիման վրա՝ ներկայացնելով որոշակի ժամանակահատվածում Ընկերության աշխատող չհանդիսացող մասնագետների ներգրավվածության հստակ պատկերը:

²¹ 2025թ-ին Ընկերության կապալառուների թիվը նվազել է՝ հիմնականում պայմանավորված 2024թ-ին իրականացված շինարարական աշխատանքների ավարտով: 2024թ-ին վարորդները կազմում էին կապալառուների հիմնական մասը, իսկ համապատասխան աշխատանքները նախատեսվածի համաձայն ավարտվելուց հետո այդ ծառայությունների անհրաժեշտությունը նվազել է՝ հանգեցնելով կապալառուների թվի կրճատմանը 2025թ-ին:

Ընկերության կազմակերպական կառուցվածքն ըստ տարիքային խմբերի և սեռի ներկայումս ունի հետևյալ տեսքը.



Ներդրում մարդկային կապիտալում. աշխատողների մասնագիտական զարգացման հանձնառություն

GRI 404-1



2025թ-ին ԶՊՄԿ-ն կազմակերպել է տարբեր տեսակի և մասնագիտական ուղղությունների 254 դասընթաց: Դասընթացների ընդհանուր տևողությունը կազմել է 865 ժամ, իսկ մասնակիցների թիվը՝ 1,996²² ընդգրկելով բոլոր ստորաբաժանումները և աշխատողների կատեգորիաները: Մասնակիցներից

200-ը եղել են կանայք, իսկ 1,796-ը՝ տղամարդիկ, ինչը համապատասխանաբար կազմում է կանանց աշխատուժի մոտ 20%-ը և տղամարդկանց աշխատուժի 47%-ը: Մասնակցության այս տարբերությունը մեծապես պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտում աշխատուժի կազմով և բազմաթիվ դասընթացների մասնագիտական ուղղվածությամբ, որոնց հիմնականում մասնակցում են տեխնիկական և արտադրական ոլորտների աշխատողները: Այնուամենայնիվ, ԶՊՄԿ-ն շարունակում է խթանել ուսուցման և մասնագիտական զարգացման բարենպաստ պայմաններ՝ բոլոր ստորաբաժանումների և կատեգորիաների աշխատողների համար:

Թեև մասնակցության ցուցանիշը նվազել է 2024թ-ի համեմատ, Ընկերությունը շարունակել է առաջնահերթություն տալ նպատակային և մասնագիտական վերապատրաստման ծրագրերին:

Դասընթացները 2025թ-ին (ըստ սեռի)²³

Սեռ	2023թ.			2024 թ. ²⁴			2025 թ. ²⁵		
	Մարդ	Ընդհանուր տևողությունը, ժամ	Միջին տևողությունը, ժամ	Մարդ	Ընդհանուր տևողությունը, ժամ	Միջին տևողությունը, ժամ	Մարդ	Ընդհանուր տևողությունը, ժամ	Միջին տևողությունը, ժամ
Տղամարդ	3,640	9,100	2.5	3,617	1,374	0.38	3,829	4,618	0.96
Կին	1,026	2,565	2.5	1,037	282	0.27	999	514	0.11
Ընդամենը	4,666	11,665	2.5	4,654	1,656	0.36	4,828	5,132	1.06

2025թ-ին անցկացված դասընթացներ (ըստ տեսակի)²⁶

Դասընթացի տեսակը	Դասընթաց	Տևողություն (ժամ)	Մասնակիցների քանակ
Պարտադիր դասընթաց	8	416	208
Մասնագիտական դասընթաց	57	890	125
Տեխնիկական հմտություններին վերաբերող դասընթաց	49	274	129
Ոչ մասնագիտական հմտություններին վերաբերող դասընթաց	2	32	4
Ատեստավորման դասընթաց	41	1,162	581
Նախաատեստավորման դասընթաց	97	2,358	949
Ընդամենը	254	5,132	1,996

1.06²⁷

վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը կազմում 1.06 ժամ մեկ աշխատողի համար

GRI 404-2

2025թ-ին ԶՊՄԿ-ն կիրառել է կառուցվածքային և համապարփակ մոտեցում աշխատողների մասնագիտական զարգացման նկատմամբ՝ ապահովելով հմտությունների և կարողությունների շարունակական զարգացումը: Ներկայացված ծրագրերն իրականացվում են ներքին դասընթացների, արտաքին փորձագետների մասնակցությամբ դասընթացների և էլեկտրոնային ուսուցման հարթակների համադրությամբ՝ նպատակ ունենալով խթանել շարունակական ուսուցումը և կարիերայի առաջընթացը:

Ներկայումս այլ աշխատանքի անցնելու աջակցության պաշտոնական ծրագրեր չեն գործում, որոնք միտված են կենսաթոշակի անցնելու կամ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետագա զբաղվածության ապահովմանը կամ կարիերայի անցումային փուլերի կառավարմանը:

Ստորև ներկայացված են 2025թ-ին սերտիֆիկացում և ատեստավորում անցած աշխատողների թվերի վերաբերյալ տվյալները:

Սերտիֆիկացում և ատեստավորում անցած աշխատողների թիվը, 2025²⁸

Տեսակը	Տղամարդ		Կին		Ընդամենը
	Մարդ	Տոկոս	Մարդ	Տոկոս	
Ատեստավորում	855	17.0%	47	1.0%	902
Սերտիֆիկացում	1,052	22.0%	13	0.0%	1,065
Ընդամենը	1,907	39.0%	60	1.0%	1,967

²² Ներկայացված թվերը վերաբերում են միայն ԶՊՄԿ-ի Ուսումնական կենտրոնի կողմից անցկացված դասընթացներին: Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանմանը վերաբերող դասընթացների մանրամասները ներկայացված են հաջորդ բաժնում:

²³ Ներկայացված թվերը վերաբերում են միայն ԶՊՄԿ-ի Ուսումնական կենտրոնի կողմից անցկացված դասընթացներին: Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանմանը վերաբերող դասընթացների մանրամասները ներկայացված են «Անվտանգության, առողջության և Ընկերության գործունեության կայունության մշակույթի ձևավորում» բաժնում:

²⁴ 2024թ-ի տվյալները թարմացվել են՝ ցուցանիշը վերահաշվարկելով աշխատողների ընդհանուր թվի, այլ ոչ թե դասընթացների մասնակիցների ընդհանուր թվի հիման վրա:

²⁵ 2025թ-ից սկսած հրահանգավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է աշխատանքային պայմանագրի կնքման գործընթացի շրջանակում՝ նախկինում անցկացվող հրահանգավորման դասընթացների փոխարեն:

²⁶ Դասընթացների ժամերը թարմացվել են՝ 2025 թվականին կիրառված հաշվետվության մոտեցումն արտացոլելու նպատակով:

²⁷ Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանմանը վերաբերող դասընթացները ներառված չեն:

²⁸ Առավել մանրամասն բացվածքը ներկայացված է [Հավելված 3-ի](#) «Մարդկային կապիտալ» բաժնում:



Կատարողականի և մասնագիտական աճի գնահատում

GRI 404-3

2025թ-ին Ընկերությունը շարունակել է կարևորել աշխատողների մասնագիտական զարգացումը՝ կատարողականի և կարիերայի առաջընթացի համակարգված գնահատումների միջոցով: Վերջիններիս նպատակն է անհատական կարողությունները համապատասխանեցնել Ընկերության նպատակներին և խթանել երկարաժամկետ մասնագիտական աճը: Այս գնահատումները դիտարկում են աշխատանքի հետ կապված կարողությունները, ընդհանուր կատարողականը և մասնագիտական աճի ներուժը և հանդիսանում են Ընկերության մարդկային կապիտալի կառավարման մոտեցման անբաժանելի մասը:

Հաշվետու տարվա ընթացքում կատարողականի և մասնագիտական աճի գնահատումներ են իրականացվել աշխատողների թիրախային խմբի համար, որոնք բոլորը դասակարգվել են «բանվորներ» կատեգորիայի: Գնահատում անցած աշխատողների սեռային բաշխվածությունն արտացոլել է աշխատակազմի ընդհանուր կառուցվածքը՝

95%

տղամարդիկ

(261 մարդ)

5%

կանայք

(13 մարդ),

ինչը համապատասխանում է Ընկերության աշխատողների ընդհանուր ժողովրդագրական կազմին:



Արդար վարձատրություն և արտոնություններ. աշխատողների բարեկեցության ապահովում

GRI 401-2, GRI 401-3

ԶՊՄԿ-ն հավատարիմ է մնում աշխատողների բարեկեցության և անվտանգության ապահովման իր հանձնառությանը՝ գիտակցելով, որ արտոնությունների համապարփակ և մտածված փաթեթն առանցքային նշանակություն ունի որակյալ մասնագետների ներգրավման և պահպանման գործում: ԶՊՄԿ-ն իր լրիվ դրույքով աշխատողներին տրամադրում է բարելավված արտոնությունների համապարփակ փաթեթ՝ նպատակ ունենալով նպաստելու նրանց անվտանգության, առողջության պահպանմանը և կյանքի ընդհանուր որակի բարելավմանը:²⁹ Աշխատողները նաև օգտվում են Արհեստակցական կազմակերպության կողմից առաջարկվող արտոնություններից:

Ընկերությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված երեխայի խնամքի արձակուրդի պահանջների կատարումը՝ համապատասխան իրավունք ունեցող աշխատողներին տրամադրելով տվյալ արձակուրդը:

12.7

անգամ

Միջին աշխատավարձը 2025-ին գերազանցել է նվազագույնը 12,7 անգամ (2024-ին՝ 11,37), ինչը ցույց է տալիս ԶՊՄԿ-ի աշխատակիցների օգտին վարձատրության տարբերության աճի շարունակականությունը:

Արդար վարձատրության ապահովման հանձնառություն

GRI 202-1, 405-2

2025թ-ին միջին աշխատավարձը կազմել է նվազագույն աշխատավարձի 12.7-ապատիկը՝ 2024թ-ի 11.37-ապատիկի համեմատ, ինչն արտացոլում է վարձատրության տարբերության շարունակական մեծացումը հոգուտ ԶՊՄԿ-ի աշխատողների: Ընկերությունը, որպես «ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիր» նախաձեռնության ապագա մասնակից, թեև պաշտոնապես չի ստանձնել «Forward Faster» («Ավելի արագ առաջ») նախաձեռնությանը միանալու պարտավորությունը, կգնահատի և շարունակաբար կբարելավի իր կենսաապահովման ցուցանիշները:


2025թ-ին ԶՊՄԿ-ն շարունակել է հավատարիմ մնալ արդար և հավասար վարձատրություն ապահովելու իր հանձնառությանը՝ ամբողջությամբ համապատասխանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Բոլոր դեպքերում աշխատողների ամսական համախառն աշխատավարձերը գերազանցել են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն պահանջի համաձայն, ըստ որի աշխատավարձը չի կարող ցածր լինել նվազագույն սահմանաչափից: Այս ստանդարտը հավասարապես կիրառվում է բոլոր աշխատողների նկատմամբ. նվազագույն աշխատավարձը նույնն է բոլորի համար՝ առանց որևէ տարբերակման, այդ թվում՝ Ընկերության գործունեության հիմնական տարածքներում:³⁰

Ընկերությունը հետևողական մոտեցում է կիրառում հավասար վարձատրության ապահովման հարցում՝ առանց գործունեության հիմնական տարածքներում սկսնակների աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունում սեռով պայմանավորված որևէ տարբերության: Ընկերությունում գործում է պարզաստիչումների համակարգված սխեմա, որի շրջանակում աշխատողները ստանում են կիսամյակային պարզապահանջներ, իսկ բացառիկ նվաճումները և ներդրումները գնահատելու համար կարող են տրամադրվել նաև լրացուցիչ պարգևավճարներ՝ ըստ աշխատանքի կատարողականի: Գեներային հավասարության և հավասար վարձատրության սկզբունքները ամբողջապես ներդրված են Ընկերության գործունեության բոլոր ուղղություններում:

²⁹ Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է 2024թ. Կայուն զարգացման հաշվետվության (բաժին 4, էջ 74):

³⁰ Գործունեության հիմնական տարածքները ՀՀ Զաջարան և Կապան քաղաքներն են, որտեղ իրականացվում է Ընկերության հիմնական գործունեությունը:

Անձնակազմի ընդհանուր
բյուջե, միլիոն ԱՄՆ դոլար



Մասնավորապես, Ընկերությունում պահպանվում է կանանց և տղամարդկանց բազային աշխատավարձի և ընդհանուր վարձատրության 1:1 հարաբերակցությունը: Նույն կերպ, բազային աշխատավարձի և վարձատրության հարաբերակցությունը բազմազանության այլ համապատասխան ցուցանիշների մասով նույնպես կազմում է 1:1, ինչն արտացոլում է վարձատրության համակարգում արդարության, ներառականության և խտրականության բացառման ԶԴՄԿ-ի հանձնառությունը:

2022-2025թթ. ընթացքում Ընկերությունն ավելացրել է անձնակազմի բյուջեն մինչև 140.3 միլիոն ԱՄՆ դոլար: Այս աճն արտացոլում է Ընկերության շարունակական հանձնառությունը ներգրավելու, պահպանելու և պարզևստրելու որակյալ աշխատողներին, ինչպես նաև ստեղծելու երկարաժամկետ արժեք աշխատողների, տեղական համայնքների և բիզնեսի համար:

1:1

հարաբերակցությունը պահպանվում է ինչպես բազային աշխատավարձի և ընդհանուր վարձատրության, այնպես էլ կանանց և տղամարդկանց բազային վարձատրության ցուցանիշներում:

2022-2025թթ. ընթացքում Ընկերությունն ավելացրել է անձնակազմի բյուջեն մինչև

\$140.3

միլիոն ԱՄՆ դոլար:

Անվտանգ միջավայր աշխատավայրում. խտրականության բացառման և զրոյական հանդուրժողականության սկզբունքների պահպանում

GRI 3-3

2025Թ-ԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԶԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ՝ ՌԱՍԱՅԻ, ՄԱՇԿԻ ԳՈՒՅՆԻ, ՍԵՌԻ, ԿՐՈՆԻ, ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՈՋՄՈՒՆԵՐԻ, ԱԶԳԱՅԻՆ ԾԱԳՄԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԱՄԿ) ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՀԻՄՔՈՎ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԷԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՆԵՐՔԻՆ ԿԱՄ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՀԱԳՐԳԻՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՎՐԱ: ՍԱ ՎԿԱՅՈՒՄ Է ՎԵՐՋԻՆ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԴՐԱԿԱՆ ՄԻՏՄԱՆ ՀԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Անվտանգ, հարգանքի վրա հիմնված և բարենպաստ աշխատանքային միջավայրի ձևավորումը շարունակական գործընթաց է և այն ներառում է նորանոր նպատակներ, որոնց Ընկերությունը ձգտում է հասնել և պահպանել: Այս գործընթացի առանցքում խտրականության, ոտնձգության և աշխատավայրում բռնության ցանկացած դրսևորման նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականությունն է: Ընկերության բոլոր աշխատողները և վերջինիս գործուհուներն հետ կապված յուրաքանչյուր ոք ունի արդար և հավասար վերաբերմունքի իրավունք՝ անկախ սեռից, ռասայից, էթնիկ պատկանելությունից, կրոնից, սեռական կողմնորոշումից, հաշմանդամությունից, տարիքից կամ որևէ այլ անձնական բնութագրերից: Աշխատողի կոմպետենցիայի հիման վրա որոշումների կայացումը և հավասար հնարավորություններն Ընկերության աշխատանքի կազմակերպման անբաժանելի սկզբունքներ են:

Այս ոլորտը կարգավորվում է ԶԴՄԿ-ի՝ Աշխատավայրում բռնության, ոտնձգությունների, խտրականության և հաշվեհարդարի դեմ պայքարի քաղաքականությամբ և Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականությամբ, որոնք միասին սահմանում են Ընկերությունում վարքագծի չափանիշներն ու ակնկալիքները:

Սույն մոտեցումը գործում է ոչ միայն աշխատողների, այլև կապալառուների, մատակարարների և Ընկերության բիզնես էկոհամակարգում գործող բոլոր երրորդ կողմերի համար: Ընկերության պայմանագրերը ներառում են դրույթներ, որոնք պահանջում են կապալառուներից և նրանց աշխատողներից ծառայությունների մատուցման ողջ ընթացքում պահպանել Ընկերության Աշխատանքի անվտանգության և առողջության, Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականությունների, Վարքագծի կանոնագրի և այլ կիրառելի քաղաքականությունների, ներքին կանոնների և կանոնակարգերի պահանջները: Ցանկացած ահաբեկում, սպառնալիք, հաշվեհարդար կամ թշնամական աշխատանքային միջավայր ձևավորող վարքագիծ խստորեն արգելվում է և կհանգեցնի կտրուկ միջոցների ձեռնարկմանը: Ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ բոլոր հաղորդված դեպքերը դիտարկվում են լրջորեն, մանրակրկիտ ուսումնասիրվում են և ստանում են օպերատիվ լուծում: Որպեսզի յուրաքանչյուր մտահոգություն լսելի լինի, ԶԴՄԿ-ն առաջարկում է հաղորդակցման մի քանի ուղի՝ հատուկ թեժ գիծ և էլեկտրոնային հասցե, առցանց բողոքի ձև և Քաջարանի վարչական շենքում տեղադրված բողոքների արկղեր, որոնցից բոլոր աշխատողները կարող են օգտվել անանուն՝ ցանկության դեպքում:

Դեպքի ուսումնասիրություն. աշխատանքային հարաբերություններ, գործունեության ընդհատում և վերականգնում (2025թ.)

SASB EM-MM-310a.2.

2025թ. փետրվարին ԸՆԿերությունում տեղի էր ունեցել բնականոն գործունեության ժամանակավոր ընդհատում՝ պայմանավորված արտադրական տարածքում աշխատանքային հարաբերությունների հետ կապված լարվածությամբ, ինչը հանգեցրեց արդյունահանման և վերամշակման աշխատանքների կարճատև դադարեցմանը: Ստեղծված իրավիճակն ընդգծեց աշխատողների հետ կառուցվածքային փոխգործակցության, հստակ հաղորդակցության և աշխատավայրում առաջացող խնդիրների լուծման ներքին արդյունավետ մեխանիզմների կարևորությունը՝ գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով:

Գործունեության խափանումը չի կազմակերպել և չի ղեկավարել ԸՆԿերության Արհեստակցական կազմակերպությունը: Իրադարձությունների պահին այս հարցի վերաբերյալ ԸՆԿերության բոլորըքարկման մեխանիզմի միջոցով որևէ պաշտոնական բողոք չի ներկայացվել:



Գործունեության դադարեցման ընթացքում ԸՆԿերության գնահատմամբ ուղղակի ֆինանսական կորուստները կազմել են օրական մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար: Ընդհատումն ունեցել է նաև ավելի լայն տնտեսական ազդեցություն, որի հետևանքով պետական բյուջե հարկային մուտքերի գնահատված կորուստը գերազանցել է օրական 300 հազար ԱՄՆ դոլարը: Այս ցուցանիշներն արտացոլում են խոշոր հանքարդյունաբերական ընկերության անխափան գործունեության կարևորությունը երկրի տնտեսության համար:

Ներքին ուսումնասիրության արդյունքներով լուծվել են ութ աշխատողի աշխատանքային պայմանագրեր: Բոլոր աշխատանքային պայմանագրերը լուծվել են նույն իրավական հիմքով և ՀՀ գործող օրենսդրության ու ԸՆԿերության ներքին ընթացակարգերի պահանջների համաձայն:

Նախքան աշխատանքային պայմանագրերի լուծումը աշխատողների հետ անցկացվել են բազմաթիվ քննարկումներ և ներկայացվել են առաջարկներ իրավիճակը կարգավորելու համար: Առաջարկները չեն ընդունվել, և աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են: Օրենքով սահմանված վճարներից բացի լրացուցիչ արձակման նպաստ կամ հայեցողական բնույթի փոխհատուցում չի տրամադրվել, ինչպես նաև չի իրականացվել և ներկայումս չի նախատեսվում երրորդ կողմի կողմից ստուգման կամ անկախ իրավական գնահատման իրականացում:

Իրավիճակը կառավարվել է ներքին համակարգի միջոցով՝ ԸՆԿերության բարձրագույն ղեկավարության միջոցով և իրավաբանական դեպարտամենտի ներգրավմամբ, իսկ որոշումները կայացվել են վերջիններիս սահմանված կարգով ներկայացման և հաստատման գործընթացների միջոցով: ԸՆԿերությունը շարունակում է համագործակցել աշխատողների ներկայացուցիչների, այդ թվում՝ Արհեստակցական կազմակերպության հետ՝ աշխատանքային հարաբերությունների կառավարման իր ընթացիկ գործելակերպի շրջանակում:

Այս դեպքը ընդգծեց նաև վաղ փուլում երկխոսության մեխանիզմների ամրապնդման, բողոքների ներկայացման ուղիների հստակության և հասանելիության բարելավման, ինչպես նաև աշխատողների և ղեկավարության միջև կառուցվածքային հաղորդակցության ապահովման կարևորությունը՝ աշխատավայրում առաջացող խնդիրների սրացումը կանխելու նպատակով:

Արտադրական գործունեության վերականգնումից հետո Գլխավոր տնօրենի ղեկավարությամբ ստեղծվեց հատուկ ներքին հանձնաժողով՝ յուրաքանչյուր արտադրամասի հետ կառուցվածքային և համագործակցային ձևաչափով աշխատանքներ տանելու նպատակով: Հանձնաժողովը վերանայեց արտադրական և աշխատողներին առնչվող խնդիրները և մշակեց համապարփակ գործողությունների ծրագիր, որի նպատակն էր վերանայել աշխատավարձերը, ԸՆԿերությունում վարձատրության նկատմամբ թափանցիկ, արդար և հետևողական մոտեցման կիրառումն ապահովելու համար, և բարելավել աշխատանքային պայմաններն արտադրամասերում: Հանձնաժողովը եռամսյակային կտրվածքով հանդիպումներ է անցկացրել արտադրամասերի աշխատողների հետ՝ հնարավորություն տալով նրանց անմիջականորեն բարձրաձայնել իրենց մտահոգությունները:

Արդյունքում, մտահոգող հարցերն ու բողոքները (ներառյալ անձնական խնդրանքները) ներառվել են հանձնաժողովի գործողությունների ծրագրում: Գործողությունների մեծ մասը հաջողությամբ իրականացվել է, իսկ մի մասը գտնվում է մշակման փուլում, որոնց ընթացքը վերահսկվում է Գլխավոր տնօրենի կողմից: Միջին օդակի ղեկավարների միջոցով առ այսօր արձանագրված առաջընթացի վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար ներկայացվել է աշխատողներին: Այս գործընթացը նպաստում է երկխոսության վերականգնմանը և շարունակում է նպաստել գործունեության խափանումից հետո ԸՆԿերության ներսում փոխադարձ վստահության վերահաստատմանը:

2025թ. իրադարձություններն ընդգծեցին աշխատողների հետ հարաբերությունների, ԸՆԿերության գործունեության կայունության և վերջինիս ընդհանուր տնտեսական գործունեության միջև առկա սերտ կապը: Թեև իրավիճակի կարգավորումից հետո արտադրական գործունեությունը վերականգնվեց, տեղի ունեցածը վերահաստատեց աշխատողների ներգրավվածության, որոշումների կայացման թափանցիկության և կառուցվածքային ներքին երկխոսության շարունակական բարելավման անհրաժեշտությունը:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՈՒՄԱԿՈՒՄ Է ՀԱՆՁՆԱԴՈՒ ՄԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ՝ ԱՆՎՏԱՆԳ, ԿԱՅՈՒՆ ԵՎ ԱՆԽԱՓԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊՍԱԿՈՎ:

4,266

մասնակից

մասնակցել են աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման վերապատրաստման դասընթացներին 2025 թվականին

5

Անվտանգության, առողջության և ընկերության գործունեության կայունության մշակույթի ձևավորում

- 58 Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգը և դրա հիմքերը
- 60 Վտանգների բացահայտում, ռիսկերի գնահատում և վերահսկման միջոցառումներ
- 62 Աշխատողների անվտանգության ապահովում և առողջության պահպանում
- 64 ԱՄՍ ազդեցության կանխարգելումը ընկերության գործունեության և գործարար հարաբերությունների շրջանակում
- 65 Ավելի անվտանգ աշխատավայրի ձևավորում՝ ԱՄՍ վերաբերյալ դասընթացների միջոցով
- 68 Աշխատողների առողջության խթանում աշխատավայրում առողջության պահպանման համակարգիակ ծառայությունների միջոցով
- 69 Առողջապահական ծառայությունների հասանելիություն
- 70 Շարունակական մոնիտորինգ և կանխարգելում
- 71 Աշխատանքի հետ կապված վնասվածքներ և առողջական խնդիրներ
- 73 Արտադրանքի և ծառայությունների կատեգորիաների՝ առողջության և անվտանգության վրա ազդեցության գնահատում

Աշխատանքի անվտանգության և առողջության կառավարման համակարգը և դրա հիմքերը

GRI 3-3, GRI 403-1, GRI 403-8

ԶՊՄԿ-ի աշխատանքի անվտանգության և առողջության (ԱԱԱ) կառավարման համակարգը շարունակում է լինել Ընկերության առօրյա գործառնության բաղկացուցիչ մասը և ծառայում է որպես առանցքային համակարգ՝ գործունեության բոլոր ուղղություններում առողջության և անվտանգության ռիսկերի կառավարման համար: Համակարգը մշակված է ապահովելու համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրության և օրենսդրական մարմինների պահանջների հետ, ինչպես նաև արտացոլելու աշխատանքի անվտանգության և առողջության միջազգային ճանաչում ունեցող ստանդարտները: Համակարգի արդյունավետությունն ամրապնդվում է անվտանգության ամուր մշակույթի շարունակական զարգացմամբ, որն Ընկերությունը համարում է անվտանգ, հուսալի և կայուն գործունեության արդյունքների ապահովման կարևոր նախապայման: ԶՊՄԿ աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ռազմավարության հիմքում է նշյալ ոլորտում առաջնորդության ամրապնդման,

Ընկերության գործունեության ընթացքում անվտանգության պահանջները հաշվի առնող նախագծման սկզբունքների ներդրման և «գրոյական մահացություն» և «գրոյական վնաս» ցուցանիշներին հասնելու ձգտումը:

ԶՊՄԿ-ի ԱԱԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՐՋԱՆԱԿԸ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՋՈՒ ԳՏՆՎՈՂ ԲՈՒՆՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԸՆԴԳՐԿԵԼՈՎ ԵՐԵՔ ՓՈԽԿԱՊԱՅՑՎԱԾ ՌԻՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԱՐԴԻԿ, ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ/ԱՐՏԱԴՐԱՄԱՍՆԵՐ:^{31 32}

ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգում ընդգրկված աշխատողների թիվը

Ցուցանիշ	2023թ.		2024թ.		2025թ.	
	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թվում (%)	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թվում (%)	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թվում (%)
ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգում ընդգրկված աշխատողների թիվը	4,487	96.20%	4,654	100%	4,828	100%
ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգում ներքին աուդիտում ընդգրկված աշխատողների թիվը	≈3,634	≈78%	4,654	100%	4,828	100%

ԱԱԱ կառավարման համակարգում ընդգրկված՝ ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող անձանց (կապալառուների) թիվը

Ցուցանիշ	2023թ.		2024թ.		2025թ.	
	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թվում (%)	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թվում (%)	Մարդ	Մասնաբաժինը ԶՊՄԿ աշխատողների ընդհանուր թվում (%)
ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգում ընդգրկված աշխատող չհանդիսացող անձանց (կապալառուների) թիվը	≈602	≈100%	2,900	100%	1,210	100%
ԱԱԱ կառավարման համակարգում ընդգրկված ԶՊՄԿ-ի աշխատող չհանդիսացող և ներքին աուդիտի անցած անձանց (կապալառուների) թիվը	≈602	≈100%	2,900	100%	1,210	100%



100%

2025 թվականին ԶՊՄԿ-ի ԱԱԱՄԴ կառավարման համակարգով ընդգրկվել է աշխատակիցների 100%-ը:

³¹ Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 5, էջ 80):

³² Այն դեպքերում, երբ կապալառուները գործում են անկախ՝ ԶՊՄԿ-ի գործունեության վերահսկողության շրջանակից դուրս (օրինակ՝ Ընկերության վերահսկողության ներքո գտնվող տարածքներից դուրս իրականացվող փոխադրումների դեպքում), պայմանագրով նրանցից պահանջվում է ունենալ և կիրառել համապատասխան պահանջներին համապատասխանող՝ ԱԱԱ կառավարման սեփական համակարգեր: Այս աշխատանքներն ուղղակիորեն չեն ընդգրկվում ԶՊՄԿ-ի ԱԱԱ կառավարման համակարգի շրջանակում, սակայն ենթակա են մոնիտորինգի և պարբերական աուդիտների:

Վտանգների բացահայտում, ռիսկերի գնահատում և վերահսկման միջոցառումներ

GRI 403-2

ԶՊՄԿ-ն կիրառում է համակարգված գործընթացներ աշխատանքին առնչվող վտանգները բացահայտելու, ռիսկերը գնահատելու, վերահսկման միջոցառումներ իրականացնելու և ԱՍԱ կառավարման համակարգը շարունակաբար բարելավելու համար: Ընկերությունը շարունակում է կիրառել «պլանավորել, իրականացնել, ստուգել, գործել» (PDCA)³³ մոտեցումը, որը նպաստում է աշխատավայրում անվտանգության շարունակական բարելավմանը և օգնում ապահովել ռիսկերի պրոակտիվ և արդյունավետ կառավարումը:

Վտանգների բացահայտման և ռիսկերի գնահատման (ՎԲԳ) ընթացակարգերի միջոցով ԶՊՄԿ-ն նպատակ ունի կանխատեսել ռիսկերը դրանց ի հայտ գալուց առաջ և ներդնել կանխարգելման սկզբունքներն ընկերության գործունեության հետ կապված ամենօրյա որոշումների կայացման գործընթացում:



Վտանգավոր գործունեությունը և դրանց հետ կապված ռիսկերը բացահայտվում են ինչպես առօրյա, այնպես էլ ոչ առօրյա գործընթացների միջոցով, ինչը ԶՊՄԿ-ին հնարավորություն է տալիս անդրադառնալ ռիսկերին թե՛ ամենօրյա գործունեության, թե՛ բարձր ռիսկային կամ արտակարգ աշխատանքային իրավիճակների շրջանակում: Այդ գործընթացների իրականացումն ապահովվում է հետևյալ ընթացակարգերի միջոցով՝

- Աշխատանքի անվտանգության վերլուծություն (ԱՎՎ) և անվտանգ աշխատանքի ընթացակարգեր (ԱՎԸ),
- Ռիսկերի գնահատում և անվտանգության տեխնիկայի վերաբերյալ հրահանգավորում՝ նախքան աշխատանքն սկսելը,
- Աշխատավայրի ստուգումներ և վարքագծի հետ կապված ռիսկերի անվտանգության նպատակներից ելնելով,
- Արտադրական հիգիենայի մոնիտորինգ՝ ներառյալ փոշու, աղմուկի, ձայնային տատանումների և քիմիական ազդեցության գնահատումները,
- Առողջության հսկողության ծրագրեր,
- Ռիսկերի գնահատումներ ոչ ստանդարտ գործունեության, այդ թվում՝ արտադրական գործընթացի ընդհատումների, տեխնիկական սպասարկման, պայթեցման, փակ տարածություններում և բարձրության վրա աշխատանքների համար:

ՎԲԳ գործընթացների արդյունավետությունը կախված է ոչ միայն գործող ընթացակարգերից, այլև դրանք կիրառող աշխատողների կոմպետենտությունից: Ուստի ԶՊՄԿ-ն մեծ կարևորություն է տալիս իր ՎԲԳ գործընթացների որակին և դրանցում ներգրավված աշխատողների կարողություններին: ԱՍԱ մասնագետները, ինժեներները, ղեկավարները և այլ պատասխանատու անձինք անցնում են աստեսավորում, իսկ ռիսկերի գնահատման մեթոդաբանության վերաբերյալ պարտադիր դասընթացն օգնում է ապահովել ռիսկերի հետևողական բացահայտումը և գնահատումը: ԱՍԱ կառավարման համակարգի շրջանակում ընթացակարգերը նույնպես հստակ սահմանված են՝ Ընկերության գործունեության բոլոր ուղղություններով միասնական և համակարգված մոտեցում ապահովելու համար:

Որակի ապահովումը ամրապնդվում է կանոնավոր ներքին աուդիտների և կառավարման համակարգի ուսումնասիրությունների, պարբերական արտաքին աուդիտների, այդ թվում՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից, և Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) սերտիֆիկացման շրջանակում իրականացվող ստուգումների, ինչպես նաև արտադրական հիգիենայի գնահատումների համար հավատարմագրված լաբորատորիաների ծառայություններից օգտագտվելու միջոցով:

ՎԲԳ գործընթացների, այդ թվում՝ ստուգումների, մոնիտորինգի, վտանգավոր գործունեության գնահատումների և դժբախտ պատահարների ու միջադեպերի քննությունների արդյունքներն ուսումնասիրվում են բարձրաստիճան ղեկավարության կողմից որպես ԱՍԱ կառավարման համակարգի շարունակական բարելավման մի մաս: Այս ուսումնասիրություններն օգնում են ամրապնդել գործող վերահսկողական միջոցառումները և հիմք են հանդիսանում հետևյալ հարցերի վերաբերյալ որոշումների կայացման համար՝

- ռիսկերի գրանցամատյանի թարմացում,
- անվտանգ աշխատանքի ընթացակարգերի և շահագործման ուղեցույցերի վերանայում,
- տարեկան նպատակների և թիրախների սահմանում ԱՍԱ ոլորտում,
- վերահսկողության ինժեներական մեխանիզմներում կապիտալ ներդրումներին առաջնահերթություն տալը,
- վերապատրաստման դասընթացների ծրագրերի մասին իրազեկում,
- արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլանավորման բարելավում,
- կապալառուների կառավարման գործընթացների ամրապնդում:

Վտանգավոր գործունեության բացահայտումը և ռիսկերի գնահատումը ներառված են նաև ԶՊՄԿ-ի Ընդլայնման նախագծի մշակման փուլում՝ ընդգրկելով հիմնական արդյունաբերական օբյեկտները, որոնք ենթակա են լինելու շահագործման: Նախագծային լուծումները մշակվում են հաշվի առնելով կիրառելի տեղական և միջազգային պահանջները, ճանաչված լավագույն փորձը և շահագրգիռ կողմերից ստացված բոլորներն ու կարծիքները: Այս կերպ որոշումների կայացումն ու ներդրումների պլանավորումն ուղղվում են հնարավոր ռիսկերի կանխարգելմանը և առկա ռիսկերի նվազեցմանը՝ նախքան դրանց՝ շահագործման հետագա գործընթացների մաս դառնալը:

ԱՅՍ ՄՈՏԵՑՈՒՄՆ ՕԳՆՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ՝

- 01** Կանխել վնասվածքները, մասնագիտական հիմնադրությունները և մահվան դեպքերը՝ բացահայտելով վնասի հնարավոր աղբյուրները մինչև պատահարների տեղի ունենալը,
- 02** համակարգված կերպով կառավարել ռիսկերը՝ վերացման, փոխարինման, ինժեներական և վարչական վերահսկման և անհատական պաշտպանության միջոցների կիրառման միջոցով (վերահսկողության միջոցառումների հիերարխիա³⁴),
- 03** պահպանել համապատասխանությունը կիրառելի ՀՀ օրենսդրությանը և միջազգային ստանդարտներին,
- 04** պաշտպանել ակտիվները և կորպորատիվ հեղինակությունը, ապահովել արտադրության անընդհատությունը՝ նվազեցնելով գործունեության խափանումներն ու կորուստները,
- 05** աջակցել հիմնավորված որոշումների կայացմանը՝ նոր նախագծերի պլանավորման, գործընթացների փոփոխությունների, սարքավորումների տեղադրման և ոչ ստանդարտ աշխատանքների կազմակերպման ժամանակ,
- 06** ամրապնդել անվտանգության մշակույթը և կատարողականը՝ ռիսկերի պրոակտիվ կառավարման և շարունակական բարելավման միջոցով:

³³ Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 5, էջ 81):

³⁴ Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 5, էջ 82):

Աշխատողների անվտանգության ապահովում և առողջության պահպանում

GRI 403-2

Աշխատողների անվտանգության ապահովումը և առողջության պահպանումը շարունակում են մնալ ԶՊՄԿ-ի առանցքային հանձնառությունները և աջակցվում են այնպիսի գործընթացներով, որոնք խրախուսում են խնդիրների մասին վաղ հաղորդումը, բաց հաղորդակցությունը և ժամանակին արձագանքումը՝ հնարավոր ռիսկերին: Ընկերությունը խրախուսում է իր աշխատողներին տեղեկացնել աշխատանքի հետ կապված վտանգավոր գործոնների և պայմանների մասին մի քանի հասանելի միջոցներով, այդ թվում՝ հայտնելով անմիջական ղեկավարներին կամ ԱԱԱ բաժնին, առկայության դեպքում էլեկտրոնային փոստով հաղորդում ներկայացնելու համակարգերի միջոցով, և «մազապուրծ դեպքերի»³⁵ մասին հաղորդման թեժ գծով: Անվտանգության հարցերին վերաբերող կանոնավոր հանդիպումները, հրահանգավորումները և ամենաշաբաթյա տեղեկատվության փոխանակումները նույնպես համակարգված հնարավորություններ են ընձեռում աշխատողներին բարձրաձայնելու իրենց մտահոգությունները և քննարկելու կանխարգելիչ գործողությունները:

ԶՊՄԿ-ի ԱԱԱ քաղաքականությունը և Աշխատավայրում բռնության, ոտնձգությունների, խտրականության և հաշվեհարդարի դեմ պայքարի քաղաքականությունն աջակցում են հաղորդում ներկայացնելու այս մշակույթին՝ պաշտպանելով կարգապահական պատասխանատվությունից կամ այլ հետապնդումից այն աշխատողներին, ովքեր հայտնում են վտանգների, ոչ ապահով պայմանների, մազապուրծ դեպքերի կամ միջադեպերի մասին: Այս մոտեցմամբ Ընկերության ղեկավարությունը ձգտում է ձևավորել անվտանգության դրական մշակույթ, որտեղ աշխատողները կարող են պրոակտիվ կերպով բարձրաձայնել իրենց մտահոգությունները՝ առանց բացասական հետևանքներից վախենալու:

Նույն պաշտպանությունը կիրառվում է այն դեպքերում, երբ աշխատողները հրաժարվում են աշխատանքի կատարումից ոչ անվտանգ աշխատանքային պայմանների պատճառով: ԶՊՄԿ-ի ԱԱԱ քաղաքականությունն աշխատողներին տալիս է ինչպես իրավունք, այնպես էլ պարտականություն՝ հրաժարվելու աշխատանքի կատարումից կամ դադարեցնելու այն, եթե նրանք ունեն հիմնավոր պատճառներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ISO 45001 պահանջների համաձայն, առկա է կյանքին կամ առողջությանը սպառնացող լուրջ և անմիջական վտանգ համարելու համար:

Վտանգավոր գործոնի կամ ոչ ապահով պայմանների բացահայտումից հետո ձեռնարկվում են ուղղիչ գործողություններ նախքան աշխատանքը վերսկսելը: Աշխատողներն անցում են համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ անվտանգության կանոնների խախտումները նկատելու, հասանելի հաղորդակցման ուղիներից օգտվելու և իմանալու երբ և ինչպես ապահովագրել իրենց վտանգից:

Աշխատողների շարունակական անվտանգությունը և աշխատանքի հետ կապված բոլոր գործընթացների անվտանգ ընթացքն ապահովելու նպատակով՝ ԶՊՄԿ-ն իրականացնում է

մանրակրկիտ քննություններ յուրաքանչյուր դժբախտ պատահարի կամ միջադեպի դեպքում: Յուրաքանչյուր քննության նպատակն է բացահայտել պատահարների հիմնական պատճառները, կանխել դրանց կրկնությունը և շարունակաբար բարելավել ԱԱԱ կառավարման համակարգի արդյունավետությունը:

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՈՒՄ ԶԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԴԵՊՔԵՐ, ԵՐԲ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱԾ ԼԻՆԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՄ ԶՐԱԺԱՐՎԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՈՉ ԱՊԱՀՆՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԱՏՃԱՌՈՎ:

Մենք կիրառում ենք մի շարք համակարգված գործընթացներ՝ աշխատողների կողմից բարձրաձայնած խնդիրները լսելի լինելու և նրանց գործնական, անմիջականորեն տեղում ստացված փորձը հաշվի առնվի Ընկերության անվտանգության կանոնները և մոտեցումները կատարելագործման մեջ հաշվի առնելու համար: Հիմնական գործընթացներն են՝

1. աշխատողների և կապալառուների ներկայացուցիչների ներգրավումը վտանգավոր գործոնների բացահայտման, ռիսկերի գնահատման և աշխատանքի անվտանգության վերլուծությունների գործընթացում, հատկապես հանքարդյունաբերական և շինարարական բարձր ռիսկայինություն ունեցող աշխատանքների դեպքում,
2. խորհրդակցություններն աշխատողների հետ ԱԱԱ քաղաքականությունների, ընթացակարգերի և աշխատանքի անվտանգության հրահանգների մշակման կամ ուսումնասիրության ժամանակ, այդ թվում՝ բարձրության վրա, շարժական սարքավորումների հետ, պայթեցման, փակ տարածություններում և շինարարական աշխատանքների հետ կապված քաղաքականությունների, ընթացակարգերի և հրահանգների,

3. ակտիվ մասնակցությունը պատահարների քննություններին՝ հիմնական պատճառները պարզելու և ուղղիչ ու կանխարգելիչ գործողությունները սահմանելու համար,
4. անվտանգության հարցերին վերաբերող կանոնավոր կարճատև հրահանգավորումները, հերթափոխից առաջ անցկացվող տեղեկացումները և անվտանգության հարցերով հանդիպումները, որոնք աշխատողներին հնարավորություն են տալիս բարձրաձայնել անվտանգությանն առնչվող իրենց մտահոգությունները, առաջարկել բարելավումներ և ժամանակին ստանալ արձագանք,
5. վտանգավոր գործոնների, ոչ ապահով աշխատանքային պայմանների, մազապուրծ դեպքերի և առողջության հետ կապված մտահոգություններին մասին տեղեկացման հասանելի ընթացակարգերի, այդ թվում՝ անհրաժեշտ լինելու դեպքում գաղտնի կամ անանուն հաղորդման միջոցների առկայությունը, ,
6. աշխատողների և կապալառուների ներգրավում ԱԱԱ ստուգումների, աուդիտների և արդյունավետության գնահատման գործընթացներում՝ անվտանգության ցուցանիշների շարունակական բարելավմանն աջակցելու նպատակով:

ԱԱԱ-ն շարունակում է մնալ ԶՊՄԿ-ի բարձրագույն ղեկավարության առաջնահերթություններից մեկը: Յուրաքանչյուր շաբաթ արտադրամասերի ղեկավարները հանդիպում են աշխատանքի անվտանգության առանցքային հարցերը, այդ թվում՝ վտանգավոր իրավիճակները, վերջին պատահարները, չավարտված ուղղիչ գործողությունները և ԱԱԱ-ին առնչվող այլ հարցերը քննարկելու համար: Այդ հանդիպումներն ապահովում են արագ արձագանքումը ռիսկերին և մտահոգություններին և երաշխավորում են, որ անվտանգության ապահովումը շարունակի հանդիսանալ Ընկերության գործունեության հետ կապված որոշումների առանցքային բաղադրիչը: Այս քննարկումների արդյունքներն այնուհետև ներկայացվում են ԶՊՄԿ բարձրագույն ղեկավարությանը:

³⁵ Մազապուրծ դեպքերը իրադարձություններ են, որոնք կարող էին հանգեցնել դժբախտ պատահարի կամ վնասվածքի, բայց չեն հանգեցրել: Դրանք դասակարգվում են ըստ ծանրության, հաճախականության և ռիսկի մակարդակի և խմբավորվում են ըստ վտանգի կամ գործունեության տեսակի, օրինակ՝ մեխանիկական անարջություններ, մարդկային գործունեությունը պայմանավորված սխալ կամ շրջակա միջավայրի գործոններ: 2025թ. ընթացքում մազապուրծ դեպքեր չեն արձանագրվել:

Պատահարների քննության ընթացակարգեր

ԶՊՄԿ-ն կիրառում է պատահարների քննության համակարգված գործընթաց մահվան, ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների (LTI), բժշկական միջամտություն պահանջող դեպքերի, ժառանգաբերական դեպքերի, ռիսկի բարձր հավանականությամբ պատահարների և բացահայտված մասնագիտական հիվանդությունների համար:



Այս գործընթացի կիրառման միջոցով ԶՊՄԿ-ն օգտագործում է պատահարները, որպես աշխատավայրում ուսուցման և շարունակական բարելավման հիմք: Քննությունների արդյունքները օգնում են ամրապնդել ներքին հսկողության մեխանիզմները, նվազեցնել կրկնվելու հավանականությունը և բարձրացնել ԱԱԱ կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպաստելով ավելի անվտանգ և կայուն գործունեությանը:

ԱԱԱ ազդեցության կանխարգելումը ընկերության գործունեության և գործարար հարաբերությունների շրջանակում

GRI 403-7

ԶՊՄԿ-ն գիտակցում է, որ աշխատանքի անվտանգության և առողջության վրա ազդեցությունը կարող է չսահմանափակվել միայն սեփական աշխատողներով և վերջինս կարող է առաջանալ ընկերության գործունեության, արտադրանքի, ծառայությունների և գործարար հարաբերությունների հետ կապված գործընթացներից: Համապատասխանաբար, ընկերությունը կիրառում է ռիսկերի վրա հիմնված և կանխարգելիչ մոտեցում կապալառուների, ենթակապալառուների և մատակարարների հետ կապված ԱԱԱ էական բացասական ազդեցությունը բացահայտելու, կանխելու և մեղմելու նպատակով: Այս մոտեցման կիրառումը պարբերաբար վերահսկվում է յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվող հանդիպումների ընթացքում, որտեղ Գլխավոր տնօրենը և բարձրագույն ղեկավարությունը ուսումնասիրում են աշխատանքի անվտանգության և առողջության ցուցանիշները, հիմնական ռիսկերը, պատահարները և առաջնահերթ գործողությունները՝ նպաստելով ժամանակին որոշումների կայացմանը և շարունակական բարելավմանը:

Սույն գործարար հարաբերությունների հետ կապված հիմնական ռիսկերը ներառում են ծանր տեխնիկայի շահագործումը, պայթեցման, բարձրության վրա և փակ տարածություններում իրականացվող աշխատանքները, էլեկտրական հոսանքով վնասվածք ստանալու վտանգը, արտադրական փոշու և աղմուկի ազդեցությանը ենթարկվելը:

Կապալառուների պատահարները քննվում են հիմնական պատճառների վերլուծության միջոցով, որին հաջորդում են ուղղիչ և կանխարգելիչ գործողությունները և քաղված դասերի մասին տեղեկատվության տրամադրումը համապատասխան թիմերին: Բարձրագույն ղեկավարությունը վերահսկում է կապալառուների կողմից ԱԱԱ հետ կապված պահանջների կատարումը սահմանված ԿՀՑ-ների, աուդիտների և կանոնավոր ուսումնասիրությունների միջոցով: ԶՊՄԿ-ն կիրառում է գոյական հանդուրժողականության մոտեցում աշխատանքի ոչ անվտանգ մեթոդների նկատմամբ և երաշխավորում է, որ անվտանգության պահանջները չեն խախտվի ընկերության գործունեության հետ կապված կամ կոմերցիոն գործունեության ազդեցության ներքո:

ԱԱԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՇՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՇԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԶՊՄԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:

- 01** Հիմնական կապալառուների նախադրական վրձինները՝ ներառյալ անվտանգության ցուցանիշների, աշխատողների կոմպետենտության, ռիսկերի գնահատման մեթոդների և պահանջների հետ համապատասխանության անցյալ ժամանակաշրջանների տվյալների ուսումնասիրությունը,
- 02** Կապալառուների հետ կնքվող պայմանագրերում ԱԱԱ վերաբերող պահանջների ներառումը,
- 03** Ընկերության կողմից վերահսկվող տարածքներում գործող կապալառուների կողմից վտանգավոր գործունեության բացահայտումը և ռիսկերի գնահատումը առաջադրանքների շրջանակում,
- 04** Տվյալ տեղամասին հատուկ ներաժական հրահանգավորումը, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության վերաբերյալ դասընթացի անցկացումը և հիմնական ռիսկերի վերահսկման վերաբերյալ հրահանգավորումը կապալառուի անձնակազմի համար՝ նախքան աշխատանքներն սկսելը,
- 05** Կապալառուների աշխատանքի կանոնավոր ստուգումները, աուդիտները և մոնիտորինգը, ներառյալ բարձր ռիսկային աշխատանքների իրականացման համար թույլտվությունների տրամադրման վերահսկողությունը,
- 06** Կապալառուների ներգրավումը տվյալ տարածքի արտակարգ իրավիճակների արձագանքման միջոցառումներում, այդ թվում՝ մասնակցությունը վարժանքներին և ուսումնական տազնախնդիրին:

Ավելի անվտանգ աշխատավայրի ձևավորում՝ ԱԱԱ վերաբերյալ դասընթացների միջոցով

GRI 403-5, SASB EM-MM-320a.1.

Աշխատողների առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունն առաջնահերթություն են ԶՊՄԿ-ի համար, իսկ վերապատրաստման դասընթացները կարևոր նշանակություն ունեն այդ հանձնառությունների ապահովման համար: Ընկերության աշխատողների, աշխատող չհանդիսացող անձանց, այդ թվում՝ ընկերության կողմից վերահսկվող տարածքներում աշխատող կապալառուների և ենթակապալառուների համար պարբերաբար անց են կացվում ԱԱԱ-ին վերաբերող ընդհանուր և մասնագիտացված դասընթացներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՇԽՄԱԿԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԸ:

- 01** Տեղամասին վերաբերող ներաժական հրահանգավորումը՝ նախքան աշխատանքը սկսելը, որը ներառում է տեղամասի կանոնները, արտակարգ իրավիճակների ընթացակարգերը, վտանգների մասին իրազեկումը, պատահարների մասին հաղորդումը և աշխատանքի անվտանգության և առողջության հետ կապված աշխատողների իրավունքներն ու պարտականությունները,
- 02** Պարբերական վերապատրաստման դասընթացները՝ անվտանգ վարքագիծն ամրապնդելու և ընթացակարգերի, ռիսկերի կամ օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ աշխատողներին տեղեկացնելու նպատակով,
- 03** Անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) օգտագործմանը վերաբերող դասընթացները՝ ներառյալ դրանց ընտրությունը, պատշաճ օգտագործումը, սպասարկումը և սահմանափակումները,
- 04** Արտակարգ իրավիճակներում ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ դասընթացները՝ ներառյալ տարհանման ընթացակարգերը, առաջին օգնության հիմունքները և արձագանքը շարժական տեխնիկայի, հրդեհների կամ գետնտեսիկական վտանգների հետ կապված պատահարներին,
- 05** Աշխատանքի վայրում առողջությանը վերաբերող ռիսկերի վերաբերյալ դասընթացները՝ ներառյալ հոգևածությունը, ջերմային և ցրտային սթրեսը, աղմուկը, փոշու ազդեցությունը և էրգոնոմիկան,
- 06** Հատուկ վտանգների և բարձր ռիսկային գործունեության վերաբերյալ դասընթացները:

Հաշվի առնելով հանքարդյունաբերական աշխատանքների բարձր ռիսկային բնույթը և ԶՊՄԿ-ի տարածքներում իրականացվող շինարարական աշխատանքները՝ ընդհանուր մոդուլների և զուգահեռ պարբերաբար անց են կացվում նաև մասնագիտացված դասընթացներ: Այդ դասընթացներն ուղղված են կոնկրետ առաջադրանքների իրականացմանը և ռիսկերի նվազեցմանը և նախատեսված են այն աշխատողների համար, որոնք ենթարկվում են որոշակի վտանգների կամ կատարում են բարձր ռիսկային աշխատանք, ներառյալ.

- ▶ հանքարդյունաբերության գործունեությանը հատուկ վտանգների, օրինակ՝ պայթեցման աշխատանքների, գրունտի անկայունության, ծանր շարժական սարքավորումների շահագործման և բացահանքերում կամ ստորգետնյա տարածքներում աշխատանքների (կիրառելի լինելու դեպքում) վերաբերյալ դասընթացները.
- ▶ շինարարությանն առնչվող վտանգների, այդ թվում՝ բարձրության վրա աշխատանքների, բեռնաբարձման աշխատանքների, փայտամածների, կաղապարամածների օգտագործման, հողային աշխատանքների և էլեկտրական գործիքների ու մեքենա-սարքավորումների օգտագործման վերաբերյալ դասընթացները.
- ▶ փակ տարածություններում աշխատանքի, կրակի հետ աշխատանքների, էլեկտրասանվտանգության, և կողպեքավորման/ափստակավորման ընթացակարգերի վերաբերյալ դասընթացները.
- ▶ երթևեկության կառավարման և սարքավորումների հետ փոխգործակցության վերաբերյալ դասընթացները՝ տրանսպորտային միջոցների և հետիոտների միջև բախման ռիսկերը նվազեցնելու նպատակով.
- ▶ առողջության պահպանմանն ուղղված դասընթացները վտանգավոր ազդեցության վերահսկման միջոցառումների վերաբերյալ, ներառյալ փոշու նստեցումը, աղմուկից պաշտպանությունը և քիմիական նյութերի հետ վարվելու կանոնները:

Առողջության և անվտանգության բաժնի կողմից կազմակերպված դասընթացները և մասնակիցների թիվը

Առողջության և անվտանգության բաժնի կողմից կազմակերպված ներքին դասընթացները	Մասնակիցների թիվը 2023թ-ին	Մասնակիցների թիվը 2024թ-ին	Մասնակիցների թիվը 2025թ-ին
Ընդհանուր դասընթաց աշխատողների համար. առողջության և անվտանգության վերաբերյալ ներածական հրահանգավորում՝ համաձայն բոլոր ընթացակարգերի, իրավական ակտերի և նորմատիվ փաստաթղթերի	478	593	879
Ընդհանուր դասընթաց այցելուների համար ³⁶	343	580	713
Ընդհանուր դասընթաց կապալառուների համար	602	2,900	1,210
Ընդհանուր դասընթաց պրակտիկանտների և ուսանողների համար	118	91	126
Անվտանգ երթևեկություն/բացահանք	-	179	175
Աղմուկ և թրթռում	-	-	559
Դասընթացներ հերթափոխի վարպետների համար	146	152	-
Փակ տարածություններում անվտանգ աշխատանքի վերաբերյալ դասընթացներ	198 ³⁷	181	34
Բարձրության վրա անվտանգ աշխատանքի վերաբերյալ դասընթացներ	379	354	44
Ներքին դասընթացներ առասանողների/ բեռնաբարձողների համար	418	455	471
Ներքին դասընթացներ եռակցողների համար	-	97	-
Հրդեհային անվտանգության միջոցառումներ և պատասխանատու անձինք	161	184	55
Ընդամենը	2,843	5,766	4,266

4,266

մասնակից

2025 թվականին մասնակցել են վերապատրաստման դասընթացներին

2025թ-ին մի շարք դասընթացներում մասնակցության ցուցանիշը նվազել է նախորդ տարվա համեմատ: Նվազումը պայմանավորված է վերջիններիս պարբերական բնույթով. դրանք սովորաբար անց են կացվում երկու կամ երեք տարին մեկ անգամ: Նվազումը պայմանավորված է նաև աշխատանքային հերթափոխերով և համապատասխան բաժինների կողմից ներկայացված մասնագետների թվով: 2025թ-ին ԶՊՄԿ-ն նաև ներդրել է «Աղմուկ և թրթռում» նոր դասընթացը, որին ներկա է գտնվել 559 մասնակից:

³⁶ 2025թ. հաշվետու ժամանակաշրջանում ներդրվել են դասընթացների մի քանի նոր դասակարգեր. մասնավորապես՝ «Ընդհանուր դասընթաց այցելուների համար», «Ընդհանուր դասընթաց կապալառուների համար», «Ընդհանուր դասընթաց պրակտիկանտների և ուսանողների համար» և «Աղմուկ և թրթռում»:

³⁷ 2023թ.մասնակիցների թիվը վերանայվել է:



Ատեստավորում, որակավորում և վերաատեստավորում

Աշխատողի կատեգորիա	Գնահատում անցած աշխատողներ (աշխատողների ընդհանուր թվի %-ը) ³⁹		2025թ. աշխատողների թիվը
	2024թ.	2025թ.	
Առասանողներ	12.0%	12.2%	591
Ճնշման տակ գործող սարքավորումներով աշխատող աշխատողներ	8.0%	2.4%	115
Բեռնաբարձման աշխատանքների համար պատասխանատու աշխատողներ (տարբեր տեսակի կոունկավարներ, բեռնամբարձիչների օպերատորներ, վերելակավարներ, բեռնաբարձ մեխանիզմների օպերատորներ)	4.0%	3.5%	171
Փոխակրիչների օպերատորներ	3.5%	0%	0
Հանքային տեխնիկայի վարորդներ	7.0%	0%	0
Վտանգավոր արտադրական օբյեկտների համար պատասխանատու աշխատողներ	Կիրառելի չէ ⁴⁰	3.3%	157
Վառելիքի կայանի օպերատորներ	Կիրառելի չէ	0.4%	19
Վառելիքատարների վարորդներ	Կիրառելի չէ	0.2%	12
Ընդամենը			1,065

Ուսուցման արդյունավետությունը և ընկալելիությունն ապահովելու նպատակով ԶՊՄԿ-ն ներգրավում է որակավորված ներքին դասընթացավարների կամ փորձառու արտաքին մասնագետների՝ բարձրորակ դասընթացներ անցկացնելու համար: Դասընթացներ անցած աշխատողները պարտավոր են հաստատել իրենց գիտելիքները կարողությունների գնահատումների, գործնական ցուցադրությունների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բարձր ռիսկային առաջադրանքների իրականացման գնահատումների միջոցով:

Դասընթացները պարբերաբար արդիականացվում են կանոնավոր վերանայումների միջոցով, մասնավորապես, պատահարների քննության և ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա:

ԶՊՄԿ-ն շարունակում է հանձնառու մնալ աշխատավայրում սթափության խթանմանը⁴¹, որպես աշխատանքի անվտանգության և առողջության կարևոր բաղադրիչ՝ աշխատողների պաշտպանությունն ապահովելու և անվտանգ աշխատանքային միջավայր պահպանելու նպատակով: Իր «Ջրո վնաս» հանձնառությանը համապատասխան՝ ԶՊՄԿ-ն ձեռք է բերել ալկոհոլի ստուգման սարքավորումներ և իրականացնում է կանոնավոր ստուգումներ, աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման մեջ վստահ լինելու համար:

2025թ-ին ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԱԼԿՈՀՈԼԻ 5,716 ՍՏՈՒԳՈՒՄ, ՈՐՈՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ շԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՌԻԹ ԳԵՊԹԵ: շԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՆ ԱՁՍԱԿԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ, ԻՆՉԸ ՎԿԱՅՈՒՄ Է ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԻՑ ՉԵՐԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԱՊԱՇՆՈՎԵԼՈՒ շԱՐՑՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

³⁸ «Առողջության և անվտանգության բաժնի կողմից կազմակերպված դասընթացները և մասնակիցների թիվը» աղյուսակում մասնակիցների ընդհանուր թիվը ներառում է նաև 713 այցելուների և 126 պրակտիկանտների ու ուսանողների, որոնք Ընկերության աշխատող չեն համարվում:

³⁹ 2023թ-ի համադրելի տվյալները հասանելի չեն, ուստի միտումների վերլուծությունը ներկայացված է միայն 2024թ. և 2025թ. համար:

⁴⁰ 2024թ. որոշ տվյալներ հասանելի չեն, քանի որ աշխատողների որոշակի կատեգորիաների համար ատեստավորում իրականացվում է 2-3 տարին մեկ անգամ:

⁴¹ Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 5, էջ 85):

Աշխատողների առողջության խթանումն աշխատավայրում առողջության պահպանման համապարփակ ծառայությունների միջոցով

GRI 403-3

Աշխատավայրում առողջության պահպանման ծառայությունների տրամադրումը իրենից ներկայացնում է շարունակական հանձնարարություն, որը ԶՊՄԿ-ն ապահովում է բոլոր այն անձանց համար, որոնց աշխատանքը և/կամ աշխատավայրը վերահսկվում է Ընկերության կողմից՝ արտադրական տարածքներում և հարակից շինարարական հրապարակներում: Դա վերաբերում է բոլոր աշխատողներին և Ընկերության աշխատող չհանդիսացող մասնագետներին, այդ թվում՝ կապալառուներին և ենթակապալառուներին:

Արտադրական և ընթացիկ շինարարական աշխատանքներով ուղեկցվող աշխատանքային միջավայրում առողջության պահպանման ծառայությունները կենտրոնացած են առողջությանը սպառնացող ռիսկերի կանխարգելման, վաղ հայտնաբերման և բարձր ռիսկային աշխատանքային պայմանների ազդեցության նվազեցման վրա:

ԶՊՄԿ-ն աշխատողներին տրամադրում է աշխատավայրում առողջության պահպանման ծառայություններ և ապահովում է շտապ բժշկական օգնության հասանելիություն Ընկերության աշխատող չհանդիսացող մասնագետներին, այդ թվում՝ կապալառուների և ենթակապալառուների համար, այն դեպքերում, երբ նրանց աշխատանքը կամ աշխատավայրը գտնվում է Ընկերության վերահսկողության ներքո:

Աշխատանքի ընդունվելուն նախորդող և պարբերական բժշկական զննումները չեն իրականացվում ԶՊՄԿ-ի աշխատողներ չհանդիսացող անձանց համար: Այնուամենայնիվ, տարածքում գտնվող բոլոր աշխատողները, անկախ Ընկերության աշխատակից հանդիսանալու իրենց կարգավիճակից, ունեն առաջին օգնություն և անհետաձգելի բժշկական օգնություն ստանալու հնարավորություն՝ վնասվածքների, սուր հիվանդությունների կամ առողջության հետ կապված այլ պատահարների դեպքում:

ԱՅԴ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՏՈՒՑՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ.

- ▶ Աշխատանքի ընդունվելուն նախորդող և պարբերական բժշկական զննումների կազմակերպում աշխատողների համար՝ ՀՀ օրենսդրության պահանջների և ներքին ընթացակարգերի համաձայն,
- ▶ Մասնագիտական վտանգների, այդ թվում՝ աղմուկի, ձայնային տատանումների, փոշու, քիմիական նյութերի, ֆիզիկական ծանրաբեռնվածության և արտադրության հետ կապված այլ ռիսկային գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների առողջության վերահսկողություն,
- ▶ Աշխատանքի համար պիտանելիության գնահատումների իրականացում՝ հաստատելու համար, որ աշխատակիցները բժշկական տեսանկյունից պիտանի են իրենց հանձնարարված առաջադրանքներն անվտանգ կատարելու համար,
- ▶ Տեղում առաջին օգնության և անհետաձգելի բժշկական օգնության տրամադրում տարածքում գտնվող բոլոր աշխատողներին, այդ թվում՝ կապալառուներին և ենթակապալառուներին,
- ▶ Մասնագիտական հիվանդությունների միտումների և առողջությանը վերաբերող տվյալների վերլուծություն՝ կանխարգելիչ միջոցառումների և աշխատանքային պայմանների բարելավման համար տեղեկատվական հիմք ապահովելու նպատակով,
- ▶ Բժշկական անձնակազմի և ԱՄԱ բաժնի ներգրավում ռիսկերի գնահատման և աշխատանքային այն տարածքների ստուգումների գործընթացում, որտեղ հայտնաբերվել են առողջությանը սպառնացող ռիսկեր:

Աշխատավայրում առողջության պահպանման ծառայությունների որակը և հուսալիությունը պահպանելու նպատակով՝ ԶՊՄԿ-ն համագործակցում է լիցենզավորված բժշկական մասնագետների և հավատարմագրված բժշկական հաստատությունների հետ: Բժշկական զննումներն իրականացվում են ՀՀ օրենսդրությանը և հաստատված բժշկական կանոններին համապատասխան, իսկ աշխատողները ներաձեռնական հրահանգավորման և դասընթացների ընթացքում տեղեկացվում են բժշկական կենտրոնների, առաջին օգնության սենյակների և համապատասխան ընթացակարգերի մասին:

Այդ միջոցառումների միջոցով ԶՊՄԿ-ն ամրապնդում է աշխատողների առողջության պաշտպանությունը և նպաստում աշխատանքի անվտանգության և առողջության ցուցանիշների շարունակական բարելավմանը իր ողջ գործունեության ընթացքում:

Առողջապահական ծառայությունների հասանելիություն

GRI 403-6, SASB EM-MM-320a.1.



3

ԶՊՄԿ-ն առաջնահերթություն է տալիս իր աշխատողների առողջությանը և բարեկեցությանը և շարունակում է հանձնարու լինել տեղում մատուցվող համապարփակ բժշկական ծառայությունների, Կապանի և Զաքարանի բժշկական կենտրոնների հետ համագործակցությամբ տրամադրվող առողջապահական աջակցության և ապահովագրական ծածկույթի հասանելիության ապահովման իր բոլոր աշխատողների և նրանց ընտանիքի անդամների համար:

Աշխատանքի ընդունվելուց առաջ իրականացվող բժշկական զննումները, որոնք ապահովում են, որ վտանգավոր հաստիքներում աշխատանքի իրավունք են ստանում միայն բժշկական տեսանկյունից պիտանի համարվող թեկնածուները, ինչպես նաև առողջական խնդիրները հայտնաբերելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով իրականացվող պարբերական բժշկական զննումները շարունակում են պարտադիր մնալ ԶՊՄԿ-ում: Այս մոտեցումն ապահովում է աշխատողների առողջության շարունակական մոնիտորինգը և պաշտպանությունը:

2024թ-ի Կայուն զարգացման հաշվետվությունում⁴² ներկայացված բոլոր հանձնարարությունները պահպանվում են և վկայում են աշխատողների առողջության պահպանման և բարեկեցության ապահովման Ընկերության հաստատակամության մասին:

Գիտակցելով ապագա սերունդներում ներդրումներ կատարելու կարևորությունը՝ Ընկերությունն աջակցում է այնպիսի նախաձեռնությունների, որոնք խթանում են առողջ ապրելակերպը, առաջնորդությունը և սոցիալական ներգրավվածությունը: Ամենամյա «Դավիթբեկյան խաղեր»

փառատոնի հետ գործընկերության միջոցով Ընկերությունն օգնում է ստեղծել համագգային հարթակ, որը կրթական, մարզական և թիմային միջոցառումների շուրջ համախմբում է Հայաստանի և Սփյուռքի երիտասարդներին: Նախաձեռնությունը զարգացնում է առաջնորդության, դիմակայունության, թիմային աշխատանքի և գործնական հմտությունները, խթանում ավելի ամուր սոցիալական կապերի ձևավորմանը և նպաստում է Ընկերության շրջակա համայնքների և Սյունիքի մարզի երկարաժամկետ զարգացմանը:

Փառատոնը նպատակ ունի նաև խթանել սոցիալական ներգրավվածությունը՝ նպաստելով բոնի տեղահանված երիտասարդների ինտեգրմանը համատեղ միջոցառումների և տեղի երիտասարդության հետ փորձի փոխանակման միջոցով:

Ի շարունակություն այդ միջոցառումների՝ Ընկերությունը 2025թ-ին իր աշխատողների համար կազմակերպեց նաև իր առաջին «Առողջության օր» միջոցառումը: Այդ նախաձեռնությունը նպատակ ուներ խթանել առողջ ապրելակերպը, խրախուսել կանոնավոր ֆիզիկական ակտիվությունն ու սպորտով զբաղվելը և նպաստել աշխատակիցների բարեկեցության ամրապնդմանը:

Միջոցառումը համախմբեց շուրջ 300 աշխատողի՝ 13 թիմից, որոնք երկու օր շարունակ մասնակցեցին մի շարք սիրողական մարզական մրցումների: Ֆիզիկական բարեկեցությունը խթանելուց բացի, միջոցառումը հնարավորություն տվեց ամրապնդել թիմային աշխատանքը, խթանել աշխատողների ներգրավվածությունը և ձևավորել միասնության զգացում աշխատողների մոտ: Մասնակիցները և լավագույն արդյունք գրանցած թիմերը խրախուսվեցին իրենց հանձնարարության, թիմային աշխատանքի և ակտիվ մասնակցության համար:



⁴² Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 5, էջ 92):

Շարունակական մոնիտորինգ և կանխարգելում

2025թ-ին ՎՆԱՍԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՆ ԱՆՑՆԵԼ ԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԱԿԱՆ ՋՆՆՈՒՄ: ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ:

Պարբերական բժշկական զննումներ 2023-2025թթ.

Աշխատողների թիվը	2023թ.			2024թ.			2025թ.		
	Պլանավորված	Ջննում անցած	Ջննման ցուցանիշ (%)	Պլանավորված	Ջննում անցած	Ջննման ցուցանիշ (%)	Պլանավորված	Ջննում անցած	Ջննման ցուցանիշ (%)
Ընդամենը	3,035	3,001	98.90%	3,010	2,983	99.1%	3,357	3,321	98.9%
Կանայք	500	496	99.60%	450	448	99.6%	476	472	99.2%

ԶՊՄԿ-ն շարունակում է ապահովել առողջության ապահովագրական ծածկույթ բոլոր աշխատողների և նրանց ընտանիքի անդամների համար և ընկերության Բարեգործական հիմնադրամի միջոցով աջակցություն է տրամադրում այն դեպքերում, որոնք չեն դիտարկվում ապահովագրական պայմանագրի շրջանակներում: Սա հանդիսանում է նշանակալի տարեկան ներդրում, որի միջոցով ֆինանսավորվում են պետական պատվերի շրջանակից դուրս տրամադրվող բժշկական ծառայությունները: Այս աջակցությունը տրամադրվում է ոչ միայն ԶՊՄԿ-ի աշխատողներին, այլև տեղական համայնքների բնակիչներին:

Աշխատանքի հետ կապված վնասվածքներ և առողջական խնդիրներ

GRI 403-9, GRI 403-10, EM-MM-320a.1.

ԶՊՄԿ-ն հանձնառու է ապահովել իր աշխատողների և ընկերության վերահսկողության ներքո գտնվող տարածքներում գործունեություն իրականացնող բոլոր անձանց անվտանգությունը: ԶՊՄԿ-ն իրականացնում է աշխատանքին առնչվող բոլոր պատահարների և վնասվածքների շարունակական մոնիտորինգ՝ դրանց բացասական հետևանքները մեղմելու և ապագայում նմանատիպ դեպքերը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:

2025թ-ին գրանցվել է աշխատանքի հետ կապված լուրջ հետևանքներով չորս վնասվածք:⁴³

Լուրջ հետևանքներով դեպքերի բացվածքը⁴⁴

Ամսաթիվ	Աշխատողի տեսակը	Վնասվածքի բնույթը	Համառոտ նկարագիր
02/08/2025	Աշխատող	3-րդ և 4-րդ մատների բաց կտրվածքներ (ձայն ձեռք)	Վնասվածքը տեղի է ունեցել պտտվող թմբուկի մոտ խտանյութի նմուշառման ընթացքում, աշխատողի մատները սեղմվել են դույլը վերցնելու փորձ կատարելիս: Կատարվել է վիրահատական միջամտություն:
07/08/2025	Կապալառու	4-րդ մատի բաց կտրվածք (աջ ձեռք)	Մատը ճզմվել է ինքնաթափ բեռնատարի հիդրավլիկ համակարգի սպասարկման ընթացքում: Պահանջվել է վիրահատական միջամտություն և հոսպիտալացում:
20/08/2025	Աշխատող	3-րդ և 4-րդ մատների տրավմատիկ անդամահատում (աջ ձեռք)	Ռոտորի ապամոնտաժման ընթացքում քարշափուկի խափանումը հանգեցրել է ճզմման: Իրականացվել են վիրահատական անդամահատում և վերականգնում:
29/10/2025	Աշխատող	3-րդ մատի մասնակի անդամահատում (աջ ձեռք)	Փոխակրիչի ժապավենի նախապատրաստման աշխատանքների ընթացքում մատը մնացել է մետաղական ձողի տակ: Կատարվել է վիրահատական միջամտություն:



⁴³ 2025թ. ընթացքում աշխատանքի հետ կապված վնասվածքների կամ առողջական խնդիրների պատճառով մահվան դեպքեր չեն գրանցվել:
⁴⁴ Լուրջ հետևանքներով դեպքերը սահմանվում են «մագալուծ դեպքերի», պատահարների և դժբախտ պատահարների իրազեկման, հետաքննության և գրանցման վերաբերյալ ընկերության ստանդարտով:

ԶՊՄԿ-ի աշխատակիցների և կապալառուների ստացած այլ հիմնական վնասվածքները ներառում են՝

- կտրվածքներ և հենաշարժողական համակարգի վնասվածքներ,
- սալքարդեր և մակերեսային վնասվածքներ,
- ճզմման և պոկման հետևանքով առաջացած վնասվածքներ
- սպասարկման աշխատանքների հետ կապված վնասվածքներ:

Վնասվածքների ցուցանիշներ (ԶՊՄԿ-ի աշխատողներ)⁴⁵

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի թիվ	0	1	0
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի ցուցանիշ (%)	0	0.12	0
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների (բացառությամբ մահվան դեպքերի) թիվ	6	5	3
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների ցուցանիշ (%)	0.75	0.62	0.37
Ժամանակավոր աշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվ ⁴⁶	9	10	10
Ժամանակավոր աշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների հաճախականություն (%)	1.12	1.25	1.26
Աշխատաժամերի ընդհանուր քանակ (մարդ/ժամ)	8,009,520	7,983,472	7,928,448
Բժշկական օգնության դեպքեր	69	61	34
Գրանցվող վնասվածքների ընդհանուր հաճախականության ընդհանուր ցուցանիշ	9.74	8.89	5.54

Վնասվածքների ցուցանիշներ (կապալառուների աշխատողներ)

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի թիվ	0	0	0
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված մահվան դեպքերի ցուցանիշ (%)	0	0	0
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների (բացառությամբ մահվան դեպքերի) թիվ		1	1
ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ծանր վնասվածքների ցուցանիշ (%)	0	0.23	0.48
Ժամանակավոր աշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվ	2	2	3
Ժամանակավոր աշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների հաճախականություն (%)	0.74	0.48	1.43
Աշխատաժամերի ընդհանուր քանակ (մարդ/ժամ)	≈2,719,080	4,176,000	≈2,090,880 ⁴⁷

Վնասվածքները նվազեցնելու համար ԶՊՄԿ-ն շարունակում է ամրապնդել իր կանխարգելիչ վերահսկողության միջոցները՝ օգտագործելով նախորդ պատահարների և վնասվածքների քննությունից քաղված դասերը: Այս աշխատանքները ներառում են կյանքի փրկության կանոնների և ռիսկերի հսկողության ստանդարտների ամրապնդումը, վնասվածքների կանխարգելմանն ուղղված նպատակային հրահանգավորումների անցկացումը, բարձր ռիսկային աշխատանքների ընթացքում հսկողության ուժեղացումը և ինժեներական վերահսկողության միջոցների ներդրումը, օրինակ՝ սարքավորումների պաշտպանիչ համակարգերի բարելավումը: ԶՊՄԿ-ն նաև ընդլայնում է անհատական պաշտպանության միջոցների կիրառումը և մոնիտորինգը և շարունակում է անցկացնել անվտանգությանը վերաբերող դասընթացներ և իրականացնել իրազեկման նախաձեռնություններ՝ ուղղված վտանգների բացահայտմանը և աշխատանքի անվտանգ մեթոդների կիրառմանը:

34

աշխատակից

2025թ-ին ընդհանուր թվով 34 աշխատակից առաջին օգնություն է ստացել տարածքում գործող առաջին օգնության կետերում: Այդ դեպքերը դասակարգվել են որպես հաշվառման ենթակա չհամարվող պատահարներ՝ կիրառելի իրավական և օրենսդրական չափանիշներին համապատասխան:

⁴⁵ Դրույքները հաշվարկվել են աշխատած 1,000,000 ժամի հիման վրա:

⁴⁶ 2023թ. ժամանակավոր անաշխատունակության կորստի հանգեցնող վնասվածքների թիվը վերահաշվարկվել է:

⁴⁷ Ընկերությունում ներդրվել է կապալառուի աշխատաժամանակի հաշվառման նոր մեթոդ, որը հնարավորություն է տալիս ներկայացնել տվյալները բացարձակ մեծություններով:

Արտադրանքի և ծառայությունների կատեգորիաների՝ առողջության և անվտանգության վրա ազդեցության գնահատում

GRI 416-1, GRI 416-2

Ընկերության հիմնական արտադրանքի և ծառայությունների կատեգորիաների շուրջ 90%-ը գնահատվում է առողջության և անվտանգության վրա ազդեցության տեսանկյունից՝ շարունակական բարելավում ապահովելու նպատակով: Ընկերության հիմնական արտադրանքի կատեգորիաները ներառում են պղնձի և մոլիբդենի խտանյութերը, իսկ ծառայությունների հետ կապված գործունեությունը ներառում է հանքաքարի արդյունահանումը, վերամշակումը, պահեստավորումը և փոխադրումը: Այս արտադրանքի և ծառայությունների հետ կապված առողջության և անվտանգության ազդեցությունները համակարգված կերպով գնահատվում են գործառնական շրջափուլի ընթացքում:

Գնահատման գործընթացը ներառում է՝

- վտանգների հայտնաբերում և ռիսկերի գնահատում արդյունահանման և վերամշակման փուլերում,
- մասնագիտական հիվանդությունների հետ կապված ռիսկերի գնահատում (փոշի, աղմուկ, թթվոտ, քիմիական նյութեր),
- բեռնաթափման, պահեստավորման և փոխադրման անվտանգ գործելակերպերի վերանայում,
- արտադրանքի որակի և ստանդարտների հետ համապատասխանության ստուգում,
- Ներքին աուդիտներ և ղեկավարության կողմից վերանայման գործընթացներ:

Արտադրանքի և ծառայությունների մնացած կատեգորիաները ներկայացնում են ոչ հիմնական կամ ավելի ցածր ռիսկային գործունեություն: Թեև դրանց նկատմամբ կիրառվում են ընդհանուր անվտանգության վերահսկողության միջոցներ, դրանք ղեկա ներառված չեն առողջության և անվտանգության վրա ազդեցության պաշտոնական գնահատման գործընթացում: Ընկերությունը շարունակում է աշխատել այս գնահատումների շրջանակն ընդլայնելու ուղղությամբ՝ բոլոր նշանակալի կատեգորիաների ամբողջական ընդգրկումն ապահովելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՊՄԿ-ի արտադրանքի և ծառայությունների՝ առողջության և անվտանգության վրա ազդեցությանը վերաբերող կանոնակարգերի կամ կամավոր վարքագծի կանոնների պահանջների հետ անհամապատասխանության դեպքեր չեն արձանագրվել:

Բացի այդ, չեն գրանցվել մարքեթինգային հաղորդակցությունները կարգավորող կանոնակարգերի կամ կամավոր վարքագծի կանոնների պահանջների հետ անհամապատասխանության դեպքեր:



\$18.2

միլիոն

////////////////////

կազմել են ԶՊՄԿ-ի ներդրումները
համայնքներում 2025 թվականին

6



Տեղական համայնքներ. ներառական աճի խթանում

72	Տեղական համայնքներ
74	Համայնքային ներդրումներ
78	Համայնքների դիմակայունության և կենսապահովման միջոցների բարելավում
79	Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն. մտահոգությունների ընկալում և երկխոսության ամրապնդում

Տեղական համայնքներ

GRI 3-3



3

ԶՊՄԿ-ի համար տեղական համայնքների հետ համագործակցությունը վաղուց հիմնված է տարիների ընթացքում ձևավորված հարաբերությունների վրա, որոնք ավելի քան յոթ տասնամյակ ամրապնդվել են ամենօրյա ներկայության, երկխոսության և փորձի փոխանակման միջոցով: Տարիների ընթացքում այս կապը վերաճվել է կառուցվածքային մոտեցման, որն առաջնորդվում է հստակ քաղաքականություններով, սահմանված պարտականություններով և կառավարման պաշտոնական մեխանիզմներով: Այս համակարգի միջոցով, ինչպես նաև կիրառելի իրավական և միջազգային ստանդարտներին համապատասխան, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ կառավարում է իր գործունեության ազդեցությունը տեղական համայնքների վրա և աջակցում է տեղական զարգացմանը՝ նպատակ ունենալով ստեղծել ընդհանուր արժեք:⁴⁸

ԶՊՄԿ-ի սոցիալական կառավարման գործելակերպը հիմնված է միջազգայնորեն ճանաչված չափորոշիչների վրա, այդ թվում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և ՄՖԿ-ի (IFC) Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության գործունեության ստանդարտների վրա, և իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ընկերությունը նաև խրախուսում է իր բիզնես գործընկերներին, երբ և որտեղ կիրառելի է, առաջնորդվել միջազգային սկզբունքներով և ստանդարտներով:

Այսօր ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ շարունակում է զարգացնել այդ հիմքը սահմանված քաղաքականությունների, ինստիտուցիոնալ չափորոշիչների և մասնագիտացված թիմերի միջոցով, որոնք երկարաժամկետ հանձնառությունը վերաճում են հետևողական գործելակերպի: Համապատասխանեցնելով այս աշխատանքներն ազգային օրենսդրությանը և միջազգային ստանդարտներին՝ ԶՊՄԿ-ն ձգտում է ապահովել, որ համայնքների հետ իր փոխգործակցությունը շարունակի լինել համագործակցային, պատասխանատու և տեղական կարիքներին արձագանքող:

Սոցիալական պատասխանատվություն

Սոցիալական պատասխանատվությունը միշտ եղել է ԶՊՄԿ-ի գործունեության առանցքում՝ ձևավորելով այն մոտեցումները, որոնց միջոցով ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ աջակցում է ինչպես տեղական համայնքների, այնպես էլ դրանցում ապրող և աշխատող մարդկանց բարեկեցությանը: Այս հանձնառությունն արտահայտվում է շարունակական ներդրումներով առողջապահության, կրթության և սոցիալական աջակցության ոլորտներում, ինչպես նաև այն փաստով, որ աշխատուժի ավելի քան 80%-ը հարևան համայնքների բնակիչներ են, ինչը վկայում է ԶՊՄԿ-ի կայուն և երկարատև տեղական ներկայության մասին:

Այս հանձնառությունն արտահայտվում է առօրյա կյանքում: ԶՊՄԿ-ն իր աշխատողներին և նրանց ընտանիքներին տրամադրում է համապարփակ առողջության ապահովագրություն, ցուցաբերում է աջակցություն համայնքի անդամներին անհատական առողջապահական և սոցիալական կարիքների հարցում: Բացի այդ, մենք ներդրումներ ենք կատարում տեղական առողջապահական ենթակառուցվածքում՝ մեր աշխատողների և տեղական համայնքների համար հասանելի ծառայությունները ամրապնդելու համար: ԶՊՄԿ-ի գործունեությունից անմիջականորեն ազդեցություն կրող հինգ բնակավայրերում կենսապահովման միջոցներին ավելացվում է հողի օգտագործման փոխհատուցման ծրագրի շրջանակում պարբերաբար տրամադրվող աջակցությունը:

Կրթությունն ու երիտասարդների զարգացումը շարունակում են այս պատմության կարևոր մասը կազմել: Կրթական հաստատություններին, ուսանողական ծրագրերին, սպորտի, մշակույթի և մեդիայի ոլորտներում նախաձեռնություններին ցուցաբերվող աջակցության միջոցով ԶՊՄԿ-ն հնարավորություններ է ստեղծում երիտասարդների համար և նպաստում է համայնքային կյանքի կայունությանը:

Մշակութային ժառանգություն

SASB EM-MM-210b.1.

2025 թվականին ԶՊՄԿ-ի մշակութային ժառանգության պահպանման հանձնառությունը բախվեց իրական մարտահրավերի: Շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվեց մ.թ.ա. 6-7-րդ դարերով թվագրվող՝ նախկինում անհայտ դամբարանադաշտ, որին հասցվել էր որոշակի նախնական վնաս՝ մինչև դրա հնագիտական նշանակությունը ճանաչելը:

⁴⁸ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 6, էջ 96):



ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԳՈՐԾԱՐԿԵՑ «ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԻ» ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ԴԱԴԱՐԵՑՐԵՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԳՐԱՎԵՑ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ՝ ՄԱՆՐԱՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ԵԶԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒՆԵՑՈՂ ԴԱՄԲԱՐԱՆ, ՈՐՏԵՂ ԿԱՅԻՆ ՀՈՒՇԱՍՅՈՒՆ, ԶՈՀԱՍԵՂԱՆ, ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ ՀԻՇԵՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹԱՋԵՎ ԴԱՍԱՎՈՐՎԱԾ ԶԱՐԵ ՍԱԼԵՐ ԵՎ ԲԱԶՄԱՀԱՐ ԿՐՈՄԼԵԽ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՐՈՆՁԵ ԼԱՆՋԱՊԱՆԱԿ, ՉԵՆՔԵՐ, ՈՒԼՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԶԱՐԵ ԳՈՐԾԻՔՆԵՐ: ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԻՑ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՆՇԱՆԱՎՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԵՑ ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ՝ ԱՅՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՄԻՆՉՊԵՐՏԱՐԱԾԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ: ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՄԱՏԵՔՏՈՒՄ ԶՊՄԿ-Ն ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՄ ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՏԵԳՐԵԼ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՍԵՐՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱԶԱԿՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ՝ ՆՊԱՏԵԼՈՎ ԵՐԿՐԱՐԺԱՄԿԵՏ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆԸ:⁴⁹ ՈՐՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԱԶԱԿՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՄՑ ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍ՝ ԶՊՄԿ-Ն ՆԱԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՄ ՈՒՆԵՑԵԼ ՓՈԽՐՈՒՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ, ԵՎ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՓՈԽՐՈՒՏ ԳՅՈՒՂՆ ՈՒՆԻ ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻ:

Պատասխանատու համագործակցություն

ԶՊՄԿ-ում պատասխանատու համագործակցությունը հիմնված է շարունակական երկխոսության վրա: Խորհրդակցությունները, հանդիպումները և հանրային լսումները հնարավորություններ են ստեղծում շահագրգիռ կողմերի հետ կապը պահպանելու, նրանց մտահոգությունները և առաջարկությունները լսելու համար: Սոցիալական մոնիտորինգի գործիքները, այդ թվում՝ հարցումները, բողոքների հսկողությունը և ազդեցության գնահատումները, օգնում են հայտնաբերել և կառավարել սոցիալական ռիսկերն ու հնարավորությունները դրանց ի հայտ գալուն զուգընթաց: Բողոքներին արագ արձագանքելով՝ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ձգտում է պահպանել վստահությունը և թափանցիկությունը համայնքների հետ իր հարաբերություններում:

⁴⁹ Գրանցված առաջընթացը և համապատասխան նախաձեռնությունները թափանցիկ կերպով լուսաբանվում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պաշտոնական մեդիա էջերում:


Համայնքային ներդրումներ

GRI 203-1

ԶՊՄԿ-ի համայնքային ներդրումները արտացոլում են ԸՆԿերության ավելի լայն հանձնառությունը՝ ուղղված իր գործունեության տարածքին հարակից համայնքների զարգացմանն ու բարեկեցությանը: ԸՆԿերության հիմնական գործունեությունից առանձնացված լինելու փոխարեն՝ այս ներդրումները նախատեսված են այն լրացնելու համար՝ բարելավելով ենթակառուցվածքները, ամրապնդելով տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները և ընդլայնելով հիմնական ծառայությունների հասանելիությունը, հատկապես՝ Զաջարան և Կապան համայնքներում:

2025թ-ին այս հանձնառության շրջանակում սոցիալական ներդրումները կազմել են մոտ 18.2 միլիոն ԱՄՆ դոլար՝ ընդհանուր առմամբ պահպանվելով 2024թ. ներդրումների մակարդակը: Սոցիալական ներդրումների զգալի մասն ուղղվել է Զաջարանի և Կապանի խոշորացված համայնքներին:

Համայնքային ներդրումների աշխարհագրական բաշխվածությունը, ընդհանուր ծավալի %



~\$18.2

միլիոն

կազմել են ԶՊՄԿ-ի համայնքային ներդրումները 2025 թվականին

Տեղական ինքնակառավարման և համայնքային կառավարման մարմիններին ուղղված աջակցությունը շարունակում է մնալ ներդրումների հիմնական ուղղությունը՝ արտացոլելով հանրային ենթակառուցվածքների և տեղական ծառայությունների կարևորությունը համայնքների առօրյա կյանքում: Ֆինանսավորումը նպաստակ ունի հնարավորությունն ընձեռել իրականացնելու առաջնահերթ ենթակառուցվածքային ծրագրեր ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում: Ենթակառուցվածքներից բացի, աջակցություն է տրամադրվում նաև համայնքային ծառայությունների և միջոցառումների համար, որոնցից է. օրինակ՝ Զաջարանի օրը՝ այդպիսով նպաստելով տեղի սոցիալական և մշակութային ակտիվությանը:

Սոցիալական ներդրումներ. բացվածքն՝ ըստ ոլորտների և աշխարհագրության, **հազար ԱՄՆ դոլար**

Ոլորտ	Կապան	Զաջարան	Սյունիք	22 այլ մարզեր	Ընդամենը	Մասնաբաժինը, 2025	Մասնաբաժինը, 2024թ.	Փոփոխություն
Սոցիալական աջակցություն, այդ թվում՝ աջակցություն անհատներին (նաև աշխատողներին), համայնքներին, ենթակառուցվածքների զարգացմանը, շինարարության խթանմանը, սուբվենցիոն ծրագրերին	5,044	3,993	597	—	9,634	53.0%	44.0%	8.9%
Բուժապասարկում, առողջապահական ծառայություններ	630	573	48	301	1,552	9.0%	6.1%	2.4%
Ուսման վարձ, աջակցություն ուսումնական հաստատություններին	320	335	174	598	1,426	8.0%	9.7%	-1.9%
Սպորտի զարգացում (այդ թվում՝ «Սյունիք» ՖԱ)	1,365	115	—	266	1,745	10.0%	9.4%	0.2%
Մշակութային միջոցառումներ (այդ թվում՝ «Սյունիք» հեռուստաընկերություն)	437	14	—	—	450	2.0%	6.1%	-3.6%
Աջակցություն կազմակերպություններին և հիմնադրամներին (առողջապահական, սոցիալական, հաշմանդամներին ուղղված, հանքարդյունաբերական)	152	—	209	898	1,259	7.0%	7.2%	-0.3%
Աջակցություն անվտանգությանը	—	—	—	89	89	0.0%	6.4%	-5.9%
Օդանավի և ինքնաթիռի տեխնիկական սպասարկում	—	—	—	2,055	2,055	11.0%	11.1%	0.2%
Ընդամենը	7,947	5,030	1,028	4,206	18,211	100.0%	100.0%	-0.7%

Այս խոշոր ներդրումներին զուգահեռ՝ ԶՊՄԿ-ն շարունակում է տրամադրել ուղղակի ֆինանսական աջակցություն իր գործունեության ազդեցությանը ենթարկված համայնքներին, ներառյալ բնակիչներին վճարվող հողօգտագործման դիմաց ամսական փոխհատուցումները, ֆիզիկական անձանց տրամադրվող սոցիալական աջակցությունը և աջակցությունը պատերազմի հետևանքով տուժած անձանց: Միայն 2025թ-ին ամսական փոխհատուցումներ են ստացել հինգ համայնքների շուրջ 1,280 բնակիչ: Այս աջակցությունը ԸՆԿերության ավելի լայն նախաձեռնությունների մաս է՝ ուղղված սոցիալական ազդեցության մեղմմանը և իր գործունեության տարածքներում կենսամիջոցների պահպանմանը:

Մասկապատանեկան սպորտի զարգացմանն ուղղվող ներդրումները շարունակում են մնալ առանցքային առաջնահերթություն: Մարզական ֆեդերացիաների, դպրոցների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով՝ ԶՊՄԿ-ն աջակցում է երիտասարդների մասնակցությանը սպորտային միջոցառումներին ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Ավելի քան 1,000 երեխաներ և երիտասարդներ պարբերաբար մասնակցում են այս նախաձեռնություններին, որոնք նպաստում են նրանց ֆիզիկական ակտիվությանը, բարեկեցությանը և լիարժեք զարգացմանը երկարաժամկետ հեռանկարում:

Ընդհանուր առմամբ, ԶՊՄԿ-ի համայնքային ներդրումների պորտֆելը արտացոլում է կառուցվածքային և հավասարակշռված մոտեցում, որը համադրում է տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող լայնածավալ աջակցությունը նպատակային սոցիալական ծրագրերի հետ: Այդ ներդրումների միջոցով ԸՆԿերությունը ձգտում է արձագանքել համայնքների հրատապ կարիքներին՝ միաժամանակ նպաստելով ավելի երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացմանը և տնտեսական դիմակայունության ամրապնդմանը:

Համագործակցության հաստատում տեղական ՀԿ-ների հետ. երբ ընդհանուր նպատակները վերաժվում են համատեղ գործողությունների

2025թ-ին ԶՊՄԿ-ի ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՈՐԵԼԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՀԱՐՈՒՑԱԿՈՒՄ ԵՒՆ ՄՏԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՄՀԱԿԱԾ ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՐԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ԱՅՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԴՅՆ ՍԱՀՄԱՆՓԱԿՈՒՄ ՄԻԱՅՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՏՐԱՄԱՐԻՄԱԲ, ԴՐԱՆՔ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ՝ ԱՄՐԱԳՐԱԾ ՀԱՏԱԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱՆԵՐԸ, ԲՅՈՒՋԵՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԿԱՐԴ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ:

Այս ծրագրերը պարզապես ֆինանսական աջակցություններ չեն, այլ ծրագրեր, որոնք պահանջում են ակտիվ ներգրավվածություն՝ ապահովելու, որ ակնկալվող օգուտները ստանան այն տնային տնտեսությունները, որոնց համար դրանք նախատեսված են:

2025թ. վերջի դրությամբ այս համագործակցության ծրագրերն ապահովել են շրջափելի արդյունքներ. շուրջ 2900 անհատ և 240 տնային տնտեսություն ուղղակիորեն օգտվել են ԶՊՄԿ-ի և նրա գործընկերների համատեղ աջակցությամբ իրականացվող ծրագրերից:

Այս համագործակցության ծրագրերին զուգահեռ՝ 2025թ-ին ԶՊՄԿ-ն շարունակել է ուղղակի ֆինանսական աջակցություն տրամադրել սեփական նախաձեռնություններ իրականացնող կազմակերպություններին՝ հաճախ օգնելով ապահովել դրանց հիմնական գործունեության կամ համայնքային ծառայությունների մատուցման անընդհատությունը: Ի տարբերություն պաշտոնական գործընկերության մոդելի՝ այս համագործակցությունները հիմնված են փոխադարձ վստահության ավելի պարզ հիմքի վրա: Այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Կապանի բարեգործական հիմնադրամը և Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունը, այս աջակցության շնորհիվ շարունակել են իրականացնել համայնքների համար կարևոր ծրագրեր և ապահովել ծառայությունների շարունակական մատուցումը 2025 թվականին:

Այս մոդելի միջոցով աջակցություն է ցուցաբերվել սոցիալական հարցերի լայն շրջանակ ընդգրկող կազմակերպություններին՝ սկսած հատուկ կարիքներ ունեցող երեխաներին աջակցելուց մինչև տեղական բիզնեսի զարգացման նախաձեռնությունները, այդ թվում՝



«ՍՈՐՍ» հիմնադրամ.

սոցիալական և առողջապահական ծառայությունների մատուցում հաշմանդամություն ունեցող 135 երեխայի և աջակցություն Կապանի երեխաների զարգացման կենտրոնին՝ սարքավորումների տրամադրման և վերապատրաստման դասընթացների միջոցով, որոնցից օգտվել է 175 երեխա:



«Ժպիտների քաղաք»

աջակցություն երեխաների և մինչև 25 տարեկան երիտասարդների քաղցկեղի բուժմանը:



«Հուլյսի և հավատի օջախ»

«Առողջ մարմնում առողջ հոգի» նախագծի իրականացում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցելու նպատակով:



«Սովորեցրու հինձ Ավելին» զարգացման և վերականգնողական կենտրոն ՀԿ

վերականգնողական ծառայություններ և մասնագիտացված աջակցություն աուտիզմ ունեցող երեխաների համար:



«Իրավատեր կապանցիներ»

հինգ ջերմոցների կառուցում Աճառանում և ջերմոցային բանջարաբուծության վերաբերյալ դասընթացների կազմակերպում բնակիչների համար:



«Ֆրիներջի»

արևային էլեկտրակայանների և արևային ջրատաքացուցիչների տեղադրում Սյունիքի համայնքներում՝ վերականգնվող էներգիայի հասանելիությունն ընդլայնելու նպատակով:



«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամ

կրթական աջակցություն Սյունիքի 2,000 աշակերտի՝ ուսուցման և ուսումնառության նախաձեռնությունների միջոցով:

Ֆինանսական աջակցության բաշխման ավելի մանրամասն դիտարկումը բացահայտում է առավել լայն աշխարհագրական և գործառնական օրինաչափություններ:

~30%

Մնացած մասն ուղղվել է Կապանում և Բաջարանում գտնվող կազմակերպություններին, որպեսզի տեղական հաստատությունները շարունակեն ակտիվորեն արձագանքել համայնքի կարիքներին:

~70%

Այս նախաձեռնությունների միջոցով ԶՊՄԿ-ն աջակցում է ազգային և տեղական կազմակերպություններին՝ Սյունիքի մարզում մասնագիտացված ծառայությունների և համայնքահեն աջակցության հասանելիությունն ընդլայնելու նպատակով:

Ֆինանսական աջակցության գրեթե 70%-ը տրամադրվել է երևանում գտնվող հասարակական կազմակերպություններին, որոնք հաճախ ունեն ձևավորված ինստիտուցիոնալ կարողություններ և գործում են մարզային մասնաճյուղերի միջոցով կամ իրականացնում են ծրագրեր, որոնք ընդգրկում են Հայաստանի տարբեր համայնքներ, այդ թվում՝ ԶՊՄԿ-ի գործունեության տարածքներում գտնվող երեխաներին և խոցելի խմբերին:

Համայնքների դիմակայունության և կենսապահովման միջոցների բարելավում

GRI 413-1, GRI 413-2, SASB EM-MM-210b.1.

ԶՊՄԿ-ն գործունեություն է իրականացնում կապանում և Քաջարանում և պահպանում է երկարամյա հարաբերություններ տեղական համայնքների հետ՝ շարունակական ներգրավվածության, սոցիալական ներդրումների և զարգացման համատեղ նախաձեռնությունների միջոցով: Ընկերությունը սերտորեն համագործակցում է համայնքների, տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ համայնքների առաջնահերթությունները հասկանալու և կյանքի որակի բարելավմանը նպաստելու նպատակով:

Իր ռազմավարական զարգացման ծրագրերի համաձայն՝ ԶՊՄԿ-ն ակտիվորեն խթանում է Ընդլայնման նախագիծը: Ակնկալվում է, որ նախագիծը կնպաստի Ընկերության գործունեության ազդեցության գոտում սոցիալ-տնտեսական դիմակայունության ամրապնդմանը՝ ստեղծելով ուղղակի և մատակարարման շղթայի հետ կապված աշխատատեղեր, գնումների միջոցով խթանելով տեղական տնտեսական գործունեությունը և ապահովելով շարունակական զբաղվածության հնարավորություններ ԶՊՄԿ-ի ներկայիս աշխատողների համար:

Ընդլայնման նախագծի պլանավորման առաջընթացին զուգընթաց՝ ԶՊՄԿ-ն արձանագրեց ավելի ամուր փաստաթուղթ բազայի անհրաժեշտությունը՝ շրջակա 16 համայնքների պայմաններն ու տեսակետները փաստաթղթավորելու համար:

Այս աշխատանքներին աջակցելու նպատակով՝ ԶՊՄԿ-ն 2025թ. առաջին եռամսյակում իրականացրել է երկու համապարփակ հարցում:⁵⁰ շարքումներին մասնակցել է մոտ 1,000 տնային տնտեսություն, և արդյունքում ստացվել է արժեքավոր տեղեկատվություն կենսամիջոցների, հողի օգտագործման, պարենային անվտանգության, առողջության, ծառայությունների հասանելիության և ընդհանուր բարեկեցության վերաբերյալ:

Ստացված արդյունքներն ամրապնդել են ԶՊՄԿ-ի պատկերացումները համայնքների կարիքների և տեսակետների վերաբերյալ՝ հիմք հանդիսանալով Ընկերության գործունեության ազդեցության գոտում ներգրավվածության միջոցառումների և համայնքային զարգացման պլանավորման համար:

Արդյունքները ցույց են տալիս, որ ամուր սոցիալական կապեր և հանքարդյունաբերության ոլորտին սերտ առնչություն ունեցող համայնքները շարունակում են կենսական դեր խաղալ զբաղվածության ապահովման և մարզի զարգացման գործում: Այս առավելությունները նպաստել են դիմակայունության և սոցիալական համախմբվածության ամրապնդմանը՝ համայնքներին հնարավորություն տալով հարմարվել փոփոխվող տնտեսական և սոցիալական պայմաններին: Մինևույն ժամանակ, արդյունքներն

ընդգծում են շարունակական բնույթ ունեցող խնդիրները, որոնք չեն կարող անտեսվել, այդ թվում՝ անհավասար տնտեսական հնարավորությունները, կախվածությունը եկամտի սահմանափակ աղբյուրներից, գյուղական ենթակառուցվածքների բացերը, քրոնիկական առողջական խնդիրները, շարունակական մտահոգությունները օդի ու ջրի որակի վերաբերյալ:

Այս արդյունքները վկայում են այն մասին, որ համայնքները միաժամանակ ունեն թեղիմակայունություն, թե՛ խոցելիություն: Թեև ամուր սոցիալական ցանցերը և հանքարդյունաբերության ոլորտի հետ կապերը կարևոր հիմք են ապահովում կայունության համար, երկարաժամկետ կայուն զարգացումը կախված կլինի այն կառուցվածքային և բնապահպանական ճնշումների հաղթահարումից, որոնք շարունակում են ազդել համայնքների բարեկեցության վրա: ԶՊՄԿ-ի համար այս փաստաթուղթը տվյալներն արժեքավոր հիմք են ստեղծում ԲՄԿ առաջնահերթությունների ձևավորման, համայնքային ներդրումների ուղղորդման և առավել տեղեկացված, թիրախային ու ներառական լուծումների մշակման համար, որոնք կամրապնդեն համայնքների դիմակայունությունը և կայուն զարգացման արդյունքները:

Ձուգահեռաբար, ԶՊՄԿ-ն շարունակել է թարմացնել բոլոր ազդակիր համայնքների տարեկան ելակետային տվյալները: Տեղեկատվությունը ներկայումս վերանայման փուլում է, իսկ վերլուծությունը կենտրոնացած է կենսամիջոցների հիմնական ցուցանիշների, այդ թվում՝ վերջին երեք-չորս տարիների ժողովրդագրական միտումների, կենսապահովման գործունեության, խոցելիության, զբաղվածության, սոցիալական ենթակառուցվածքների, միգրացիոն օրինաչափությունների, խնդիրների և առաջնահերթ կարիքների վրա: Այս տվյալները միասին հիմք են հանդիսանում ժամանակի ընթացքում համայնքային կարիքներն ու ճնշումները բացահայտելու և դրանց մոնիտորինգն իրականացնելու համար:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն. մտահոգությունների ընկալում և երկխոսության ամրապնդում

GRI 2-29

ԶՊՄԿ-ն շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը դիտարկում է որպես պատասխանատու գործարար վարքագծի առանցքային տարր, որն օգնում է Ընկերությանը հասկանալ համայնքների տեսակետները, արձագանքել մտահոգություններին և կառուցել թափանցիկ հարաբերություններ:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը⁵¹ կարգավորվում է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանով (ՇԱՆՊ), որը 2025թ-ին թարմացվել է արտացոլելու համար նախատեսվող Ընդլայնման նախագիծը: Վերանայված ՇԱՆՊ-ն ավելի մեծ շեշտադրում է կատարել ըստ փուլերի ներգրավման մոտեցումների և մոնիտորինգի բարելավված համակարգերի վրա՝ նպաստելով, որ յուրաքանչյուր փոխգործակցություն՝ սկսած համայնքային հանդիպումներից մինչև հասարակական կազմակերպությունների հետ խորհրդակցությունները, համակարգված կերպով փաստաթղթավորվի և ունենա հետագա ընթացք:

2025թ-ին ԶՊՄԿ-ում շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը շարունակեց ձևավորվել որպես առավել կառուցվածքային և տվյալների վրա հիմնված գործընթաց: Այն, ինչ տարիներ առաջ սկսվել էր որպես գրանցամատյանների և ռեեստրների համակարգ, վերածվել է համայնքային փոխգործակցությունների, մտահոգությունների և ակնկալիքների կենտրոնի արձանագրության: Յուրաքանչյուր հանդիպում, հարցում և տեղայն լրացում է ընդհանուր պատկերը՝ ցույց տալով, թե ինչպես են հարակից համայնքները ընկալում հանքը, ինչպես են նրանք անցնում սոցիալական և բնապահպանական փոփոխություններով և ինչ են ակնկալում մի Ընկերությունից, որն այդքան կարևոր դեր ունի տեղական համայնքների կյանքում:



Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն. հանդիպումներ և հանրային լսումներ



⁵¹ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 6, էջ 102):

⁵² Բացառությամբ հանրային լսումների, այս հանդիպումները հիմնականում անց են կացվել շահագրգիռ կողմերի ներգրավման թիմի կողմից և չեն արտացոլում Ընկերության կողմից իրականացված բոլոր հանդիպումները: Հանդիպումների քանակը տարեցտարի փոխվում է՝ կախված ներգրավվածության անհրաժեշտությունից, իսկ ղեկավարության և գործադիր մարմինների կողմից անցկացված լրացուցիչ հանդիպումները ներառված չեն այս գրանցամատյանում:

Թափանցիկությունն ապահովելու և ռազմավարության իրականացման շուրջ բաց հաղորդակցությունն խթանելու նպատակով՝ ԶՊՄԿ-ն 2025թ-ին կապանում և Զաջարանում անց է կացրել վեց հանրային լսում: Այդ լսումների ընթացքում համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվել է տեղեկատվություն նախատեսվող նոր գործունեության, ծրագրերի զարգացումների, հնարավոր ազդեցությունների և դրանց մեղմման ուղղությամբ առաջարկվող հանձնառությունների վերաբերյալ: 22 գործող օրենսդրության և համապատասխան միջազգային ստանդարտների համաձայն անցկացված լսումները հնարավորություն են տվել շահագրգիռ կողմերին ուղղել իրենց հարցերը, բարձրաձայնել մտահոգությունները և ներկայացնել կարծիքները: Ընկերությունը փաստաթղթավորում և ռաումասսիրում է շահագրգիռ կողմերի կարծիքները և հաշվի է առնում դրանք մեղմման միջոցառումների, ներգրավման գործողությունների և ծրագրերի պլանավորման գործընթացների մշակման ժամանակ: Շահագրգիռ կողմերի ներգրավման գրանցամատյանում փաստաթղթավորված ներգրավման գործողություններից բացի, ԶՊՄԿ-ի բարձրագույն ղեկավարությունը պարբերաբար հանդիպում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և առանձին շահագրգիռ կողմերի հետ՝ համայնքների առաջնահերթ հարցերը, ձևավորվող խնդիրները և մտահոգությունները քննարկելու համար: Այս փոխգործակցությունը բարձրագույն ղեկավարությանը հնարավորություն են տալիս անմիջական պատկերացում կազմել շահագրգիռ կողմերի տեսակետների մասին և նպաստում են օպերատիվ որոշումների կայացմանը: Բարձրագույն ղեկավարությունը նաև հետևողականորեն անդրադառնում է այդ հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերին՝ դրանց լուծմանը նպաստելու և մտահոգություններին պատշաճ ուշադրություն ապահովելու համար:

Շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների արդյունքում ի հայտ են եկել մի քանի հստակ օրինաչափություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԵՏ ԿԱՊԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ

ԶՊՄԿ-ն շարունակվում է ընկալվել որպես վստահելի տեղական գործատու, և շատ բնակիչներ հայտնել են Ընկերությունում աշխատելու մեծ ցանկություն: Չնայած բազմիցս պարզաբանվել է, որ հնարավոր չէ աշխատանքի ընդունել բոլորին, և որ անվտանգ գործունեության համար անհրաժեշտ են մասնագիտական հմտություններ պահանջող հաստիքներ, ազդակիր համայնքների ակնկալիքները՝ կապված աշխատանքի տեղավորման առաջնահերթության հետ, շարունակում են բարձր մնալ:

ԿԱՌԱՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՄՍԱԿԱՆ ՓՈԽՂԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻՑ

2018թ-ին պրոգնոզի համար հողերի ձեռքբերումից հետո ներդրված ամսական փոխհատուցումների ընկալումը ժամանակավոր աջակցությունից աստիճանաբար վերածվեց օրինաչափ գումարների: Որոշ բնակիչների համար այդ վճարումներն այժմ դիտարկվում են որպես շարունակական փոխհատուցում առողջական խնդիրների կամ ծրագրի ազդեցությունների համար: Միևնույն ժամանակ հարևան գյուղերը գնալով ավելի հաճախ են ձգտում ընդգրկվել փոխհատուցան ծրագրում, ինչը արտացոլում է ինչպես տնտեսական կարիքը, այնպես էլ արդեն ընդգրկված շահառուների ստացած աջակցության ազդեցությունը: Այս խնդրի ազդեցությունը նվազեցնելու նպատակով իրականացվում են այլընտրանքային կենսամիջոցների ապահովման և համայնքային զարգացման նախաձեռնություններ՝ ծրագրից դուրս մասցած համայնքներում: Այդ միջոցառումները ներառում են օրինակ Ընկերության կողմից արևային էներգիայի նախագծի ֆինանսավորումը՝ ինչը միտված է համայնքին օգնելու հոգալ իր էլեկտրաէներգիայի կարիքները:



ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հարցումները և հանդիպումները հաստատեցին, որ խմելու և ոռոգման ջրի հասանելիության վերաբերյալ մտահոգությունները դեռևս առկա են, հատկապես պղծամբարի հարևանությամբ գտնվող գյուղական բնակավայրերում, մասնավորապես, Արծվանիկում և Սևաքարում:

ԲՆԱՊԱՀՂԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՂԻ ՈՐԱԿԸ

Բնակիչները և հասարակական կազմակերպությունները հաճախ բարձրացնում են մտահոգություններ աղտոտման և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Մի քանի հանդիպումների ընթացքում նշվել է փոշին, որը հիմնականում առաջանում է հողային աշխատանքներից, պայթեցումներից, բեռնման աշխատանքներից, փոխադրումներից և ջարդման գործընթացներից: Համայնքի որոշ անդամներ հանքարդյունաբերական գործունեության հետ կապել են նաև հողի որակի վատթարացումը, գյուղատնտեսական ապրանքների շուկայական արժեքի նվազումը և ձկան սպառման հետ կապված անվտանգության խնդիրները:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Առողջության վերաբերյալ քննարկումները, հատկապես կանանց շրջանում, մատնանշեցին խնդիրներ, որոնք դուրս են հանքի գործունեության ազդեցության շրջանակից: Տեղական առողջապահական ենթակառուցվածքների սահմանափակ հնարավորությունները, հիմնական դեղամիջոցների պակասը և խոշոր քաղաքներում բուժման բարձր արժեքը մտահոգություն են առաջացրել ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների շրջանում: Մասնակիցները հանքարդյունաբերական գործունեության հետ են կապել նաև զլխացավերը, հիպերտոնիան, շնչառական հիվանդությունները և, որոշ դեպքերում, քաղցկեղը: Միևնույն ժամանակ, 2022-2025թթ. առողջության ապահովագրության ներքին տվյալները ցույց են տվել, որ բժիշկներին դիմելու դեպքերի մեծ մասը վերաբերել է ատամնաբուժությանը (13%), սրտաբանությանը և գինեկոլոգիային (10%), ընդհանուր թերապիային և էնդոկրինոլոգիային (8%), միևնույն ուռուցքաբանության հետ կապված դիմումների ցուցանիշն ամենացածրն է եղել (3%): Այդուհանդերձ, առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցությանն առնչվող մտահոգությունները շարունակում են արդիական մնալ:

ՏԱՐԲԵՐ ՈՒՂԻՆԵՐՈՎ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՅՈՒՐԱԶԱՆՉՅՈՒՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՆՈՒՄ Է ԱՐՁԱԳԱՆՔ՝ ԻՆՉԸ ՎԿԱՅՈՒՄ Է ՀԱՆԱԳՐԳԻՒ ԿՈՂՄԵՐԻ ՇԵՏ ԱՐՉՅՈՒՆԱԿԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ՄԵՆՔ ՀԱՌՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋՆԵԹԱՑ ԳՐԱՆՑԵԼ ԲԱՑԱՀԱՅՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ: ՕՐԻՆԱԿ՝ ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ Է ԱՐԾՎԱՆԻԿԻ ՊՈՉԱՄԲԱՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ: ՈՐՈՇՎԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՓՈՇՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՒՔ ՊԱՐԵՐԱԲԱՐ ԸՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՀԱԳՐԳԻՒ ԿՈՂՄԵՐԻ ՇԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԹԱՓԱՆՅԻՆՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ՀԱՌՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՊԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

42.53

հեկտար



վերականգնված հողատարածք
2025 թվականին



Բնապահպանական կառավարում և արդյունավետություն. պատասխանատու գործունեության խթանում



88	Բնապահպանական քաղաքականություններ և միջազգային ստանդարտներ. մեր գործունեության հիմքը
89	Էներգիայի օգտագործման կառավարում և գործառնական արդյունավետության բարձրացում
90	Էներգիայի սպառում և էներգատարություն
92	Ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարում և գործառնական դիմակայունություն
98	Թափոնների ազդեցության կառավարում և ռեսուրսների արդյունավետության խթանում
100	Մթնոլորտ արտանետումների կառավարում և օդի որակի ցուցանիշների բարելավում
104	Կենսաբազմազանության վրա ազդեցության կառավարում և բնական էկոհամակարգերի պահպանություն
107	Մեր առաջընթացը Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TNFD) շրջանակում. կախվածություններ, ազդեցություններ, ռիսկեր և հնարավորություններ
110	Շրջակա միջավայրի վերականգնում և հողերի ռեկուլտիվացիա

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԶՊՄԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՇՏԱԲՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆ ՈՒՂՂԱԾ Է ՏԵՂԱԿԱՆ ՕՐԵՆՄԵՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՇԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ՝ ԷԱԿԱՆ ՇԵՏԵՎԱՆՋՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ, ԴՐԱՆՑ ՇԵՏ ԿԱՊԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԻՐԱՌԵԼԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ:

Բնապահպանական քաղաքականություններ և միջազգային ստանդարտներ. մեր գործունեության հիմքը

SASB EM-MM-160a.1

Բնապահպանական կառավարումը տարվա ընթացքում ուղղորդում և վերանայում է ԶՊՄԿ-ի հանքարդյունահանման և վերամշակման գործունեության շրջանակում ընդունվող գործառնական որոշումները: Տարվա ընթացքում ԶՊՄԿ-ի հանքարդյունահանման և վերամշակման գործունեության շրջանակներում կայացվող և վերանայվող բոլոր գործառնական որոշումների հիմքում ընկած է բնապահպանական կառավարումը: Բնապահպանական կառավարման համար պատասխանատու է Բնապահպանության բաժինը՝ առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի հարցերով զբաղվող՝ Կայուն զարգացման գծով փոխտնօրենի ղեկավարությամբ, իսկ որպես հիմք ծառայում են Ներքին քաղաքականությունները և ընթացակարգերը, որոնք սահմանում են, թե ինչպես է բացահայտվում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես են կառավարվում ռիսկերը և կիրառվում բնապահպանական պահանջները գործունեության տարբեր ուղղություններում:

Այս մոտեցումը հիմնված է ավելի քան 12 մասնագիտացված բնապահպանական կառավարման ծրագրերի վրա, որոնք ընդգրկում են այնպիսի առանցքային ոլորտներ, ինչպիսիք են թափոնները, ջուրը, հողը, օդը, վտանգավոր նյութերը և կենսաբազմազանությունը⁵³, ինչպես նաև երեք հիմնական քաղաքականությունների՝ Բնապահպանական քաղաքականության, Կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականության և կենսաբազմազանության քաղաքականության վրա:⁵⁴ Այս փաստաթղթերը միասին ձևավորում են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ շրջանակում բնապահպանական առաջնահերթությունների կառավարման հիմքը:

⁵³ Տե՛ս 2023թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 8, էջ 102):

⁵⁴ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 7, էջ 106):

⁵⁵ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 7, էջ 108):

Էներգիայի օգտագործման կառավարում և գործառնական արդյունավետության բարձրացում

GRI 3-3, GRI 302-4, SASB EM-MM-130a.1

Էներգիայի կառավարումը շարունակում է մնալ ԶՊՄԿ-ի հիմնական գործառնական խնդիրներից մեկը: ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ շարունակում է փնտրել Էներգաարդյունավետության բարձրացման հնարավորություններ, այդ թվում՝ 2026-2040թթ. Կլիմայական փոփոխության ռազմավարության մշակման և դրա սկզբունքներն ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ գործելակերպին համապատասխանեցնելու միջոցով: Ռազմավարությունը մանրամասն ներկայացված է այս Հաշվետվության «Կլիմայական փոփոխություն» բաժնում: Այն սահմանում է կարծաժամկետ և միջնաժամկետ նպատակներ, որոնք կապակցված են Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների հետ, ներառյալ.

- Էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման մեջ վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացումը,
- ավտոպարկի բարելավումը՝ էլեկտրական և հիբրիդային ավտոմեքենաների համալրման միջոցով,
- իրագործելիության ուսումնասիրության ավարտը և արևային էլեկտրակայանի կառուցման մեկնարկը:⁵⁶



⁵⁶ Ռազմավարական նպատակների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են այս Հաշվետվության «Կլիմայական փոփոխություն» բաժնում:

Էներգիայի սպառում և էներգատարություն

GRI 302-1, GRI 302-3

2025թ. ընթացքում էլեկտրաէներգիան շարունակում էր մնալ ԶՊՄԿ-ի էներգիայի հիմնական աղբյուրը՝ կազմելով ընդհանուր էներգիայի սպառման 57.8%-ը:⁵⁷ 2025թ-ին ԶՊՄԿ-ի էներգիայի ընդհանուր սպառումն աճել է 10.3%-ով՝ հիմնականում արտադրության հետ կապված ծանր փոխադրամիջոցների, մասնավորապես՝ ինքնաթափ բեռնատարների շահագործման համար դիզելային վառելիքի ավելի մեծ ծավալով սպառման հետևանքով: Դիզելային վառելիքի սպառումն աճել է 22.6%-ով 2024թ-ի համեմատ՝ արտացոլելով հանքաքարի արդյունահանման և դատարկ ապարների և տեղափոխման ավելի մեծ ծավալները, ինչպես նաև բացահանքում հողի բերրի շերտի պահեստավորման աշխատանքների ավելացումը:

Բենզինը հիմնականում օգտագործվում է թեթև տրանսպորտային միջոցներում, մինչդեռ բնական գազը կիրառվում է շենքերի ջեռուցման և գոլորշու արտադրության համար:

Էներգիայի սպառման ընդհանուր ծավալը, գիգաջոուլ, ԳՋ ^{58,59}

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
Դիզելային վառելիք	882,594.662	984,444.408	1,206,662.6
Բենզին	38,264.435	42,008.453	42,177.6
Բնական գազ	228,241.1	203,316.093	206,347.1 ⁶⁰
Գնված կամ ստացված էլեկտրաէներգիա ⁶¹	1,908,112.882	1,919,552.558	2,056,146.3
Զվերականգնվող աղբյուրներից սպառման ընդհանուր ծավալ	3,057,213.078	3,149,321.512	3,511,333.6
Վաճառված էլեկտրաէներգիա	(34,374.712)	(24,002.230)	(63,663.7)
Էներգիայի սպառման ընդհանուր ծավալ	3,022,838	3,125,319	3,447,669.9

⁵⁷ Ընկերությունը տեղում սեփական էներգիա չի արտադրում:

⁵⁸ Բոլոր խոշոր արտադրամասերի և գործունեության իրականացման տարածքների 2025թ. տվյալները հավաքագրվել և ստուգվել են Արտադրության սպասարկման բաժնի կողմից:

⁵⁹ ԶՊՄԿ-ն պլանավորում է շարունակական բարելավումներ կատարել տվյալների հավաքագրման և կառավարման գործընթացներում՝ առաջիկա տարիներին մշակելով էներգիայի սպառման գնահատման հստակ մեթոդաբանություն: Այդ գործընթացները կկազմակերպվեն արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նվազագույնի հասցնելով մարդկային միջամտությունը գործիքների և հաշվարկման մեթոդների ավտոմատացման շնորհիվ: Բացի այդ, ԶՊՄԿ-ն արդեն սկսել է դասընթացներ անցկացնել համապատասխան աշխատողների համար՝ ապահովելու համար, որ նրանք ունեն էներգիայի սպառման տվյալների ճշգրիտ ու արդյունավետ հավաքագրման և կառավարման համար անհրաժեշտ հմտությունները: Ներկայումս տվյալների հավաքագրման գործընթացը հիմնականում իրականացվում է զանգերի, հաղորդագրությունների և քննարկումների միջոցով: Թեև դեռևս չի կիրառվում մեկ միասնական ստանդարտացված մեթոդաբանություն, տվյալները ճշգրտվում են Հաշվապահական հաշվառման բաժնից ստացված տեղեկատվության հիման վրա, ինչպես նաև կիրառվում են լրացուցիչ մեխանիզմներ՝ էներգիայի սպառման տվյալների ճշգրտությունը և հուսալիությունն ապահովելու համար:

⁶⁰ 2025թ-ին բնական գազից ստացված ընդհանուր 206,347.12 ԳՋ էներգիայից 184,111.7 ԳՋ-ն (51,142 ՄՎտժ) օգտագործվել է գոլորշու արտադրության համար, իսկ 22,235.42 ԳՋ-ն (6,177 ՄՎտժ)՝ Ընկերության ենթակառուցվածքների ջեռուցման նպատակով: Արտադրված ամբողջ գոլորշին օգտագործվել է Ներքին կարիքների համար, ջեռուցման, սառեցման կամ էներգիայի այլ ձևերի վաճառք չի իրականացվել:

⁶¹ 2025թ-ին վերականգնվող աղբյուրներից ձեռք է բերվել 63,437.5 ՄՎտժ կամ 228,375 ԳՋ էլեկտրաէներգիա: Բացի այդ, գնված էլեկտրաէներգիայի 57.8%-ը ստացվել է ՀԱԷԿ-ից, որը համարվում է կանաչ էներգիա:

Էներգասպառման օրինաչափությունների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու համար ստորև ներկայացված է էներգակիրների բացվածքը և համապատասխան էներգատարությունը:

Էներգակիրներ, 2025թ.

Ցուցանիշ	ԳՋ (2023թ.)	ԳՋ արտադրված մեկ տոննա (խոնավ) խտանյութի համար (2023թ.)	ԳՋ (2024թ.)	ԳՋ արտադրված մեկ տոննա (խոնավ) խտանյութի համար (2024թ.)	ԳՋ (2025թ.)	ԳՋ արտադրված մեկ տոննա (խոնավ) խտանյութի համար (2025թ.)
Առաջնային էներգակիրներ (վառելիք)	1,149,100	5.7	1,229,769	6.7	1,455,188	7.4
Երկրորդային էներգակիրներ ⁶²	1,873,738	9.3	1,895,550	10.3	1,992,481	10.1
Ընդամենը էներգակիրներ	3,022,838	15.0	3,125,319 ⁶³	16.9	3,447,669	17.5

Արտադրությունում էներգիայի օգտագործման արդյունավետությունը գնահատելու և կառավարելու նպատակով հաշվարկվել են էներգիայի սպառման ինտենսիվության երկու հիմնական ցուցանիշներ՝ պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրանքի ծավալի հիման վրա հաշվարկված էներգիայի սպառման ինտենսիվություն և հասույթի հիման վրա հաշվարկված էներգիայի սպառման ինտենսիվություն:

Պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրանքի ծավալի հիման վրա հաշվարկված էներգիայի սպառման ինտենսիվությունը^{64,65}

Ցուցանիշ	Զափման միավոր	2023թ.	2024թ.	2025թ.
Էներգիայի սպառման ընդհանուր ծավալ	ԳՋ	3,022,838.0	3,125,319.0	3,447,669.9
Էներգիայի սպառման ինտենսիվությունը	ԳՋ/տոննա (խոնավ)	13.43	15.63	15.71
Պղնձի և մոլիբդենի խտանյութ	Տոննա (խոնավ)	225,042.0	199,934.0	219,466.7

2025թ-ին արտադրության ծավալի հիման վրա հաշվարկված էներգիայի սպառման ինտենսիվությունը կազմել է 15.71 ԳՋ/տոննա (խոնավ)՝ աճելով 0.5%-ով 2024թ. համեմատ: Այդ աճը հիմնականում պայմանավորված էր ընդհանուր էներգասպառման ավելացմամբ՝ մեծածավալ շինարարական աշխատանքների արդյունքում, ինչպես նաև պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրության ծավալի մի փոքր աճով (9.8%):

Հասույթի հիման վրա հաշվարկված էներգիայի սպառման ինտենսիվությունը

Ցուցանիշ	Զափման միավոր	2023թ.	2024թ.	2025թ.
Էներգիայի սպառման ընդհանուր ծավալ	ԳՋ	3,022,838.0	3,125,319.0	3,447,669.9
Տեսակարար էներգիայի սպառում	ԳՋ/միլիոն ԱՄՆ դոլար	3,785.62	4,382.80	4,768.4
Հասույթ ⁶⁶	Միլիոն ԱՄՆ դոլար	795.8	713.1	723.0

Էներգիայի սպառման ընդհանուր ծավալի աճն ազդեցություն է ունեցել նաև էներգիայի տեսակարար սպառման ցուցանիշի վրա, որը կազմել է 4,768.4 ԳՋ մեկ միլիոն ԱՄՆ դոլարի հաշվով՝ 2024թ. համեմատ աճելով 8.8%-ով:

Էներգախնայողության միջոցառումների որոշումն ու իրականացումը շարունակական գործընթաց է, իսկ վերոնշյալ ռազմավարական նախաձեռնությունները էներգիայի սպառման և էներգատարության աճը մեղմելու նպատակով ԶՊՄԿ-ի կողմից պլանավորված և դիտարկվող հիմնական գործողություններ են:

⁶² Այս ցուցանիշը վերահաշվարկվել է 2023թ. համար:


⁶³ Այս ցուցանիշը վերահաշվարկվել է 2024թ. համար:

⁶⁴ Այս հաշվարկի համար տվյալները հավաքագրվել են ԶՊՄԿ-ի տարբեր բաժիններից, այդ թվում՝ Արտադրության և Արտադրության սպասարկման բաժիններից: Հաշվարկների համար կիրառված մեթոդաբանությունը և փոխարկման գործակիցները համապատասխանում են ոլորտի ստանդարտներին և ստուգվել են Ընկերության ներքին աուդիտի թիմի կողմից՝ ճշգրտությունը և հետևողականությունն ապահովելու նպատակով: Էներգիայի բոլոր տեսակները ներառված են էներգատարության գործակցի հաշվարկում:

⁶⁵ 2023 թ-ին արտադրվել և վաճառվել են պղնձի, մոլիբդենի և ֆերոմոլիբդենի խտանյութեր, մինչդեռ 2025թ-ին արտադրվել և վաճառվել են միայն պղնձի և մոլիբդենի խտանյութեր:

⁶⁶ Ներկայացված է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի հասույթը:

Ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարում և գործառնական դիմակայունություն



GRI 3-3, GRI 303-1, GRI 303-2

Ջրային ռեսուրսների կառավարումը ռազմավարական առաջնություն է և ԶՊՄԿ-ի համար:⁶⁷ Ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ ծրագիրը շարունակում է ծառայել որպես ուղեցույց ջրի սակավության խնդիրներին արձագանքելու համար, և արտացոլում է ԸՆԿերության կայուն մոտեցումը ջրի օգտագործման նկատմամբ: ԸՆԿերությունը շարունակել է առաջընթաց գրանցել 2024թ. հաշվետվությունում նշված նախաձեռնությունների ուղղությամբ:⁶⁸

ԶԳԱԼԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ Ե ԳՐԱՆՑՎԵԼ ԽՏԱՑՈՒՑԻՉԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ, ՈՐԸ ՀԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ԹԱՐՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՋՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ ՆՎԱԶԵՏՆԵԼ ՄԻՆՉԵՎ 30%-ՈՎ:

Չնայած թույլտվությունների տրամադրման գործընթացում առկա խնդիրներին և օրենսդրական պահանջների որոշ փոփոխություններին՝ նախագիծն առաջ է ընթանում, և մեկնարկը նախատեսվում է 2026/2027 թվականներին: Նյուս կարևոր նախագիծը Զաջարանի կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցումն է: Թույլտվությունների տրամադրման գործընթացը նախաձեռնվել է Զաջարանի համայնքի հետ համագործակցությամբ՝ կիրառելի օրենսդրական պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Զաջարանի համայնքը

կղանա Հայաստանում առաջին համայնքը, որը կունենա կեղտաջրերի վերաօգտագործման համակարգով հագեցած ջրի մաքրման կայան: Միաժամանակ ԶՊՄԿ-ն սկսել է կոյուղաջրերի մաքրման կայանի համար անհրաժեշտ նյութերի գնման գործընթացը՝ 2026/2027 թվականներին նախատեսվող շինարարության մեկնարկին աջակցելու նպատակով:



Ջրառ

GRI 303-3

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՒՄ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՋՈՒՐԱԿԱՆԱՅՎՈՒՄ: ՏՐԱՄԱԴՐԱԿԱԾ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ: ԹՈՒՅԼՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՋՐԱՌԻ ԿԵՏԵՐԸ, ՋՐԱՌԻ ԹՈՒՅԼՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ:

2025թ-ին ԶՊՄԿ-ն օգտագործել է ջրառի 13 հիմնական կետ տեխնիկական գործունեության և կոմունալ կարիքների ապահովման համար: Ջրառի հիմնական կետերն են եղել Մականաջուրը, Սակքար 1-ը և 2-ը, Փոխորոտը, մի քանի կետեր Ողջի գետի երկայնքով և Գեղիի ջրամբարը:

2025թ-ին ԸՆԿերությունը մակերևութային ջրառի կետերից վերցրել է ընդհանուր առմամբ 69,074.9 մեգալիտր ջուր⁶⁹, իսկ ջրի հիմնական սպառումը բաժին է ընկել հարստացուցիչ ֆաբրիկային: Ջրի մնացած մասը սպառվել է բացահայտ շահագործման, էներգետիկայի, հանքաքարի ջարդման և փոխադրման արտադրամասերի և այլ օժանդակ գործառույթների համար: Վերցված ամբողջ ջուրը դասակարգվել է որպես քաղցրահամ ջուր՝ 1,000 մգ/լ կամ պակաս լուծված ալինո. նյութերի ընդհանուր քանակով:

Ջրառի ընդհանուր ծավալը, մեգալիտրերով⁷¹

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
Ջրառի ընդհանուր ծավալ ⁷²	47,164.0	63,159.0	69,297.5
Մակերևութային ջրեր՝ Ներառյալ ճահիճները, գետերը, լճերը	47,027.0	62,996.0	69,074.9
Երրորդ կողմի պատկանող ջուր (քաղաքային և ջրամատակարարման այլ համակարգեր)	137.0	163.0	222.6

Երրորդ կողմերին պատկանող աղբյուրներից գնվող ջրի ծավալի աճը հիմնականում պայմանավորված է որոշ օբյեկտների, օրինակ՝ Կապանի պահեստի և տնկարանի, ընդլայնմամբ (տես «Անտառվերականգնում. արտաքին համագործակցություններ և այլ նախաձեռնություններ» բաժինը), որտեղ ոռոգումն իրականացվում է խմելու ջրով: ԶՊՄԿ-ն ընդլայնել է նաև իր Կապանի բազան և ձեռք է բերել Նոր աշխատանքային տարածք: Բացի այդ, Երևանում խմելու ջրի սպառումն աճել է՝ հիմնականում պայմանավորված գրասենյակի աշխատողների թվի ավելացմամբ՝ 2024թ. համեմատ:

Ռիսկերի վրա հիմնված կառավարման մոտեցման և ISO 14001:2015 հավաստագրման շրջանակում ԶՊՄԿ-ն շարունակել է կիրառել 5x5 ռիսկերի մատրիցը՝ ջրառի կետերը գնահատելու և ջրի էլակետային մակարդակի անբավարարությունը որոշելու համար՝ զուգահեռաբար իրականացնելով ջրի որակի ամսական մոնիտորինգ:

Թեև ԸՆԿերության գործունեության տարածքներից ոչ մեկը չի դասակարգվել որպես ջրի էլակետային մակարդակի բարձր (40%-80%) կամ շատ բարձր (>80%) անբավարարություն ունեցող, Ողջի գետի ջրառի կետերում արձանագրվել է չափավոր անբավարարություն (գերազանցելով 20%-ը): Բացի այդ, ևս երկու ջրառի կետում՝ Գեղիում (և Գեղիի ջրամբարում) և Սակքար 1-ում ջրի էլակետային մակարդակը մոտ է եղել չափավոր անբավարարության սահմանաչափին՝ կազմելով համապատասխանաբար 18.15% և 19.81%:⁷⁰

69,297.5

մեգալիտր

2025 թվականին վերցված ջրի ընդհանուր ծավալը

⁶⁷ Մանրամասները ներկայացված են 2024թ. Կայուն զարգացման հաշվետվությունում (բաժին 7, էջ 111):

⁶⁸ Տես 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 7, էջ 112):

⁶⁹ Հաշվարկն իրականացվել է ԶՊՄԿ-ի ջրօգտագործման թույլտվությունների տվյալների հիման վրա:

⁷⁰ Ջրի անբավարարությունը հաշվարկվել է ջրի հասանելիության և ջրօգտագործման թույլտվությունների տվյալների հիման վրա:

⁷¹ Ստորերկրյա կամ արտադրական ջուր չի օգտագործվել:

⁷² 2023թ. և 2024թ. առաջին եռամսյակի հաշվարկները հիմնված են փաստացի ջրառի տվյալների վրա: 2024թ. երրորդ եռամսյակից սկսած՝ ծավալները հաշվարկվել են ԶՊՄԿ-ի ջրօգտագործման թույլտվության տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով առցանց ջրաչափական սարքերի կիրառման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները:

Արտանետվող ջրի ծավալ

GRI 303-4, SASB EM-MM-140a.1

Կեղտաջրերի արտահոսքը կարգավորվում է ազգային ստանդարտներին համապատասխան⁷³ և հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության ջրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված մեթոդաբանության կիրառմամբ:⁷⁴ Արտանետման առավելագույն թույլատրելի չափը հաշվարկելիս հաշվի են առնվել Աճանան, Նորաշենիկ և Ողջի գետերի բնութագրերը և հիդրոլոգիան:

2025թ-ին ջրի արտանետման ընդհանուր ծավալը կազմել է մոտավորապես 35,316.5 մեգալիտր: Արտանետված ջրի հիմնական մասն արտանետվել է մակերևութային ջրային օբյեկտներ՝ ջրահեռացման սահմանված նորմերին և բնապահպանական օրենսդրությանը համապատասխան: Արտանետման աղբյուրները ներառում են մի շարք արտադրական և քաղաքային կետեր, որոնցից յուրաքանչյուրի համար իրականացվում է կեղտաջրերի որակի պարբերական մոնիտորինգ:

Արտանետված ջրի ընդհանուր ծավալը, մեգալիտրերով⁷⁵

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
Արտանետված ջրի ընդհանուր ծավալն ըստ վերջնակետի	36,692.0	39,318.0	35,316.5
Մակերևութային ջրեր, ներառյալ.	36,654.0	39,270.0	35,243.3
— Քաղցրահամ ջուր	23.0	23.0	22.7
— Այլ ջուր	36,631.0	39,247.0	35,220.6
Երրորդ կողմին պատկանող ջուր	39.0	48.0	73.3



⁷³ Ջրօգտագործման և ջրահեռացման անհատական ընթացիկ նորմեր N^o 88, որոնք վավեր են մինչև 2027թ.:

⁷⁴ Ընկերության ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրօգտագործման և ջրահեռացման նորմերը գերազանցելու դեպքում Ընկերությունը կատարում է հավելավճար պետական բյուջե՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան՝ <https://www.artis.am>:

⁷⁵ Արժվանիկի պոչամբարից Աճանան գետ թափվող կեղտաջրերի ծավալը չափվել և որոշվել է ջրաչափի միջոցով: Մնացած բոլոր դեպքերում ջրահեռացման ծավալը որոշվել է հաշվարկների միջոցով՝ օգտագործված ջրի ծավալների հիման վրա:

⁷⁶ Այս ցուցանիշի աճը պայմանավորված է Կապանի և Երևանի գրասենյակներում աշխատողների թվի ավելացմամբ:

⁷⁷ 2025թ-ին վճարված ջրառի և արտանետման հետ կապված բնապահպանական վճարները և տուրքերը ներկայացված են [Հավելված 3-ում](#):

Հիմնական արտանետման կետը Արժվանիկի պոչամբարն է, որտեղ ջուրը 4-րդ թունելից հոսում է Աճանան գետ: Օրենսդրության պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու համար Ընկերության արտադրական գործընթացով անցնող այս ջուրը ստուգվում է տարբեր աղտոտիչների առկայության տեսանկյունից: Գեղի գետ արտանետվում են Գեղիի 1-ին պոմպակայանի հովացնող համակարգի ջրերը, իսկ Լեռնաձորի

առու՝ 2-րդ պոմպակայանի հովացնող համակարգի ջրերը: Ողջի գետ է արտանետվում նաև հանքանյութի նմուշների կտրման տեղամասի մեխանիկական մաքրումից առաջացած ջուրը և կենցաղային կեղտաջրերը Քաջարանի և Կապանի կոյուղու կոլեկտորներից:

Արտանետված ջրի ընդհանուր ծավալի բացվածքը, մեգալիտրերով

Արտանետման կետեր	Կեղտաջրերի կատեգորիա	Արտանետման վերաբերյալ տեղեկատվություն	Կեղտաջրերի ծավալը 2024թ-ին	Կեղտաջրերի ծավալը 2025թ-ին
Աճանան գետ (Ողջի գետի Նորաշենիկ վտակ)	Այլ կարգի ջուր (տեխնոլոգիական կեղտաջրեր)	Արժվանիկի պոչամբարի պարզվածք	39,248.0	35,220.6
Գեղի գետ	Ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	1-ին վերելքի պոմպակայանի հովացման համակարգի ջրերի ավելցուկ	11.0	11.0
Լեռնաձորի առու	Ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	2-րդ վերելքի պոմպակայանի հովացման համակարգի ջրերի ավելցուկ	11.0	11.0
Ողջի գետ	Արդյունաբերական ստանդարտ մաքուր քաղցրահամ ջուր	Հանքանյութի նմուշների կտրման տեղամասի մեխանիկական մաքրումից հետո արտանետված ջուր (հավելյալ մաքրում չի պահանջվում)	1.0	0.7
Քաջարանի կոյուղու կոլեկտոր	Արդյունաբերական և կենցաղային, պահանջվում է մաքրում	Կենցաղային կեղտաջրեր	20.2	25.1
Կապանի և Երևանի կոյուղու կոլեկտոր ⁷⁶	Կենցաղային, պահանջվում է մաքրում	Կենցաղային կեղտաջրեր	27.6	48.2
Արտանետված ջրի ընդհանուր ծավալը ⁷⁷			39,318.0	35,316.5

Ջրի որակի մոնիտորինգ և համապատասխանության ապահովում

GRI 2-27, SASB EM-MM-140a.2

Արտանետվող ջրի որակի արդյունավետ վերահսկողությանը նպաստելու նպատակով Ընկերությունը համագործակցում է չորս պատասխանատու կազմակերպությունների հետ: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն (ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարող ընկերություն) և Զաջարանի կոմունալ ծառայությունը վերահսկում են քաղաքային և կենցաղային կեղտաջրերի որակը, իսկ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերահսկում են արդյունաբերական կեղտաջրերի որակը:

Թեև ՀՀ օրենսդրությամբ նման պահանջ սահմանված չէ, ԶՊՄԿ-ն հաշվետու տարվա ընթացքում իր արտադրական տարածքներում ամսական կտրվածքով իրականացրել է խմելու ջրի որակի մոնիտորինգ: Մոնիտորինգն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի աշխատակիցների կողմից՝ ԶՊՄԿ-ի Բնապահպանության բաժնի մասնագետների մասնակցությամբ, ընդգրկելով ինչպես արտաքին մատակարարման կետերը, այնպես էլ Ընկերության տարածքում գտնվող օբյեկտները: Նախաձեռնության նպատակն է ապահովել Ընկերության օբյեկտներում օգտագործվող ջրի որակն ու անվտանգությունը:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ նմուշառման բոլոր կետերում ջրի որակը հիմնականում համապատասխանում է սահմանված հիգիենայի նորմերին: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում, մասնավորապես՝ ընդհանուր կոլիֆորմ բակտերիաների մասով, պատասխանատու բաժիններն անհապաղ տեղեկացվել են և ջրի տվյալ աբյուրների օգտագործումն անմիջապես դադարեցվել է:

Սյուն կողմից, կեղտաջրերի որակի մոնիտորինգն իրականացվել է ընտրանքային հիմունքով: Աճանա գետ արտանետումները տարվա ընթացքում թեստավորվել են 66 անգամ, և շահագործման պայմաններից կախված՝ երբեմն արձանագրվել են մոլիբդենի, մանգանի, երկաթի և սուլֆատային իոնների թույլատրելի սահմանաչափի գերազանցումներ: «Կտրման» տեղամասից Ողջի գետ կատարվող արտանետումների մոնիտորինգ իրականացվել է 4 անգամ:

Աճանան գետ արտանետվող կեղտաջրերի ծավալը 249 օրվա ընթացքում վերահսկվել է ամեն օր, և գերազանցումներ չեն արձանագրվել: 4-րդ թունելով Աճանան գետ ընդհանուր արտանետումների ծավալը կազմել է 35,220.6 մեգալիտր՝ 49,280 մեգալիտր թույլատրելի սահմանաչափի համեմատ:

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՋՐԱՌԻ ԾԱՎԱՆՆԵՐԸ ԲՈՒՈՐ ՋՐԱՌԻ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՍԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՉԵՆ ՀԱՓՎԵԼ: ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ՋՐԱՌԻ ԿԵՏԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՋՐԻ ՈՐԱԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՆԻՏՈՐԻՆԳ, ԱՅՂԻ ԹՎՈՒՄ՝ 10 ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ՈՂՋԻԻ ՋՐԱՌԻ ԿԵՏԵՐՈՒՄ ԵՎ 11 ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԷ ՈՂՋԻ-2-Ի ՋՐԱՌԻ ԿԵՏԵՐՈՒՄ, ՈՐՈՆՑ ԱՐԴՅՈՒՆԵՐՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՀԱՅՏԱԲԵՐՎԵԼ: ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՍՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏՎՅԱՆՆԵՐԸ ՆԵՐՎԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՂԱՐԱՎԱՅՆՈՐԵՆ ՀԱՍԱՆԵԻ ԵՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ:

Ընդհանուր առմամբ, 2025թ-ին Ընկերությունը խմելու ջրի մոնիտորինգի համար ծախսել է մոտ

\$52,000⁷⁸



Ջրի օգտագործում և ջրի սպառում

GRI 303-5, SASB EM-MM-140a.1

2025թ-ին ԶՊՄԿ-ի գործունեության շրջանակում ջրի ընդհանուր սպառումը կազմել է 33,980.95 մեգալիտր՝ հաշվարկված որպես ընդհանուր ջրադի և ընդհանուր արտանետման տարբերություն:⁷⁹

Պղնձի և մոլիբդենի խտանյութերի արտադրության ծավալի հիման վրա հաշվարկված ջրատարություն

Ցուցանիշ	Չափման միավոր	2023թ.	2024թ.	2025թ.
Ջրի սպառման ընդհանուր ծավալ	Մեգալիտր	10,472	23,840	33,981
Ջրատարություն	Մեգալիտր/տոննա (խոնավ)	0.05	0.12	0.15
Պղնձի և մոլիբդենի խտանյութեր	Տոննա (խոնավ)	225,042.0	199,934.0	219,466.7

Հասույթի հիման վրա հաշվարկված ջրատարություն

Ցուցանիշ	Չափման միավոր	2023թ.	2024թ.	2025թ.
Ջրի սպառման ընդհանուր ծավալ	Մեգալիտր	10,472	23,840	33,981
Տեսակարար ջրի սպառում	Մեգալիտր/տոննա (խոնավ)	13.2	33.4	47.0
Հասույթ	Միլիոն ԱՄՆ դոլար	795.8	713.1	723.0

Ջրի անբավարարություն ունեցող տարածքներում ջրի սպառումը կազմել է համապատասխան գետավազանների ջրային ռեսուրսների ընդհանուր ծավալի մոտ 5.3%-ը՝ 2024թ-ի մոտ 4.4%-ի համեմատ: Այս գնահատականը հիմնված է 33,980,950.58 մ³ ջրի սպառման ընդհանուր ծավալի վրա՝ բոլոր համապատասխան գետերի և վտակների հասանելի ջրային ռեսուրսների գնահատված 642,344,947.2 մ³ ծավալի համեմատ:⁸⁰

Ջրի սպառումն ուղեկցվում է հանքարդյունահանման և վերամշակման գործընթացների արդյունքում ջրի մի շարք անվերականգնելի կորուստներով, որոնք ներառում են՝

- ▶ փոշու նստեցման համար օգտագործվող ջուրը,
- ▶ հորատման և վերամշակման ընթացքում գոլորշու արտադրման համակարգերում առաջացող կորուստները,
- ▶ պղջամբարից գոլորշիացման և արտահոսքի հետևանքով առաջացող կորուստները,
- ▶ պղջամբար ներծծվող ջուրը,
- ▶ վերջնական խտանյութերում պարունակվող ջուրը,
- ▶ կանաչ տարածքների ոռոգումը,
- ▶ տեխնոլոգիական կորուստները, այդ թվում՝ արտադրական գործընթացներից առաջացող մոտ 3% կորուստները և հիդրոմաքրման աշխատանքներից առաջացող 6%-6.5% կորուստները:⁸¹

⁷⁹ Ողջ արտանետվող ջուրն ի վերջո վերադառնում է Ողջի գետավազան, այդ իսկ պատճառով, տարբեր ջրհավաք ավազանների միջև ջրի տեղափոխումը չի դիտարկվում որպես ջրի սպառում:

⁸⁰ Ջրի հասանելիությունը գնահատվել է երեք գետավազաններում ջրի սպառման հիման վրա, մինչդեռ 2024թ-ին 535,995 մեգալիտր սպառման ծավալը հաշվարկվել էր երկու գետավազանների տվյալների հիման վրա:

⁸¹ Ջրի սպառման բաղադրիչները, որոնցից են գոլորշիացման կորուստները և արտադրանքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարունակվող ջուրը, առանձին չեն չափվում, ուստի այդ տվյալները հասանելի չեն:

Թափոնների ազդեցության կառավարում և ռեսուրսների արդյունավետության խթանում

GRI 3-3, GRI 306-1, GRI 306-2, SASB EM-MM-150a.10

Թափոնների կառավարումն առանցքային առաջնահերթություն է ցանկացած հանքարդյունաբերական գործունեության համար և շարունակում է մնալ ինչպես մարտահրավեր, այնպես էլ ջՊՄԿ-ի պատասխանատու բնապահպանական գործունեության մոտեցման անբաժանելի մաս։ ԵՊՄԿ-ն ձգտում է կառավարել թափոնների հետ կապված ազդեցությունը կառուցվածքային կառավարման համակարգի միջոցով, որը համապատասխանում է կիրառելի պետական պահանջներին և հիմնված է միջազգային չափանիշների, այդ թվում՝ ISO 14001 և ՄՖԱ ստանդարտների վրա։

Ընկերության մոտեցումն առաջնորդվում է Թափոնների կառավարման ծրագրով և հիմնավորվում է Թափոնների կառավարման մատյանի և Թափոնների հաշվառման գրանցամատյանի տվյալներով։

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը գնահատելու և կառավարելու նպատակով՝ ԵՊՄԿ-ն կիրառում է ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, օգտագործելով 5x5 ռիսկերի մատրիցը՝ իր գործունեության ողջ ընթացքում թափոնների հոսքերի հետ կապված ռիսկերը բացահայտելու, գնահատելու և ըստ առաջնահերթության դասակարգելու համար։

Թափոնների առաջացում և օգտահանում

GRI 306-3, GRI 306-4, SASB EM-MM-150a.7, SASB EM-MM-150a.8

ԵՊՄԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԱՄՍԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ։ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ԿԵՏՐՈՆԱՅՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄ՝ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՇՈՒՔԵՐԻ ԾՇԳՐԻՏ շՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ շԵՏ շԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ։

2025թ-ին առաջացած թափոնների ընդհանուր ծավալն աճել է 30.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված էր արդյունահանված լեռնային զանգվածի 38% աճով⁸², որը պարունակում էր դատարկ ապարի ավելի մեծ ծավալ։

Թափոնների առաջացման ընդհանուր աճը պայմանավորված է եղել վտանգավոր թափոնների 17.4% և ոչ վտանգավոր թափոնների 44% աճով։ Հատկանշական է, որ հաշվետու տարում թափոնների կազմը փոխվել է. 2025թ-ին ոչ վտանգավոր թափոնները կազմել են առաջացած թափոնների ընդհանուր ծավալի մոտ 53%-ը, մինչդեռ 2023թ-ին և 2024թ-ին առավել մեծ մասնաբաժին կազմել էին վտանգավոր թափոնները՝ համապատասխանաբար մոտ 58% և 52%։

Թափոնների առաջացումն ըստ տեսակների, տոննա

Թափոնի տեսակը	2023թ.	2024թ.	2025թ.
վտանգավոր թափոններ	21,232,189	19,153,967	22,479,930
Արտադրության և սպառման թափոններ	15,152,336	17,789,918	25,611,926
Թափոնների ընդհանուր ծավալ	36,384,525	36,943,886	48,091,856

ՉՆԱՅԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ԱՎԵԼԱՑՄԱՆԸ՝ շԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՊՄԿ-Ն ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՇԵՌԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ։

2025թ-ին հեռացվել են 7,623 տոննա ընդհանուր ծավալով թափոններ՝ օգտահանման տարբեր եղանակների, այդ թվում՝ վերամշակման և կրկնակի օգտագործման նախապատրաստման միջոցով։ Դա էական աճ է 2024թ-ի համեմատ, երբ հեռացվել էր 2,086 տոննա թափոն՝ բարելավումներ արձանագրելով վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնների հոսքերում։

Օգտահանման ուղղված թափոններ, տոննա

Թափոնի տեսակը	2023թ.	2024թ.	2025թ.
վտանգավոր թափոններ	1,733.6	1,887.3	2,815.3
Նախապատրաստում վերաօգտագործման	137.3	29.5	16.8
վերամշակում	1,596.3	1,858.0	1,979.7
Օգտահանման այլ գործողություններ	—	—	818.8
Արտադրության և սպառման թափոններ	1,879.2	198.8	4,807.6
Նախապատրաստում վերաօգտագործման	279.0	166.5	142.4
վերամշակում	1,600.3	32.3	116.3
Օգտահանման այլ գործողություններ	—	—	4,548.9
Այլ	3,612.8	2,086.1	7,622.8

Օգտահանման ուղղված թափոնների ծավալի զգալի աճը մեծապես պայմանավորված է եղել 2025թ-ին վերականգնման այլ գործընթացների ներդրմամբ, ինչն արտացոլում է մետաղ պարունակող թափոնների հոսքերի համար օգտահանման գործնական ուղիներ գտնելու ուղղությամբ ԵՊՄԿ-ի կոմիից տարվող աշխատանքները։ Այդ հոսքերը ներառում էին ինչպես վտանգավոր թափոններ, օրինակ՝ չտեսակավորված սև մետաղներ, այնպես էլ ոչ վտանգավոր թափոններ, օրինակ՝ չաղտոտված ալյումինե պողպատի ջարդոնը։

Շարունակելով 2024 թվականի Կայուն զարգացման հաշվետվությունում⁸³ ստանձնած հանձնառությունների իրականացումը՝ ԵՊՄԿ-ն 2025 թվականին էական առաջընթաց է գրանցել վերամշակման ցուցանիշների բարելավման և փայտային թափոնների վերաօգտագործման ուղիների ընդլայնման ուղղությամբ։ Փայտի թափոնների կրկնակի օգտագործումն էականորեն աճել է՝ 2024թ-ի 28.8 տոննայից շահանքով 110.6 տոննայի 2025թ-ին։⁸⁴ Փայտի թափոնները հավաքվել են շինհրապարակներից, բուսածածկ տարածքներից և գործունեության տարածքներում իրականացվող մաքրման աշխատանքներից, ապա փոխանցվել և օգտագործվել են Զաջարան համայնքի, ինչպես նաև ԵՊՄԿ-ի աշխատողների կողմից՝ իրենց կարիքների համար։

Նյութեր և թափոններ

SASB EM-MM-150a.9

Բնապահպանության բաժնի տվյալների համաձայն՝ 2025թ-ին արձանագրվել է վտանգավոր նյութերի և թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր թվով 8 պատահար։ Բոլոր պատահարների մասին՝ օրենսդրության պահանջներին համապատասխան, տեղեկացվել է ՀՀ Սյունիքի մարզային բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը։

Պատահարները հիմնականում կապված էին պոչատարի արտահոսքի, սարքավորումների խափանումների, վառելիքի արտահոսքերի հետ և օպերատիվ կերպով կարգավորվել են՝ առաջնահերթություն տալով դրանց արդյունավետ տեղայնացմանը, հետևանքների վերացմանը և կրկնության կանխարգելմանը։

⁸² Արդյունահանված լեռնային զանգվածը կազմել է 44,214,250 տոննա (խոնավ)՝ 2024թ-ի 32,043,174 տոննայի (խոնավ) համեմատ։

⁸³ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 7, էջ 118)։

⁸⁴ Վերամշակված և կրկնակի օգտագործված թափոնների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է այս հաշվետվության [Հավելված 3-ում](#)։

Մթնոլորտ արտանետումների կառավարում և օդի որակի ցուցանիշների բարելավում

GRI 3-3

Մթնոլորտ արտանետումների կրճատման միջոցառումները ներառված են գործառնական բարելավման ծրագրերում, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվում են լրացուցիչ միջոցառումներ: Առանձին թիմը՝ Բնապահպանության բաժնի հետ սերտ համագործակցությամբ, վերահսկում է փոշեգոյացման գործընթացը՝ Ընկերության գործունեության ողջ ընթացքում: Մթնոլորտ արտանետումների մոնիտորինգն իրականացվում է Օդի որակի կառավարման ծրագրի և Աղտոտման կանխարգելման կառավարման ծրագրի համաձայն՝ ապահովելով հնարավոր խնդիրների համակարգված վերահսկողություն և ժամանակին արձագանք:⁸⁵

Օդի որակի կառավարման ուղղությամբ ԶՊՄԿ-ի հանձնառությունները լրացուցիչ ամրապնդվում են Նոր մշակված Կլիմայակայան փոփոխության 2026-2040թթ. ռազմավարության սկզբունքների ընդունմամբ:

Մթնոլորտ արտանետումների ցուցանիշներ

GRI 305-7, SASB EM-MM-120a.1

Մթնոլորտ արտանետումների վերաբերյալ տվյալների հավաքագրման և հաշվարկման համար կիրառվել է համակցված մոտեցում: Որոշ դեպքերում արտանետումները չափվել են ուղղակիորեն, իսկ մյուս դեպքերում կիրառվել են ինժեներական հաշվարկներ: Նորմատիվներով թույլատրելի սահմանաչափերը դիտարկվել են տեղական կանոնակարգերին համապատասխան: Որպես ստանդարտ գործելակերպ՝ ԶՊՄԿ-ն որպես հիմք օգտագործում է արտանետումների ազգային ստանդարտները և Մթնոլորտ արտանետումների թուլյտվությամբ սահմանված սահմանաչափերը՝ ապահովելով ամբողջական համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այնուհետև, անհրաժեշտության դեպքում, գնահատում է իր գործունեության համապատասխանությունը միջազգային ուղեցույցներին և չափանիշներին:

ԹԵԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԵՎՍ ՊԱՇՏՈՆԱԴԵՍ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԶԷ, ԶՊՄԿ-Ն ԱՐԴԵՆ ՍԿՍԵԼ Է ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ՌԻԴՂԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼ ԻՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ: ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԲԱՑԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, ԱՅՌ ԹՎՈՒՄ՝ ԱՎՏՈՊԱՐԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈՄԵԶԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ:⁸⁶

ՏԱՐԵԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ 2025Թ-ԻՆ ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ ԿԱԶՄԵԼ Է 878.44 ՏՈՆՆԱ՝ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄԱՏ ՆՎԱԶԵԼՈՎ 1.5%-ՈՎ: ԱՅՌ ՆՎԱԶՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՐ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ՓՈՇՈՒ ՎԵՐԱՀԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐՈՎ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆՆ ՌԻԴՂԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ:

Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի ծավալը, տոննա⁸⁷

Նյութ	2023թ.	2024թ.	2025թ.
Ազոտի օքսիդներ (NOx)	59.6	54.0	55.9
Օձմբի երկօքսիդ (SOx)	0.090	0.056	0.073
Կայուն օրգանական աղտոտիչ նյութեր (POPs)	—	—	—
Ցնդող օրգանական միացություններ (VOCs)	0.1	0.1	0.1
Օդի վտանգավոր աղտոտիչներ (HAP)	0.000006400	0.000003800	0.000005286
Պինդ մասնիկներ (PM)	694.5	684.4	670.5
Ածխածնի օքսիդ (CO)	154.4	150.3	148.3
Այլ աղտոտող արտանետումներ ⁸⁸	4.3	2.8	3.6
Ընդամենը արտանետումներ	912.9	891.6	878.4

Օզոնային շերտը քայքայող նյութերի արտանետումներ

GRI 305-6

Օզոնային շերտի պաշտպանությունը շարունակում է մնալ պատասխանատու բնապահպանական կառավարման կարևոր բաղադրիչը, քանի որ օզոնային շերտը քայքայող նյութերը (ՕՇՔՆ) վնասում են վնասակար ուլտրամանուշակագույն (UV-B) ճառագայթումից պաշտպանող երկրի բնական պաշտպանիչ շերտը: Այդ պատճառով դրանց օգտագործումը կարգավորվում է միջազգային մակարդակով՝ Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրության շրջանակում, որը սահմանում է այդ նյութերի շրջանառությունից փուլային դուրսբերման գլոբալ հիմունքները:

2025թ-ին ԶՊՄԿ-ն չի արտադրել և չի ոչնչացրել օզոնային շերտը քայքայող որևէ նյութ: Հաշվետու տարվա ընթացքում օգտագործված միակ ՕՇՔՆ եղել է HCFC-22-ը (R-22 սառնագենտ), որի քիմիական անվանումն է մոնոքլորդիֆտորմեթան (CAS No. 75-45-6): Այս նյութի մթնոլորտում կյանքի տևողությունը մոտավորապես 11.9 տարի է, իսկ օզոնաքայքայիչ ներուժը (ՕՆ՝) 0.055, ըստ Մոնրեալի արձանագրության (0.04՝ Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) 2011թ. տվյալներով): Այն ունի նաև գլոբալ տաքացման ներուժ (ԳՏՆ)՝ 1,810՝, ըստ Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) 4-րդ գնահատման զեկույցի (AR4), և 1,760, ըստ 5-րդ գնահատման զեկույցի (AR5):

HCFC-22-ի օգտագործումը սահմանափակվել է վեց միջին չափի օդորակիչների սպասարկմամբ, իսկ հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր սպառումը կազմել է 5.284 կգ:⁸⁹

Քանի որ HCFC-22-ն ունի զրոյից բարձր օզոնաքայքայիչ ներուժ և աստիճանաբար դուրս է բերվում օգտագործումից համաշխարհային մակարդակով, ԶՊՄԿ-ն հանձնառու է փուլային կերպով դադարեցնել R-22 սառնագենտ պարունակող սարքավորումների օգտագործումը՝ միջազգային պարտավորություններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Այս մոտեցումը վկայում է Ընկերության հանձնառության մասին՝ պահպանել օրենսդրական պահանջները և ապահովել շրջակա միջավայրի պատասխանատու կառավարումը միջազգային բնապահպանական համաձայնագրերով կարգավորվող ոլորտներում:

⁸⁵ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 7, էջ 120):

⁸⁶ Կլիմայի փոփոխության ռազմավարության վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են այս հաշվետվության «Կլիմայական փոփոխություն» բաժնում:

⁸⁷ Ներկայումս մենք չունենք արտանետումների՝ ըստ առանձին տարածքների բաշխումն արտացոլող տվյալներ: Այդ տվյալները հաշվարկվում են մեր կողմից վերամշակվող հանքաքարի ծավալի հիման վրա:

⁸⁸ Մնդիկի (Hg) և կապարի (Pb) մոնիտորինգ չի իրականացվում:

⁸⁹ GRI 305-6 և Մոնրեալի արձանագրության մեթոդաբանության համաձայն՝ ՕՇՔՆ արտանետումները հաշվարկվել են CFC-11 համարժեքով: Կիրառելով ՕՆ համապատասխան գործակիցը՝ սա համապատասխանում է ՕԲՕՕԶ9 տոննա CFC-11 համարժեքին, ինչը հավասար է մոտավորապես 0.29 կգ CFC-11:

Դեպքի ուսումնասիրություն. գործառնական գերազանցության ապահովում Արծվանիկի պոչամբարում

GRI 3 3, SASB EM MM 540a.1, SASB EM MM 540a.2

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՈՒԱՅԻՆ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԾՎԱՆԻԿԻ ԴՈՉԱՄԲԱՐՈՑ⁹⁰ ԱՌԱՆՑԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ՈՐՊԵՍ ՀՈԿՏԱՅԻՆ ՏԻՂԻ ԴՈՉԱՄԲԱՐ, ՈՐԸ ԿԱՌՈՒՑՎԵԼ Է ՎԵՐԸՆԹԱՅ ԵՂԱՆԱԿՈՎ, ԱՅՆ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՈՏ 312 ՄԻԼԻՈՆ Մ³ ԴՈՉԱՆԵ՝ ՄՈՏ 538 ՄԻԼԻՈՆ Մ³ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ:

Պոչամբարների կառավարման գլոբալ արդյունաբերական ստանդարտի (GISTM) համաձայն՝ Արծվանիկը դասակարգվում է որպես ծայրահեղ ծանր հետևանքներով պոչամբար, ինչը նշանակում է, որ հնարավոր վթարը կարող է աղետալի հետևանքներ ունենալ մարդկանց, շրջակա միջավայրի և եկթակառուցվածքների համար: Այս դասակարգումն ուղղորդում է պոչամբարի կառավարման յուրաքանչյուր ասպեկտի նկատմամբ մեր մոտեցումը՝ ուժեղացված վերահսկողություն, շարունակական մոնիտորինգ և երկարաժամկետ պատասխանատվություն:

Մեր ընթացիկ ծրագիրը մեկնարկել է 2023թ-ին, երբ «Knight Piésold»-ի կողմից իրականացված անկախ տեխնիկական ուսումնասիրությունը բացահայտեց պոչամբարի պատվարի ամրաբեռնման միջոցառումների անհրաժեշտությունը՝ կառույցի երկարաժամկետ կայունությունն ապահովելու համար: Սա որպես առանձին ինժեներական առաջադրանք դիտարկելու փոխարեն՝ մենք այն օգտագործեցինք որպես խթան՝ պոչամբարի շուրջ ձևավորված ավելի լայն համակարգը ամրապնդելու համար, այդ թվում՝ գնահատման, մոնիտորինգի և կառավարման գործընթացները:

Դա նշանավորեց անցումը պարբերական միջամտություններից դեպի առավել ինտեգրված, ռիսկերի վրա հիմնված մոտեցման, որը համապատասխանում է ծայրահեղ ծանր հետևանքներով օբյեկտների վերաբերյալ միջազգային պահանջներին:

Մենք նախաձեռնել ենք կայունության բարելավման փուլային ծրագիր: Առաջին փուլը, որը կոսի մոտ վեց տարի, կենտրոնացած է միջազգային լավագույն փորձին համապատասխան երկարաժամկետ կայունության ապահովման վրա: Երկրորդ փուլը կշարունակվի հանքավայրի շահագործման ողջ ընթացքում՝ ապահովելով կառուցվածքային դիմակայունություն ընթացիկ գործառնականություններում:

Այս աշխատանքներին աջակցելու համար մենք

\$2.6

միլիոն

Ենթ ներդրել ինժեներաերկրաբանական հետազոտությունների և գնահատումների մեջ, ներառյալ տեղում փորձարկումները, չխախտված նմուշների լաբորատոր վերլուծությունը, գործիքային չափումները և մանրամասն կայունության մոդելավորումը: Այս ուսումնասիրությունները ապագա շինարարական և նախագծային որոշումների համար տեխնիկական հիմք են հանդիսանում:



Միաժամանակ մենք զգալիորեն բարելավում ենք պոչամբարի մշտադիտարկումը: Այսօր Արծվանիկը հագեցած է 68 պիեզոմետրով, գեոդեզիական Նիշերով, արբուերոմետրերով, շուրջօրյա գործող սեյսմոգրաֆով և օդերևութաբանական կայաններով: Այս համակարգերն այժմ ընդլայնվում են՝ ներառելով 36 նոր պիեզոմետր և 4 ինկլինոմետր, ինչպես նաև անցում կատարելով իրական ժամանակում գործող թվային մշտադիտարկման հարթակի:

Ամբողջությամբ ներդրվելուց հետո մոնիտորինգի հաճախականությունը շաբաթական չափումներից կդառնա յուրաքանչյուր 2 ժամը մեկ, իսկ պլանավորված լանջերի կայունության ռադարային փորձնական համակարգը կապահովի դեֆորմացիաների շուրջօրյա (24/7) անընդհատ մոնիտորինգ: Այս անցումը նշանակում է առաջընթաց գրունտի փոփոխությունների շարունակական տեսանելիության և հնարավոր անկայունության ավելի վաղ հայտնաբերման ուղղությամբ: Չուգահեռաբար ամրապնդվում է նաև կառավարումը: Արծվանիկի համար պատասխանատվությունը տեղամասի մակարդակի ղեկավարությունից տարածվում է մինչև Գործադիր ղեկավարություն և ներառված է մեր ԲՄԿ համակարգերում: Պոչամբարի հետ կապված ռիսկերի գնահատումներն իրականացվում են երկուսից երեք տարին մեկ անգամ, որպեսզի կայացված որոշումները արտացոլեն ընթացիկ պայմանները և ռիսկերի վերաբերյալ թարմացված պատկերացումները:

GISTM պահանջներին համապատասխան՝ մենք նախատեսում ենք ստեղծել Պոչամբարների դիտարկման անկախ խորհուրդ (ՊԴՄԽ)՝ արտաքին տեխնիկական վերահսկողություն ապահովելու և մեր մոտեցումներն ու որոշումները կայացումը մասնագիտորեն վերանայելու համար: Մենք բաց և թափանցիկ կերպով ներկայացնում ենք, որ աշխատում ենք GISTM-ի պահանջների հետ ամբողջական համապատասխանություն ապահովելու ուղղությամբ:

2023-2025թթ. ընթացքում Ընկերությունն իրականացրել է նախաձեռնություններ՝ պոչամբարի անվտանգության և կայունության բարելավման նպատակով: Ստանդարտի պահանջներին՝ պոչամբարի համապատասխանության վերազնահատումը նախատեսված է 2026թ-ին:

Ծայրահեղ սցենարներին պատրաստվածությունը նույնքան կարևոր է, որքան ընթացիկ մոնիտորինգը: Տեղամասի առանձնահատկությունները հաշվի առնող Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլանը, որը մշակվել է Կանադայի ամբարտակների ասոցիացիայի ուղեցույցներին համապատասխան, գործում է 2020թ-ից: Այն ամենամյա փորձարկում է անցնում տեսական վարժանքների և տարհանման լայնամասշտաբ ուսումնավարժությունների միջոցով, որոնք իրականացվում են տեղական շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ՝ ապահովելով բոլորի իրազեկվածությունն արձագանքման մեխանիզմներին և վերջիններս գործնական և մշտապես կատարելագործվող լինելը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻՆ ԶՈՒԳԱՂՆԵՐ ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՄՇԱԿԱԾ ՓԱԿՄԱՆ ԴԼԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ԽԱՆՏԱԿԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ: ԱՐԾՎԱՆԻԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է ՄՈՏ 179 ՇԵԿՏԱՐ, ԵՎՍ 116.57 ՇԵԿՏԱՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԱԿՏԻՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈԼՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՐՈՒՄԱԿՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԴԱՏԱՐԿ ԱՊԱՐՆԵՐԻ ԴԱՇԵՏԱԿՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ:

ՀԱՋՈՐԴ ԱՆԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԻՍԻՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՏԵՍԱԿԱԾ Է 2026թ-ին ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՓՈԼ ԿԼԻՆԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ, ՄՇԱՊԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԻԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՅՐ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԱՅՍ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ ՎԵՐՑՐԱԾ ՎԱՅՅՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԵՐԱՐԱՄԺԱՄԿԵՏ ՀԱՆՁՆԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԸԱՊԱՀՈՎՈՒՄԻՑ ԱՆՑՆԵԼՈՒ ԴԵՊԻ ԴՈՉԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՎԵԼ ՆԱԽԱՁԵՐՆՈՂԱԿԱՆ, ԹԱՓԱՆՑԻԿ ԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՄՈՏԵՑՄԱՆ, ՈՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԾԱՅՐԱՂԵՂ ԾԱՆՐ ՇԵՏԿԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՍԱԿԱՐԳՎՈՂ ԿԱՌՈՒՅՑԻՆ ԵՎ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ՓՈՓՈԽՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿՏԱԿԼԻՔՆԵՐԻՆ:

⁹⁰ Այս փուլում Արծվանիկի պոչամբարի փակումը նախատեսված չէ: Նախկինում 22-ին փոխանցված պոչամբարները չեն ներառվում Ընկերության ընթացիկ մոնիտորինգի շրջանակում:

Կենսաբազմազանության վրա ազդեցության կառավարում և բնական էկոհամակարգերի պահպանություն



GRI 3-3

Կենսաբազմազանության պահպանման հետ կապված հարցերը շարունակում են ձևավորել ԶՊՄԿ-ի բնապահպանական կառավարման մոտեցումը, հատկապես այն վայրերում, որտեղ ԸՆԿերության գործունեությունն իրականացվում է էկոլոգիապես զգայուն տարածքների հարևանությամբ:

Գործառնական համատեքստ և զգայուն տարածքներ

GRI 304-1

ԸՆԿերության արտադրական տարածքները ներառում են բացահանքը, հանքաքարի ջարդման և փոխադրման տեղամասը, հարստացուցիչ ֆաբրիկան և արջամբարը: Բացահանքը գտնվում է կենսաբազմազանության պահպանման տեսանկյունից բարձր արժեք ունեցող տարածքի հարևանությամբ, քանի որ տեղակայված է Զաքարանից 3,5 կմ հարավ գտնվող «Արևիկ» ազգային պարկին մոտ: Տարածքը արևմտյան կողմից սահմանակցում է Չանգեզուրի պետական արգելավայրին և Նախատեսվող «Չանգեզուր» Եմերալդ տարածքին, որը անմիջապես հարում է Նախագծի ազդեցության ենթարկվող գոտու տարածքին: Բացահանքի տարածքը կազմում է 555 հեկտար, իսկ առավելագույն խորությունը՝ 695 մետր: Այն գտնվում է 22 Սյունիքի մարզում՝ Կապանից 21 կմ արևմուտք: 2025թ-ին բացահանքի ակտիվ շահագործվող տարածքը կազմել է 55.2 հեկտար (0.552 կմ²):

2025թ-ին ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Ե ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԷԿՈԶԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ, ՈՐԸ ՆՐԱ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԱԴՐԻՉՆ Է:

Պլանը համապատասխանում է կիրառելի պետական և միջազգային հայեցակարգերին, այդ թվում՝ բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը, ՄՖԿ-ի կատարողականի 6-րդ ստանդարտին, Բեռնի կոնվենցիային, Հայաստանի Կարմիր գրքին և Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակին: Այն նաև հիմնվում է կենսաբազմազանության շարունակական մոնիտորինգի արդյունքների վրա՝ օգնելով պահպանել ԸՆԿերության մոտեցման արդիականությունը, հիմնավորվածությունը և փոփոխվող բնապահպանական պայմաններին արձագանքելու կարողությունը:

Բացահանքն իր հյուսիսային կողմից սահմանակից է «Արևիկ» ազգային պարկին: Ամենամոտ կետում բացահանքի սահմանի և ազգային պարկի միջև հեռավորությունը կազմում է մոտավորապես 1,3 կմ, այնուամենայնիվ, ԸՆԿերության գործառնականությունները չեն տարածվում պարկի տարածքի վրա:

Բացահանքին հարակից «Արևիկ» ազգային պարկը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հոկտեմբերի 15-ի N 1209-Ն որոշմամբ: Պարկը զբաղեցնում է 34,401.8 հեկտար տարածք: Այն ստեղծվել է Մեղրիի և Չանգեզուրի լեռնաշղթաների բնական էկոհամակարգերը, լանդշաֆտը և կենսաբազմազանությունը, այդ թվում՝ էնդեմիկ, հազվագյուտ և անհետացման վտանգի տակ գտնվող տեսակներն ու դրանց կենսամիջավայրերը պահպանելու նպատակով: Տարածքին բնորոշ են լեռնային և անտառային ցամաքային էկոհամակարգերը և այն ճանաչված է որպես բարձր բնապահպանական նշանակություն ունեցող: Որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ պահպանվող տարածք՝ այն հանդիսանում է կենսամիջավայր՝ պահպանության առաջնահերթ նշանակություն ունեցող մի շարք տեսակների, այդ թվում՝ կովկասյան ընձառյուծի, բեզուրյան այծի, գորշ արջի, ջրասամույրի և այլ հազվագյուտ կենդանատեսակների համար:

Կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատում

GRI 304-2

ԸՆԿերությունը կենսաբազմազանության վրա իր գործունեության հնարավոր ուղղակի և անուղղակի ազդեցությունները գնահատում է կենսաբազմազանության ամենամյա մոնիտորինգի, ֆոտոթակարդներով իրականացվող դիտարկումների և շրջակա միջավայրի մոնիտորինգի (այդ թվում՝ ստորերկրյա ջրերի կազմի և մակարդակների

ուսումնասիրության) միջոցով:⁹¹ Տվյալները համեմատվում են Նախորդ տարիների տվյալների հետ՝ էկոհամակարգերում և տեսակային կազմում հնարավոր փոփոխությունները բացահայտելու նպատակով: 2025թ-ին ԶՊՄԿ-ն ներգրավել է միջազգային փորձագետների իրականացնելու համար կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատում՝ ընդլայնված շրջանակով և առավել մանրամասն մոտեցմամբ, ընդգրկելով տեսակների և կենսաբազմազանության ավելի լայն շրջանակ:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՉՈՐՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.

01

Բացահանքի և հարակից ճանապարհային ենթակառուցվածքի շահագործման հետևանք են հանդիսանում աղմուկը, թրթռումները պայթեցումներից, գիշերային լուսավորությունը և փոշին, որոնք կարող են հանգեցնել կենսամիջավայրերի մասնատման և կենդանիների միգրացիայի ուղիների խաթարման, հատկապես՝ գիշերային տեսակների համար: Մոնիտորինգի արդյունքների համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում այս գործոնների հետ կապված բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմի փոփոխություններ չեն արձանագրվել:

02

Բացահանքի և հարակից ճանապարհային ենթակառուցվածքի շահագործման հետևանք են հանդիսանում փոշին և գազերի արտանետումները, որոնց շարունակական մոնիտորինգն իրականացվում է բնապահպանական հսկողության միջոցներով: Հաշվետու տարվա ընթացքում մոնիտորինգի տվյալների հիման վրա կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություն չի հայտնաբերվել:

03

Հաշվետու ժամանակաշրջանում ԸՆԿերության գործունեության ազդեցության գոտում կենսաբազմազանության վրա ինվազիվ տեսակների էական ազդեցություն չի արձանագրվել: ԸՆԿերության կողմից իրականացվող կանաչապատման ծրագրերում հիմնականում օգտագործվում են մարզին բնորոշ տեղական տեսակներ: Հաշվետու տարվա ընթացքում ինվազիվ տեսակների ներթափանցման կամ տարածման դեպքեր չեն արձանագրվել:

04

Կենսաբազմազանության մոնիտորինգի շրջանակում կենդանական տեսակները նույնականացվում և փաստաթղթավորվում են: Հաշվետու տարվա մոնիտորինգի արդյունքների համաձայն՝ Նախորդ տարում արձանագրված բոլոր տեսակները կրկին դիտարկվել և փաստաթղթավորվել են, ինչը վկայում է տեսակային կազմի պահպանման մասին:⁹²

⁹¹ Հաշվետու տարվա ընթացքում հանքավայրի տարածքում իրականացվել են ստորերկրյա ջրերի մակարդակի չափումներ, սակայն կենսաբազմազանության վրա դրանց ազդեցության գնահատում դեռևս չի կատարվել:

⁹² Ներկայումս կենսամիջավայրի փոխակերպման հետևանքով կենսաբազմազանության էական փոփոխություններ չեն արձանագրվել: Հանքարդյունահանման աշխատանքների ավարտական փուլում Նախատեսվում է մշակել հանքի փակման պլան և իրականացնել վերականգնողական միջոցառումներ:

Թեև մոնիտորինգի արդյունքում էական բացասական ազդեցություն չի հայտնաբերվել, ԶՊՄԿ-ն ընդունում է որոշ տեղայնացված և պոտենցիալ էական հետևանքների առկայությունը, որոնք ներկայացված են ստորև.

- ▶ Որոշ տեսակների պոպուլյացիաներում արձանագրվել են տեղայնացված փոփոխություններ: Օրինակ՝ դիտարկման որոշ կետերում նվազել է կողակ (Capoeta capoeta) հանդիպելու հաճախականությունը, մինչդեռ արձանագրվել է Զանգեզուրի գանգակի (Campanula zangezura) պոպուլյացիայի խտության աճ:
- ▶ Կենսամիջավայրերի ֆիզիկական փոխակերպումը հիմնականում կապված է բացահանքի տարածքի հետ և սահմանափակվում է լիցենզավորված հանքային տարածքների սահմաններով: Ազդեցությունը տեղայնացված է և չի տարածվում հարակից պահպանվող տարածքների վրա:
- ▶ Կենսաբազմազանության վրա ազդեցությունը հիմնականում կապված է արտադրական գործունեության որոշակի փուլերի հետ և կրում է ժամանակավոր բնույթ՝ առաջնապես հորատման, պայթեցման և հանքաքարի փոխադրման ընթացքում:
- ▶ Բացահայտված ազդեցությունները գնահատվում են որպես հիմնականում վերականգնելի: Հանքարդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ազդեցության ենթարկված տարածքների վերականգնում և ռեկուլտիվացիա՝ կենսամիջավայրի աստիճանական վերականգնմանը նպաստելու նպատակով:

Մենք հանձնառու ենք շարունակաբար կատարելագործել կենսաբազմազանության մոնիտորինգի գործիքները, գնահատել մեր գործունեության ազդեցությունը կենսաբազմազանության վրա և իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով:

Մեր առաջընթացը Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TNFD) շրջանակում. կախվածություններ, ազդեցություններ, ռիսկեր և հնարավորություններ

ԻՐ ՀԱՆՁՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶՊՄԿ-Ն ՍԿՍԵԼ Ե ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՍԲԻ (TNFD) ՀԵՏ: 2025Թ-ԻՆ ԱՅՍ ՀԱՆՁՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԾՎԵԼ Ե ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ, ՈՐԻ ՆՊԱՏԱԿ Ե ՌԻՍԻՆԱՍԻՐԵԼ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԵՐ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԽՎԱԾ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՑ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇՊՈՒՄ ԴՐԱՆՑ ՎՐԱ: ՍՏՈՐԵՎ ՆԵՐՎԱՅԱՑՎԱԾ ԵՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ:

Մեր առաջին TNFD գնահատման համար հիմք հանդիսացող կենսաբազմազանության գնահատման իրականացվել է 2024թ. վերջից մինչև 2025թ. սկիզբը: Մենք նախատեսում ենք ավարտին հասցնել առաջին TNFD հաշվետվությունը 2026թ. առաջին կիսամյակում և դրա արդյունքներն

օգտագործել բնության հետ կապված տեղեկատվության բացահայտման և կառավարման նկատմամբ մեր մոտեցումները ձևավորելու համար:

Այս աշխատանքի նպատակը հստակ է: ԶՊՄԿ-ն գործում է կովկասյան կենսաբազմազանության թեժ կետում՝ «Արևիկ» ազգային պարկի և այլ պահպանվող տարածքների հարևանությամբ, և մեր գործունեության լիցենզիան կախված է այդ միջավայրի վատահեղի և պատասխանատու կառավարումից: Բնությանն առնչվող հարցերը որպես կառավարման, ռիսկերի և հաշվետվողականության խնդիրներ դիտարկելը, այլ ոչ թե որպես բնապահպանական խնդիր, թույլ է տալիս գործառնական անընդհատությունը, կենսաբազմազանությունը և շահագրգիռ կողմերի վստահությունը դիտարկել մեկ միասնական կառավարման տեսանկյունից: Դա նաև ընդհանուր հիմք է ապահովում հաշվետվության այլ բաժիններում ներկայացված գործառնական ծրագրերի՝ Արժվանիկի պոսամբարի պատասխանատու կառավարման, կենսաբազմազանության ամենամյա մոնիտորինգի և հողերի ընթացիկ ռեկուլտիվացման համար, որպեսզի դրանք համարվեն առաջնահերթ և դիտարկվեն որպես ռիսկերի հիման վրա փոխկապակցված, այլ ոչ թե որպես առանձին նախաձեռնություններ:

Կիրառած LEAP մեթոդաբանությունը

ՄԵՆՔ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՏԱԼԻՍ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՇՏ ՀԱՐՑԵՐԻՆ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ TNFD-Ի LEAP ՄՈՏԵՑՈՒՄԸ՝ ՏԵՂՈՐՈՇԵԼ, ԳՆԱՀԱՏԵԼ, ՎԵՐԼՈՒԾԵԼ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԵԼ, ԵՎ ԴՐԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՆՔ ԶՊՄԿ-Ի ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ԱՅԼ ՈՐ ԹԵ ԱՌԱՋՆԱՀԱՅՎԱԾ ԿԵՐՊՈՎ:

Գնահատումն իրականացվել է շահագործվող ակտիվների մակարդակով՝ ընդգրկելով Զաջարանի բացահանքը, հանքաքարի ջարդման և հարստացման արտադրամասերը, դատարկ ապարների լցակայանները, Արժվանիկի

պոսամբարը և կապող պոչատար խողովակաշարը: Ուղղակի ազդեցության գոտին կազմում է մոտ 1,082 հեկտար՝ Ողջի և Աճանան ենթաավազաններում: Գնահատումը հիմնվել է ԸՆկերության գործող կենսաբազմազանության մոնիտորինգի և Էկոհամակարգերի ու կենսաբազմազանության կառավարման պլանի վրա, ուստի այն ընդլայնում է աշխատանքը, այլ ոչ թե պարզապես կրկնում այն: Մենք ստուգել ենք էականությունը երկու անկախ դիտանկյունից՝ մի կողմից՝ ազդեցությունն ու կախվածությունը, մյուս կողմից՝ ֆինանսական հետևանքները կարծաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում, ինչպես նաև կիրառել ենք TNFD-ի լրացուցիչ ուղեցույցը մետաղների և հանքարդյունաբերության ոլորտի համար: Արդյունքները համադրվել են արդեն իսկ կիրառվող այլ համակարգերի հետ՝ ապահովելու համար հաշվետվողականության ընդհանուր համակարգի ամրապնդումը, առանց կրկնությունների:

ՏԵՂՈՐՈՇԵԼ

Կենսաբազմազանության ծրագիրը 28 ուսումնասիրված տեղամասերում արձանագրել է կենսամիջավայրի 50 տեսակ և առանձնացվել է 12 առաջնահերթ տարածք հաջորդ փուլերի համար: Տարածքը գտնվում է Էկոլոգիապես զգայուն ավելի լայն լանդշաֆտի վրա: Բացհանքն իր հյուսիսային եզրով սահմանակցում է «Արևիկ» ազգային պարկին՝ ամենամոտ կետում գտնվելով մոտ 1.3 կիլոմետր հեռավորության վրա: Շրջակա տարածքն ընդգրկում է «Ջանգեզուր» արգելավայրը, «Շիկահող» պետական արգելոցը, Մեղրիի Կենսաբազմազանության հիմնական տարածքը:

ԳՆԱՀԱՏԵԼ

Վերլուծության արդյունքում առանձնացվել է էական կախվածության 10 գործոն, որոնցից ամենաբարձր առաջնահերթությունն ունեն ջրի մաքրումը և տեղումների ռեժիմի կարգավորումը, և էական ազդեցության 10 գործոն, որտեղ հիմնականներն են հողօգտագործման փոփոխությունը, ջրառը, դատարկ ապարների լցակույտերը, ինվազիվ տեսակները և օդի որակը: Սրանք այն հիմնական ուղղություններն են, որոնք ապագային միտված ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ գնահատվել են որպես հնարավոր էական գործոններ: Մինչ օրս իրականացված կենսաբազմազանության մոնիտորինգը նշանակալի բացասական ազդեցություն չի արձանագրել, և գնահատման նպատակն է պահել այդ արդյունքը ակտիվ կառավարման ներքո:

Բնության պահպանության ռազմավարական անցումային պլան

Գնահատմանը զուգահեռ մշակվել է Բնության պահպանության ռազմավարական անցումային պլան: Դիտարկված հարցերից էական են ճանաչվել 30 թեմաներ, որոնցից 24-ը ռիսկեր են, իսկ 6-ը՝ հնարավորություններ: Այս պահին այն դեռևս ռազմավարական հայեցակարգ է, այլ ոչ թե վերջնականականացված հանձնառությունների ամբողջություն. այն սահմանում է նախատեսվող ուղղությունը և նկարագրում, թե ինչպես է մշակվելու և հաջորդ փուլերում իրագործվելու գործառնական անցումային պլանը: Հայեցակարգը կառուցված է վեց ուղղությունների շուրջ.

- բնապահպանական գործոնների ինտեգրում ֆինանսական և ռազմավարական որոշումներում,
- բացասական ազդեցության կանխարգելում և նվազեցում,
- ջրային ռեսուրսներից կենսական կախվածության ապահովում,
- առաջնահերթ էկոհամակարգերի վերականգնում և պաշտպանություն,
- արժեշրջայի ձևափոխում,
- ծառայությունների և բիզնես մոդելների վերափոխում:

ՎԵՐԼՈՒԾԵԼ

յուրաքանչյուր դիտարկված հարց գնահատվել է ըստ ազդեցության աստիճանի, օգտագործելով դրական և տեսանկյունից լրջության «ծանր», «էական» կամ «չափավոր» աստիճանները, ինչպես նաև առաջնահերթության աստիճանը և ժամանակային հորիզոնը՝ կարճաժամկետ՝ 0-2 տարի, միջնաժամկետ՝ 3-10 տարի և երկարաժամկետ: Էականությունը գնահատվել է զուգահեռաբար երկու դիտանկյունից, ինչը թույլ է տվել համատեղ դիտարկել գործառնական նշանակությունը և ֆինանսական հետևանքները:

ՊԱՏՐԱՍՏԵԼ

յուրաքանչյուր էական հարցի համար մշակվել են դեկավարության պատասխան գործողություններ, որոնք հիմնականում ուղղված են ազդեցության նվազեցմանը՝ համապատասխան ցուցանիշներով, պատասխանատուներով, կիրառելի համակարգերով, և ինդեքսավորվել են TNFD-ի կողմից առաջարկվող 14 բացահայտումների պահանջներին: Գործնականում այդ պատասխան գործողություններն ինտեգրված են արդեն իսկ իրականացվող ծրագրերում՝ Արծվանիկի կայունության և մոնիտորինգի ծրագրում, կենսաբազմազանության ամենամյա մոնիտորինգում, փուլային վերականգնման և անտառվերականգնման աշխատանքներում, այլ ոչ թե գործում են որպես առանձին աշխատանքային ուղղություն:

ԱՅՆ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է 55 ԵՆԹԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՆՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԿՎԵՐԱԾԻ ՀՍՏԱԿ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԻ: ՊԼԱՆԸ ՄՇԱԿՎԵԼ Է ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 14-ՐԴ ԵՎ 15-ՐԴ ԹԻՐԱԽՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ՄԵՐ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻՏԱԼԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՇԿԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԼԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ: ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ՈՐՏԵՂ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՐԱՊԱՀՎԱԾ Է ԽՈՐՀՐԴԻՆ:

Ցուցանիշներ, թիրախներ և հաջորդ քայլեր

Գնահատման շրջանակն ընդգրկում է գործառնական ակտիվները: Արժեշղթան և կուտակային հետևանքները դիտարկվել են որակական ցուցանիշների հիման վրա: Առաջին փուլում կիրառվել է մեկ սցենար և օգտագործվել են 2024թ. տվյալները, սակայն այն դեռևս չի ներառում կենսաբազմազանության վիճակի պաշտոնական ինդեքսները: Այս երկու ուղղություններն էլ դիտարկվում են որպես զարգացման ենթակա: Զանակական թիրախային ցուցանիշները դեռ պետք է սահմանվեն, և այս փուլն արտաքին հավաստիացում չի անցել, թեև գրանցամատյանները, հիմնավորող փաստաթղթերի փաթեթները և տվյալների հետազոտության ապահովման մեխանիզմները մշակվել են հաշվի առնելով ապագա հավաստիացման պահանջները:

Հաջորդ փուլի մեր առաջնահերթությունները հստակ են.

- անցկացնել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ռիսկերի և հնարավորությունների հետաձգված սեմինարը,
- ապահովել խորհրդի և գործադիր մարմնի կողմից կառավարման մոդելի և տեղեկատվության բացահայտման համակարգի ամբողջական հաստատումը,
- մշակել 2x2 սցենարային վերլուծություն,
- սահմանել 2027թ. և 2030թ. քանակական նպատակային ցուցանիշներ,
- ընդլայնել ընդգրկվածությունն արժեշղթայի երկայնքով,
- վերացնել այս փուլում բացահայտված վերահսկողության բացերը:

Կարմիր գրքում գրանցված տեսակների մոնիտորինգ

■ GRI 304-4, SASB EM-MM-160a.3.

2025թ-ին ԸՆկերությունն ավելի մանրամասն տեղեկատվություն է ստացել կենսաբազմազանության, մասնավորապես՝ Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ: 93 Գործունեության ազդեցությանը ենթարկված տարածքներում գրանցված կենսամիջավայրերի վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) հաշվետվությունում, որը փորձաքննության ընթացքում հասանելի կլինի հանրությանը:

ՔԱՆԻ ՈՐ ՄԵՆՔ ՀԱՐՈՒՄԱԿՈՒՄ ԵՆՔ ԸՆԴԱՅՆԵԼ ՌԻՍԻՄԱՍԻՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԴՈՒՄԱՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ՝ ՆՊԱՏԵԼՈՎ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ շՆԱՐԱՎՈՐ ՄԵՂՄԱՆԸ:

⁹³ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 8, էջ 122):

Շրջակա միջավայրի վերականգնում և հողերի ռեկուլտիվացիա

GRI 304-3

Պատասխանատու հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ հանձնառության շրջանակում ԶՊՄԿ-ն շարունակում է ընթացիկ գործունեությունը զուգահեռ իրականացնել հողերի փուլային վերականգնում: Վերականգնման աշխատանքները համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին և ինտեգրված են մեր Բնապահպանական կառավարման համակարգում:

2025թ. ռեկուլտիվացման աշխատանքներ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

42.53

հեկտար

տարածքի ռեկուլտիվացիա և վերականգնում

340

թփի

տնկում

2,880

կգ

սերմերի, այդ թվում՝ եգիպտացորենի, խոտաբույսերի և հոնի սերմերի ցանք

4,209

ծառի

այդ թվում՝ հացենու (*Fraxinus spp.*), թխկու (*Acer spp.*), կատալպայի (*Catalpa spp.*) և բարդու (*Populus spp.*) տնկում

2025թ-ին ընկերությունը շարունակել է իրականացնել ռեկուլտիվացիայի կենսաբանական և տեխնիկական փուլերը իր գործունեության հիմնական տարածքներում՝ հիմնականում Արծվանիկի պոչամբարում⁹⁴, Ձորատեղի դատարկ ապարների լցակայանում և բացահանքի տարածքներում:

Այս միջոցառումները նպատակաուղղված էին հողի մակերեսի կայունացմանը, էրոզիայի նվազեցմանը և բուսական ծածկույթի ձևավորմանը՝ ռեկուլտիվացիայի ազգային պահանջներին համապատասխան: Կապառում 2 հեկտար տարածքում անտառվերականգնման հանձնառությունը դեռևս անավարտ է, որի իրականացումը նախատեսվում է 2027թ. սկզբին:

Անտառվերականգնում. արտաքին համագործակցություն և այլ ծրագրեր

Հաշվետու տարվա ընթացքում ԶՊՄԿ-ն շարունակել է համագործակցությունը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ՝ անտառվերականգնման ծրագրի շրջանակում, մասնավորապես.

- Ընկերության տնկարանը աճեցրել և տրամադրել է 23,000 տնկի:
- Ծրագրում ընդհանուր ներդրումը կազմել է մոտ 0.2 միլիոն ԱՄՆ դոլար:

⁹⁴ Տարեկան զբոսայգի այս միջոցառումների արդյունավետությունը դեռևս չէր գնահատվել: Գնահատումը նախատեսված է մոնիտորինգի հաջորդ փուլում:

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԸՐՋԱՆԻ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ «ՀԱՅԱՆՏԱՐ» ՊՈԱԿ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆԵ ԸՆԴԳՐԿՈՒՄ ԵՆ 18 ՀԵԿՏԱՐ, ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ՏՆԿՎԱԾ ՏՆԿԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԿԱԶՄԵԼ Է 66% ԱՃԱՆԱՆՈՒՄ ԵՎ 69% ԿԱՐՄՐԱՔԱՐՈՒՄ՝ ՉՀԱՍՆԵԼՈՎ 70% ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻՆ: ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԱԿՈՒՄ ԵՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՆԿՄԱՆ, ԽՆԱՄՔԻ ԵՎ ՈՌԳԱՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ:

2025թ-ին ռեկուլտիվացիայի ընդհանուր ծախսերը կազմել են

\$819,890

արտացոլելով ընկերության շարունակական հանձնառությունը հողերի և էկոհամակարգերի վերականգնման նկատմամբ

Դեպքի Ուսումնասիրություն. անտառային հողերի ձեռքբերում և անտառվերականգնմանն ուղղված համագործակցություն

Իր հանքարդյունաբերական ենթակառուցվածքների զարգացման և շահագործման շրջանակում ԶՊՄԿ-ին անհրաժեշտ են հողատարածքներ, այդ թվում՝ անտառային կատեգորիայի հողեր: Այս աշխատանքներն իրականացվում են ՀՀ օրենսդրության համաձայն և կենտրոնացած են շրջակա միջավայրի պահպանության, հողերի պատասխանատու օգտագործման և երկարաժամկետ կայունության վրա:

Հողերի արդյունավետ ձեռքբերումն ապահովելու նպատակով ԶՊՄԿ-ն սերտորեն համագործակցել է տեղական ինքնակառավարման և պետական մարմինների հետ՝ ապահովելով դրանց համակարգված և օրենսդրությանը համապատասխանող կառավարում: Այս համագործակցային մոտեցումն ամրապնդել է թափանցիկությունը և համապատասխանությունը կարգավորող մարմինների ակնկալիքներին՝ միաժամանակ նպաստելով հողօգտագործման առավել կայուն արդյունքների ձևավորմանը:

Այս համագործակցության հիմնական արդյունքներից է ԶՊՄԿ-ի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև ապագա համատեղ անտառվերականգնման նախաձեռնության մշակումը, որը կընդգրկի մոտ 273 հեկտար տարածք:

Կողմերը կարևորում են հետևյալը.

- Անտառվերականգնման համակարգված իրականացում՝ միավորված կարողությունների կիրառմամբ,
- Համագործակցության ամրապնդում՝ ի նպաստ շրջակա միջավայրի երկարաժամկետ պահպանության,
- Հողօգտագործման հետ կապված բնապահպանական ազդեցությունները մեղմելուն ուղղված համատեղ լուծումների մշակում:

Համագործակցությունը պաշտոնապես ձևակերպելու համար 2026թ-ին նախատեսվում է ստորագրել համագործակցության հուշագիր: Այնուհետև

273 հեկտար

տարածքում նախատեսվող նախաձեռնությունը համակարգված քայլ է շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմման և երկարաժամկետ էկոլոգիական վերականգնմանն աջակցելու ուղղությամբ:

Կմշակվի համատեղ քայլերի մանրամասն ծրագիր, որը կներկայացնի անտառվերականգնման հստակ միջոցառումները, կողմերի պարտավորությունները և իրականացման ժամկետները:

Բացի կենսաբազմազանության և հողերի վերականգնման հետ կապված օգուտներից, ակնկալվում է, որ անտառվերականգնման ծրագիրը կնպաստի կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը՝ ածխածնի կլանման և ընկերության գործունեության արդյունքում արտանետված ջերմոցային գազերի ընդհանուր քանակի աստիճանական կրճատման միջոցով:

Այս փորձը ցույց է տալիս, որ հողերի պատասխանատու ձեռքբերումը պահանջում է ոչ միայն օրենսդրության պահանջների պահպանում, այլև նախաձեռնողական համագործակցություն և երկարաժամկետ բնապահպանական պլանավորում: Պետական մարմինների հետ շարունակական փոխգործակցության և անտառվերականգնման ուղղությամբ պաշտոնական համագործակցության ձևավորման միջոցով ԶՊՄԿ-ն ձգտում է հավասարակշռել գործառնական պահանջները շրջակա միջավայրի պատասխանատու կառավարման հետ և նպաստել կլիմային առնչվող առավել լայնածավալ նպատակների իրագործմանը և հողերի կայուն օգտագործմանը:

20%

կրճատում Scope 1 և Scope 2 բացարձակ արտանետումներում մինչև 2040-ը (2022-ի բազային տարվա նկատմամբ)

8

Կլիմայական փոփոխության կառավարում. 2026-2040թթ. կլիմայական փոփոխության ռազմավարության ներկայացում

- 115 Համապատասխանեցում միջազգային հայեցակարգերին
- 116 Կլիմայական փոփոխության կառավարում
- 117 Արտանետումների կառավարման գործառնական շրջանակը և կարգավորող համատեքստը
- 118 Ռազմավարության իրականացման ճանապարհային քարտեզ
- 120 Թափանցիկություն և շահագրգիռ կողմերի ներգրավում
- 121 Ձերմոցային գազերի արտանետումների ամփոփ նկարագիր
- 123 Հողերի վերականգնում և կանաչապատում



13

Իր ռազմավարության շրջանակում ԶՊՄԿ-ն սահմանում է բարձր նիշի նպատակ՝ մինչև 2040թ.

20%

Նվազեցնել Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի ջերմոցային գազերի (ԶԳ) բացարձակ արտանետումները (2022թ. ելակետային ցուցանիշի համեմատ)՝ ցուցադրելով ԸՆԿերության մտադրությունը ներդրում ունենալ կլիմայի փոփոխության դեմ պայքարի համաշխարհային նախաձեռնություններում՝ միաժամանակ հաշվի առնելով իր գործառնական միջավայրի իրողությունները:

Այս երկարաժամկետ նպատակն ընդգծում է ԶՊՄԿ-ի ղեկավարության մտադրությունն Կայուն հանքարդյունաբերական գործունեություն և արտանետումների էական կրճատում՝ ժամանակի ընթացքում, ապահովելու համար: Միևնույն ժամանակ, ԸՆԿերությունն առաջնորդվում է ճկուն մոտեցմամբ. իր ռազմավարությունը պարբերաբար կվերանայվի և վերանայվի տեխնոլոգիաների զարգացմանը, նոր հնարավորությունների առաջացմանը և արտաքին պայմանների փոփոխությանը համընթաց: Այս մոտեցմամբ ԶՊՄԿ-ն նպատակ ունի շարունակել համահունչ լինել միջազգային լավագույն փորձին կլիմայական փոփոխության դեմ պայքարի ոլորտում՝ միաժամանակ պահպանելով ճկունություն և ապագա զարգացումներին արձագանքելու համար:

GRI 3-3, SASB EM MM 110a.2

Գիտակցելով կլիմայի փոփոխության աճող կարևորությունը ԸՆԿերության երկարաժամկետ դիմակայունության և Կայուն զարգացման համար՝ ԶՊՄԿ-ն մշակել է 2026-2040թթ. կլիմայական փոփոխության ռազմավարություն, որի հաստատումը Տնօրենների խորհրդի կողմից նախատեսվում է 2026թ-ին: Ռազմավարությունն արտացոլում է ԸՆԿերության հանձնառությունն կլիմայի կառավարումը ամրապնդելուն, իր գործունեությունը Փարիզյան համաձայնագրի շրջանակում Հայաստանի կողմից ստանձնած կլիմային առնչվող հանձնառություններին համապատասխանեցնելուն և երկրի՝ ցածր ածխածնային և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայուն տնտեսության անցմանը նպաստելուն: Այն սահմանում է ԶՊՄԿ-ի երկարաժամկետ կլիմայական հավակնությունները և հստակ նպատակներ, իրականացման միջոցառումներ, կառավարման մեխանիզմներ և պատասխանատվության շրջանակներ՝ ԸՆԿերության գործունեության ընթացքում կլիմայի հետ կապված ռիսկերի և հնարավորությունների արդյունավետ կառավարմանը նպաստելու համար:

Համապատասխանեցում միջազգային հայեցակարգերին

Ռազմավարությունը ծառայում է երկու նպատակի. առաջին՝ նպաստել ներքին պլանավորմանը հստակ գործառնական ճանապարհային քարտեզների միջոցով և երկրորդ՝ բավարարել շահագրգիռ կողմերի թափանցիկության հետ կապված ակնկալիքները տեղեկատվության հանրային բացահայտումների միջոցով: Մոտեցումը համապատասխանում է Գիտականորեն հիմնավորված նպատակների նախաձեռնությանը (SBTi)՝ ապահովելով, որ ԸՆԿերության արտանետումների կրճատման նպատակները հիմնված լինեն կլիմայի վերաբերյալ գիտականորեն հիմնված տվյալների և Կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբի (TCFD) մոտեցման վրա՝ ձևավորելով միջազգային լավագույն փորձին համապատասխան ռիսկերի կառավարում և հաշվետվողականություն:

Ռազմավարությունը ներառում է նաև «Wood Mackenzie»-ի կողմից իրականացված «Ռիսկային ազդանշաններ» անկախ գնահատման արդյունքում ներկայացված առաջարկությունները:

ԶՊՄԿ-ի կլիմայի հետ կապված հավակնությունները ձևավորվել են պղնձի արդյունահանման համաշխարհային ոլորտում փոփոխվող ակնկալիքների համատեքստում: Թեև ոլորտի այլ ընկերությունները սահմանել են ավելի հավակնոտ նպատակներ, ԸՆԿերությունը կլիմայի հետ կապված իր նպատակները սահմանել է իր Ռազմավարությանը և մետաղների ակնկալվող համաշխարհային պահանջարկին համապատասխան: Մենք նաև ապահովել ենք, որ մեր նպատակները լինեն իրագործելի, իրատեսական և համահունչ պետական ռազմավարությանը, այլ ոչ թե չափազանց հավակնոտ:

Որպես դժվար դեկարբոնիզացվող ոլորտ՝ հանքարդյունաբերությունը բախվում է ածխածնի արտանետումների կրճատմանը բնորոշ խնդիրների, հատկապես հաշվի առնելով պղնձի և մոլիբդենի նկատմամբ կանխատեսվող պահանջարկի աճը՝ մաքուր էներգիայի անցմանն աջակցելու նպատակով: Գիտակցելով, որ առանց նպատակային միջամտության այդ աճը կարող է ավելացնել ոլորտի արտանետումները՝ ԶՊՄԿ-ի մոտեցումն ուղղված է ձևավորվող օրենսդրական և շուկայական ռիսկերի կառավարմանը, ներառյալ ԵՄ ածխածնային սահմանների ճշգրտման մեխանիզմը, Հայաստանում ձևավորվող պետական կլիմայական քաղաքականության շրջանակը և գնորդների կողմից առաջադրվող արտանետումների պահանջները, միաժամանակ պահպանելով մրցունակությունը և շուկաներ մուտք գործելու հնարավորությունը:

Այս ամենին աջակցելու նպատակով ԶՊՄԿ-ն ներդրել է Նորմատիվային մոնիտորինգի գործընթաց՝ առանցքային երկրներում և տարածաշրջաններում, այդ թվում՝ Հայաստանում, ԵՄ-ում, ԱՄՆ-ում և Չինաստանում կլիմային առնչվող զարգացումներին հետևելու համար: ԸՆԿերությունը նաև համագործակցում է ոլորտի ասոցիացիաների հետ և մասնակցում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններին՝ քաղաքականության միտումներին տեղեկացված լինելու, ոլորտային երկխոսությունում ներդրում ունենալու և օրենսդրական փոփոխությունները կանխատեսելու նպատակով:

Կլիմայական փոփոխության կառավարում

GRI 3-3, SASB EM MM 210a.1

2026թ-ին ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՊՄԿ-Ն ՁԵՎԱՎՈՐԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՍՏԱԿ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՀՍՏԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ: ԱՅՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐԿՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐՆ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԲՍԿ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Կլիմայական փոփոխության ռազմավարության և արդյունքների

վերջնական վերահսկողության համար: Տնօրենների խորհուրդը առնվազն տարին մեկ անգամ ուումնասիրում է Կլիմայական փոփոխության ռազմավարության իրականացման ուղղությամբ գրանցված առաջընթացը՝ ստանալով թարմացումներ արտանետումների կրճատման, կարևոր փուլերի մասով առաջընթացի և կլիմայի հետ կապված ռիսկերին ենթարկվածության կամ ռազմավարական ուղղության էական փոփոխությունների վերաբերյալ:

Կայուն զարգացման, ԲՍԿ և ռիսկերի հանձնաժողովը, որը ձևավորվել է 2025թ. վերջին՝ ԶՊՄԿ-ի կառավարման կանոնադրության համաձայն, կապահովի վերահսկողության լրացուցիչ մակարդակ՝ ինտեգրելով կլիմայի հետ կապված ռիսկերը: Դա ներառում է անցումային ռիսկերի՝ օրենսդրական, շուկայական և տեխնոլոգիական ռիսկերի և ֆիզիկական ռիսկերի, այդ թվում՝ ջրային ռեսուրսների անբավարարության և էքստրեմալ եղանակային երևույթների մոնիտորինգը, որոնք կարևոր են Սյունիքի մարզում ԶՊՄԿ-ի գործունեության համար:

Արտանետումների կառավարման գործառնական շրջանակը և կարգավորող համատեքստը

ԶՊՄԿ-ի արտանետումների կառավարման գործողությունները⁹⁵ կիրառելի են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բոլոր գործառնականությունների համար, որն իրենից ներկայացնում է պղնձամոլիբդենային հանքարդյունաբերության և վերամշակման վրա կենտրոնացած մեկ գործառնական սեգմենտ:⁹⁶

Ինչպես նշված է 2024թ. Կայուն զարգացման հաշվետվությունում⁹⁷, ԶՊՄԿ-ն նաև մասնակցում է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության Նախաձեռնության» (ԱՃԹՆ) աշխատանքներին, որը կենտրոնանում է ռեսուրսների կառավարման թափանցիկության, այլ ոչ թե արտանետումների հատուկ կարգավորումների վրա: Միևնույն ժամանակ,

տեղեկատվության բացահայտման և հաշվետվողականության միջազգային հայեցակարգերի, այդ թվում՝ TCFD-ի, GRI-ի և SASB-ի չափորոշիչների հետ կամավոր համապատասխանության ապահովումն արտացոլում է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ հանձնառությունը՝ կիրառել կլիմայի հետ կապված տեղեկատվության բացահայտման միջազգայնորեն ճանաչված գործելակերպը:

Գործառնական և կարգավորիչ ոլորտներին վերաբերող այս դիտարկումները ձևավորում են ռազմավարական համատեքստ ԶՊՄԿ-ի արտանետումների կառավարման մոտեցման համար, որն իրականացվում է ստորև ներկայացված արտանետումների կրճատման ուղղված հինգ փուլերի միջոցով և հիմնականում կենտրոնանում է Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի ջերմոցային գազերի արտանետումների կառավարման և կրճատման արդյունավետ մեխանիզմների ապահովման, ինչպես նաև Շրջանակ 3-ի արտանետումների կառավարման նկատմամբ համակարգված մոտեցման վրա:

⁹⁵ 2025 ֆինանսական տարվա դրությամբ ԶՊՄԿ-ի արտանետումների կառավարման գործողությունները ուղղակիորեն կապված չեն արտանետումների առևտրի կամ ածխածնի գնագոյացման որևէ ծրագրի, այդ թվում՝ արտանետումների առևտրի սխեմաների (ՍԱՍ) կամ «սահմանափակել և առևտուր անել» համակարգերի հետ: Ներկայումս Հայաստանը չի կիրառում ազգային ՍԱՍ կամ հանքարդյունաբերության ոլորտում կիրառելի պարտադիր ածխածնի գնագոյացման մեխանիզմ: Այդուհանդերձ, ԶՊՄԿ-ն իրականացնում է միջազգային կարգավորիչ դաշտի զարգացումների, ներառյալ ԵՄ ածխածնային սահմանների ճշգրտման մեխանիզմի (CBAM) և ԵՄ մատակարարման շղթայի ուսումնասիրության պահանջների մոնիտորինգ, որոնք կարող են անուղղակի հետևանքներ ունենալ արտադրանքի պատվիրտուների, մրցուկակության և շուկաներ մուտքի հնարավորության վրա:


⁹⁶ Այս գործողությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ակտիվներն ու գործունեությունը՝ 1) Զաջարանի բացահանքը և հարստացուցիչ ֆաբրիկան, 2) Արծվակի կոչամբարը, 3) բոլոր օժանդակ ենթակառուցվածքները, ավտոպարկը և վարչական գործունեությունը:

⁹⁷ Տե՛ս 2024թ. Կայուն զարգացման հաշվետվություն (բաժին 1, էջ 15):

Ռազմավարության իրականացման ճանապարհային քարտեզ

GRI 3-3, SASB EM MM 110a.2

Ռազմավարության հաջող իրականացումն ապահովելու նպատակով՝ ԶՊՄԿ-ն մշակել է իրականացման հստակ ճանապարհային քարտեզ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ (2026-2030թթ.) և երկարաժամկետ (2031-2040թթ.) նպատակներով, ինչպես ներկայացված է ստորև:



ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ (2026-2030թթ.)

Տեխնիկապես կայացած և ծախսարդյունավետ միջոցառումներ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ (2031-2040թթ.)

Նոր ձևավորվող կամ ավելի բարձրաժեռ լուծումներ, որոնք կբացահայտեն արտանետումների կրճատման լրացուցիչ հնարավորություններ

Վերականգնվող էլեկտրաէներգիա. ապահովել վերականգնվող էլեկտրաէներգիայի 30% մասնաբաժին էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման մեջ (ներառյալ տեխնոլոգիական սարքավորումները և շենքերը): Ուսումնասիրել էլեկտրաէներգիայի գնման երկարաժամկետ պայմանագրեր կնքելու և վերականգնվող էներգիայի հավաստագրեր ստանալու հնարավորությունները:

Արտադրական գործընթացների արդիականացում. բարձրացնել էներգաարդյունավետությունը արտադրական գործընթացների նպատակային արդիականացման և օպտիմալացման միջոցով (օրինակ՝ բարձր արդյունավետությամբ շարժիչների, մանրացման կատարելագործված տեխնոլոգիաների օգտագործում): Մշակել արտանետումների նվազեցման սահմանային ծախսերի կոր (MACC) ներդրումների առաջնահերթությունը սահմանելու համար:

Տրանսպորտի դեկարբոնիզացիա. ներդնել էկո-վարման դասընթացներ և քաղաքականություն: Մարդատար ավտոմեքենաների պարկում ապահովել էլեկտրական/հիբրիդային մեքենաների 20%-30% մասնաբաժին: Ապահովել վերականգնվող էներգիայով աշխատող էլեկտրաքարշերի 15-30% մասնաբաժին տարածքում իրականացվող երկաթուղային փոխադրումների համար:

Վերականգնվող էլեկտրաէներգիա. ընդլայնել վերականգնվող էլեկտրաէներգիայի օգտագործումը՝ հասցնելով այն մինչև 100% բոլոր գործառնությունների և օբյեկտների համար:

Ավտոպարկի դեկարբոնիզացիա. վերականգնվող էլեկտրաէներգիայով աշխատող էլեկտրաքարշերի քանակը հասցնել 100%-ի և սկսել ջրածնով աշխատող ծանր տեխնիկայի ներդրումը (պայմանավորված դրա ներդրման նպատակահարմարության վերաբերյալ որոշմամբ): Մարդատար ավտոմեքենաների պարկը մինչև 100%-ով փոխարինել էլեկտրական/հիբրիդային մեքենաներով:

Շենքերի ամբողջական արդիականացում. շենքերի 100%-ի արդիականացում ցածր ածխածնային ծախսերով ստանդարտներին համապատասխան:

ԶՊՄԿ-ն առաջընթաց է գրանցել նաև 2024թ. Կայուն զարգացման հաշվետվությունում ներկայացված կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների իրականացման ուղղությամբ: Արձանագրվել են հետևյալ արդյունքները.



ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ

ԶՊՄԿ-ն նախաձեռնել է 5 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանի շինարարության փորձական նախագիծ: Ընկերությունը նախատեսում է ստանալ անհրաժեշտ լիցենզիան և սկսել շինարարությունը 2026թ. վերջում: Որպես կայուն զարգացման ուղղված լուծում՝ նախագիծը նախատեսվում է իրականացնել ԶՊՄԿ-ի կողմից նախկինում շահագործվող և փակված պղծամբարի տարածքում:



ՔԱՄՈՒ ԷՆԵՐԳԻԱ

ԶՊՄԿ-ն ստորագրել է քառակողմ Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության, Տարածքային կառավարման և էներգետիկայի նախարարության և Komaihaltec Inc. (Ճապոնիա) հետ տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, որի ավարտը նախատեսվում է 2027թ. առաջին եռամսյակում:



ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ (2026-2030թթ.)

Տեխնիկապես կայացած և ծախսարդյունավետ միջոցառումներ



ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ (2031-2040թթ.)

Նոր ձևավորվող կամ ավելի բարձրաժեռ լուծումներ, որոնք կբացահայտեն արտանետումների կրճատման լրացուցիչ հնարավորություններ

Շենքերի արդիականացում. շենքերի արդիականացում ցածր ածխածնային ստանդարտներին համապատասխան (ջերմամեկուսացման բարելավում, օդափոխության, օդորակման և ջեռուցման արդյունավետ համակարգեր):

Արևային էլեկտրակայան. ավարտել նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը և ֆինանսավորման պլանը (մինչև 2028 թ.): Սկսել շինարարությունը՝ նպատակ ունենալով շահագործման հանձնել 2030-2031թթ.: Նախատեսվող հզորությունը՝ մինչև 150 ԳՎտ/տարի, որը կծածկի էներգիայի ընդհանուր սպառման շուրջ 20%-ը:

Գործընթացների էլեկտրաֆիկացում/ վառելիքի փոխարինում. հնարավորության դեպքում էլեկտրաֆիկացնել վառելիքով իրականացվող մնացած արտադրական գործընթացները կամ անցնել ցածր ածխածնային վառելիքի (օրինակ՝ կանաչ ջրածնի) այն սարքավորումների համար, որոնք դեռ հնարավոր չէ ամբողջությամբ էլեկտրաֆիկացնել:

Շրջանակ 3-ի արտանետումների մասով ներգրավվածություն. ներդնել մատակարարների ներգրավման ծրագիր: Սահմանել և վերահսկել Շրջանակ 3-ի արտանետումների կրճատման նպատակային ցուցանիշները՝ SBTi մեթոդաբանությանը համապատասխան: Ապահովել տեղեկատվության բացահայտում տարեկան կտրվածքով:

Թափանցիկություն և շահագրգիռ կողմերի ներգրավում

Թափանցիկությունը ԶՊՄԿ-ի առանցքային սկզբունքներից է և արտացոլված է Ռազմավարությունում՝ TCFD չափանիշներին համապատասխան տեղեկատվության բացահայտման և մեր կայուն զարգացման հաշվետվության արտաքին հավաստիացում ապահովելու վերաբերյալ գրավոր հանձնառության միջոցով: Հիմնական ցուցանիշները ներառում են Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի արտանետումների տարեկան միտումները, արտադրանքի մեկ միավորի հաշվով էներգիայի սպառումը⁹⁸, վերականգնվող էներգիայի մասնաբաժինը և ավտոպարկի արդիականացման ուղղությամբ գրանցված առաջընթացը:

ԶՊՄԿ-ն նաև հանձնառու է ապահովելու Շրջանակ 1-ի, Շրջանակ 2-ի և Շրջանակ 3-ի արտանետումների տվյալների երրորդ կողմի կողմից իրականացվող սահմանափակ շրջանակով հավաստիացում տարեկան կտրվածքով՝ մինչև 2030թ. անցում կատարելով ողջամիտ հավաստիացման: Հավաստիացման արդյունքները և ցանկացած էական վերահաշվարկները կներկայացվեն տարեկան կայուն զարգացման հաշվետվությունում: Այս թափանցիկությունը արտաքին կողմերին հնարավորություն է տալիս գնահատել ԶՊՄԿ-ի կլիմայական փոփոխության արդյունավետությունը և վստահությունը, ինչպես նաև օգնում է բավարարել ներդրողների, վարկատուների և կարգավորող մարմինների աճող սպասելիքները:

ՀԱՆԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ շԵՏ ԿԱՊԱԱԾ ԶՊՄԿ-Ի ՀԱՆՁՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ԶԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԷՆՏԵՎՅԱԼՈՎ:

01

Աշխատողների ներգրավում հետևյալի միջոցով՝

- Կլիմայի փոփոխության դեմ ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ ուսուցողական ծրագրեր,
- Էներգային այդուրդության ուղղված առաջարկությունների սխեմաներ և
- Կայուն զարգացման ոլորտում ձեռքբերումների ճանաչում/ գնահատում:

02

Տեղական համայնքների ներգրավում հետևյալի միջոցով՝

- Թափանցիկ հաղորդակցություն բնապահպանության ոլորտում բարելավումների վերաբերյալ և խորհրդակցություններ հարմարվողականության միջոցառումների շուրջ, հատկապես՝ ջրհավաք ավազանների կառավարման հարցերում:

03

Ներդրողները և վարկատուները կարող են օգուտ քաղել կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի կառավարման վերաբերյալ հստակ տեղեկատվության բացահայտումից և ԶՊՄԿ-ի՝ որպես ապագայի պահանջներին պատրաստ բիզնեսի ընկալումից, ինչը կարող է բարելավել կապիտալի հասանելիությունը և նվազեցնել ֆինանսավորման ծախսերը:

04

Գնորդների ներգրավում՝ ընդգծելով ԶՊՄԿ-ի արտադրանքի կայունության ուղղությամբ գրանցված առաջընթացը և դրանով իսկ ձևավորելով մրցակցային առավելություններ շուկայում:

Ջերմոցային գազերի արտանետումների ամփոփ նկարագիր

GRI 305-1, 305-2, 305-3

2025թ-ին ԶՊՄԿ-ի Ջերմոցային գազերի (ԶԳ) ընդհանուր արտանետումները հիմնականում պահպանվել են 2024թ-ին գրանցված մակարդակում: ԶԳ արտանետումների մանրամասն բաշխումն ըստ տեսակների ներկայացված է ստորև:

Ծավալներ՝ ըստ Ջերմոցային գազերի արտանետումների տեսակների, **տոննա CO₂-ին համարժեք**⁹⁹

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 1) ¹⁰⁰	76,218	82,370	98,095
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 2) ^{101,102}	226,913	229,555	241,293
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 3)	767,857	785,239	705,668
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2)	303,131	311,924	339,388
ԶԳ արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2 (շուկայից կախված) + Շրջանակ 3) ¹⁰³	1,070,988	1,097,164	1,045,057

GRI 305-1, SASB EM-MM-110a.1

2025թ-ին ԶՊՄԿ-ի Ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներն ավելացել են հաշվետու տարվա ընթացքում: Ինչպես ցույց են տալիս տվյալները, արտանետումների աճը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի և վառելիքի սպառմամբ, որը կապված է արտադրական տարածքներում իրականացվող լայնածավալ շինարարական և տրանսպորտային աշխատանքների հետ:

Ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներ, **տոննա CO₂-ին համարժեք**¹⁰⁴

Ցուցանիշ	2023թ.	2024թ.	2025թ.
ԶԳ ուղղակի արտանետումների (Շրջանակ 1) ընդհանուր ծավալ ¹⁰⁵	76,218	82,370	98,095
Ածխածին երկօքսիդ (CO2)	75,321	81,375	96,932
Մեթան (CH4)	29.8	30	35
Ազոտի օքսիդ (N2O)	867.1	966	1,047
HFCs, PFCs ¹⁰⁶	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	80.157

⁹⁹ Ներկայումս ԶՊՄԿ-ն չի ներկայացնում Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի ԶԳ արտանետումների առանձնացված տվյալներ այլ ներդրման օբյեկտների, փոխկապակցված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկությունների համար: Հաշվի առնելով փոփոխվող միջազգային ստանդարտները և շահառուների ակնկալիքները՝ ԸՆկերությունն ընդունում է այդ տվյալներն առաձին ներկայացնելու անհրաժեշտությունը: ԲԱԿ սկզբունքների հետ կապված ապագա բացահայտումները կներառեն չհամախմբված ներդրման օբյեկտների միջև արտանետումները ճշգրիտ բաշխելու համար ձեռնարկված քայլերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոխկապակցված կազմակերպություններին կամ համատեղ ձեռնարկություններին:

¹⁰⁰ ԶԳ ուղղակի (Շրջանակ 1) արտանետումների բացվածքն ըստ աղբյուրների ներկայացված է **Հավելված 3-ում**:

¹⁰¹ Տեղական մարզից կախված Շրջանակ 2-ի արտանետումների համար էլեկտրացանցի էլեկտրաէներգիայի արտանետումների գործակիցները վերցվել են ՄՁՄ ստանդարտացված ելակետային տվյալներից ASB0038-2021՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ համակարգի էլեկտրացանցերում արտանետումների գործակից: Արտանետումների գործակիցն էներգետիկ ոլորտում 0.43596 է:

¹⁰² ԶԳ անուղղակի (Շրջանակ 2) արտանետումներն ըստ տարածքի ներկայացված են **Հավելված 3-ում**:

¹⁰³ ԶՊՄԿ-ն հետևում է ընդհանուր արտանետումներին՝ օգտագործելով ԶԳ արտանետումների բացարձակ միավորը (տCO₂-ին համարժեք), որը լրացվում է ինտենսիվության միավորներով (օրինակ՝ մեկ տոննա խտանյութին բաժին ընկնող տCO₂-ին համարժեք):

¹⁰⁴ Կիտոյի արձանագրությունում նշված յոթ Ջերմոցային գազերից երկուսի՝ ծծմբի հեքսաֆտորիդի (SF6) և ազոտի եռֆտորիդի (NF3) հաշվարկը հասանելի չէ:

¹⁰⁵ Շրջանակ 1-ի արտանետումները սահմանվում և հաշվարկվում են Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի (WRI) և Կայուն զարգացման համաշխարհային բիզնես խորհրդի (WBCSD) կողմից հրապարակված «Ջերմոցային գազերի արտանետումների արձանագրություն. կորպորատիվ հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության ստանդարտ»-ի (վերանայված հրատարակություն, մարտ 2004թ.) համաձայն՝ ներառյալ անշարժ այրման աղբյուրներից ուղղակի արտանետումների վերաբերյալ կիրառելի ուղեցույցները: Արտանետումների գործակիցները և գլոբալ տաքացման ներուժի (GWP) ցուցանիշները հիմնված են Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄՆ) հիմնադրող գնահատման զեկույցի (2014թ.) վրա: Ջերմոցային գազերի արտանետումները ներկայացվում են CO₂-ի համարժեքով (տCO₂-ին համարժեք)՝ օգտագործելով 100 տարվա ՏԳՆ մեծությունները:

¹⁰⁶ HFC և PFC մինչև 2025թ.ներառված չեն այս ցուցանիշում, այնուամենայնիվ, 2024թ. համար դրանց ծավալը կազմել է 0,42 տCO₂-ին համարժեք:

GRI 305-3

2025թ-ին ՋՊՄԿ-ի Շրջանակ 3-ի արտանետումների ընդհանուր կառուցվածքը հիմնականում պահպանվել է, վաճառված արտադրանքի վերամշակումը շարունակել է գերակշռել արտանետումների ընդհանուր կառուցվածքում՝ գրեթե անփոփոխ պահպանելով իր դիրքը նախորդ տարվա համեմատ: Միաժամանակ, գնված ապրանքների և կապիտալ ներդրումների հետ կապված արտանետումները զգալիորեն աճել են՝ ամրապնդելով իրենց դերը՝ որպես երկրորդ ամենամեծ ազդեցություն ունեցող գործոն: Ի հակադրություն դրա՝ փոխադրումների հետ կապված կատեգորիաներում գրանցվել է դրական շարժ, զգալիորեն նվազել են արդյունահանված հանքաքարի փոխադրումներից արտանետումները, ավելի կտրուկ կրճատվել են աշխատողների՝ դեպի աշխատանքի վայր երթևեկության հետ կապված արտանետումները, նվազել են արտադրանքի իրացման փուլի լոգիստիկայի արդյունքում առաջացող արտանետումները՝ վկայելով արժեշղթայի որոշ հատվածներում արդյունավետության բարձրացման մասին:

Չերմոցային գազերի Շրջանակ 3-ի արտանետումներ, տոննա CO₂-ին համարժեք

Ցուցանիշ ¹⁰⁷	2023թ.	2024թ.	2025թ.
Կատեգորիա 1. Գնված ապրանքներ և ծառայություններ ¹⁰⁸	121,907	173,029	231,658 ¹⁰⁹
Կատեգորիա 2. Կապիտալ ապրանքներ			
Կատեգորիա 3. Վառելիքի և էներգետիկայի հետ կապված գործունեություն, որը ներառված չէ Շրջանակ 1-ում կամ Շրջանակ 2-ում	91,930	57,208	62,714
Կատեգորիա 4. Արդյունահանված հումքի տեղափոխում և բաշխում	29,317	107,857	6,970
Կատեգորիա 5. Շահագործման ընթացքում առաջացած թափոններ	0	120	186
Կատեգորիա 6. Գործողումներ	252	313	424
Կատեգորիա 7. Աշխատողների ամենօրյա ուղևորություններ աշխատանքի և վերադարձ տուն	31,086	58,268	16,119
Կատեգորիա 9. Վերամշակված արտադրանքի տեղափոխում և բաշխում	123,544	43,824	40,817
Կատեգորիա 10. Վաճառված արտադրանքի վերամշակում	369,821	344,620	346,781
ԶԳ այլ անուղղակի արտանետումների (Շրջանակ 3) ընդհանուր ծավալ	767,857	785,239	705,668

GRI 305-4

Չերմոցային գազերի արտանետումների ինտենսիվություն՝ արտադրված խտանյութի մեկ տոննայի, վաճառքի ծավալի և մեկ անձի հաշվով, 2025թ.

Ցուցանիշ	ԶԳ ինտենսիվություն		
	Մեկ տոննայի (խոնավ) հաշվով (տCO ₂ -համարժեք/տոննա)	Վաճառքի ծավալների հաշվով (տCO ₂ - համարժեք/ մլն. ԱՄՆ դոլար)	Մեկ անձի հաշվով (տCO ₂ - համարժեք/աշխատող)
Շրջանակ 1	0.5	136	20.3
Շրջանակ 2	1.2	334	50
Շրջանակ 3	3.5	976	146.2
Շրջանակ 1 + Շրջանակ 2	1.7	469	70.3
Շրջանակ 1 + Շրջանակ 2 + Շրջանակ 3	5.2	1,445	216.5

Չերմոցային գազերի տեսակարար արտանետումները (ածխածնի ինտենսիվություն) հասույթի հաշվարկով

Ցուցանիշ	Զափման միավոր	2023թ.	2024թ.	2025թ.
ԶԳ ընդհանուր արտանետումներ (Շրջանակ 1 և Շրջանակ 2)	Տոննա CO ₂ -համարժեք	303,131	311,924	339,388
ԶԳ տեսակարար արտանետումներ (Շրջանակ 1 և Շրջանակ 2)	Տոննա CO ₂ -համարժեք / Միլիոն դոլար	381	437	469
Հասույթ	Միլիոն դոլար	795.8	713.1	723.0

¹⁰⁷ ՋՊՄԿ-ն, առաջնորդվելով իր սկզբունքներով, շարունակաբար կատարելագործում է արտանետումների մոնիտորինգի և հաշվարկման մոտեցումները, որի արդյունքում ներկայացվում են ավելի ճշգրիտ հաշվարկներ: Որոշ կատեգորիաների դեպքում դա հանգեցրել է ցուցանիշների նվազմանը 2025թ.-ին՝ 2024թ.-ի համեմատ:

¹⁰⁸ Այս կատեգորիայի համար արտանետումները հաշվարկվել են՝ օգտագործելով [MyCarbon.co.uk](#) այլ աղբյուրից վերցված արտանետումների գործակիցները, ինչի արդյունքում հաշվարկված արտանետումներն աճել են մոտավորապես 12%-ով:

¹⁰⁹ Այս գումարից 105,172 տCO₂-ին համարժեք ցուցանիշը հաշվարկվել է գործունեության վրա հիմնված մեթոդով, իսկ 126,486 տCO₂-ին համարժեքը՝ ծախսերի վրա հիմնված մեթոդով: 1-ին և 2-րդ կատեգորիաներում աճը հիմնականում պայմանավորված է 2025թ.-ին ապրանքների և ծառայությունների գնումների համար կատարված ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև պաշարների համալրմամբ:

Հողերի վերականգնում և կանաչապատում

GRI 304-2, 304-3

ՀՐԶԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀՐԶԱՆԱԿՈՒՄ ԶՊՄԿ-Ն ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ԻՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ՝ ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ԿԱՆԱԶՆՊԱՏՄԱՆ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ: 2025Թ-ԻՆ ԱՅԴ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՏԵՍԱՆԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՆ ՏՎԵԼ. ՏՆԿՎԵԼ ԵՎ ԽՆԱՄՎԵԼ ԵՆ 72,194 ԾԱՌԵՐ, ԾԱՌԻԿՆԵՐ ԵՎ ԹՓԵՐ, ՈՐՈՆՑ ԶԳԱԼԻ ՄԱՍԸ՝ 51,132 ԲՈՒՅԱ, ՊԱՀՊԱՆԵԼ Է ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՍՏԵԼ Է ՏԵՂԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ:

2026թ. սկզբին իրականացված հետազա մոնիտորինգը հնարավորություն տվեց հստակեցնել այս աշխատանքների ազդեցությունը կլիմայի վրա: Զափելով բույսերի այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են բարձրությունը, տարիքը և ցողունի տրամագիծը, ՋՊՄԿ-ն գնահատեց վերականգնված բուսականության կողմից կլանված ածխաթթու գազի ծավալը: Թեև դա հաստատեց, որ ծրագիրն իր ներդրումն ունի ածխածնի կլանման գործում, այն նաև ցույց տվեց, որ ազդեցությունը մնում է չափազանց փոքր՝ Ընկերության ջերմոցային գազերի ընդհանուր հետքի համեմատ: Դա նշանակում է, որ վերականգնման աշխատանքներն արժեքավոր են հիմնականում որպես էկոհամակարգերի պահպանման և վերականգնման միջոց, այլ ոչ թե որպես արտանետումների էական փոխհատուցում: ՋՊՄԿ-ի գնահատմամբ՝ վերականգնված բուսածածկը կլանել է 1,800.615 կգ CO₂: Համադրելով դա Շրջանակներ 1, 2 (շուկայից կախված) և 3-ի մասով Ընկերության ջերմոցային գազերի տարեկան ընդհանուր արտանետումների՝ 1,045,057 տոննա CO₂-ին համարժեք ծավալի հետ, այն կազմել է մոտ 0.000172% փոխհատուցում:

Այս աշխատանքում որոշ բուսատեսակներ առանձնացան մյուսներից: Աճանանի և Կարմրաքարի տեղամասերում խնձորենիները, հացենիները և թխկիները, ինչպես նաև Արծվանիկի պղամբարի շրջակայքում տնկված ակացիաները բուսատեսակների շարքում ցուցաբերեցին ածխածնի կլանման ամենաբարձր ցուցանիշը:

Ավելի լայն էկոլոգիական պատկերը տեսնելու համար ՋՊՄԿ-ն նաև իրականացնում է կենսաբազմազանության ամենամյա մոնիտորինգ տեղում դիտարկումների, ֆոտոթակարդների, օդի և ստորերկրյա ջրերի որակի գնահատումների միջոցով, ինչն օգնում է հետևել, թե ինչպես են ժամանակի ընթացքում փոփոխություններին արձագանքում արտադրական տարածքները և հարակից կենսամիջավայրերը:

Հաշվետու տարում՝

▶ Ֆլորայի կամ ֆաունայի կազմում չեն արձանագրվել փոփոխություններ, որոնք կարող էին վերագրվել աղմուկին, փոշուն, թրթռմանը կամ հանքարդյունահանման և տրանսպորտային գործունեությունից արտանետումներին:

▶ Ինվագիվ տեսակների կողմից էական ազդեցություն չի հայտնաբերվել, կանաչապատման աշխատանքներում հիմնականում օգտագործվում են տեղական բուսատեսակներ:

▶ Նախորդ տարում արձանագրված բոլոր տեսակները, այդ թվում՝ Էնդեմիկ և Կարմիր գրքում ընդգրկված տեսակները, կրկին դիտարկվել են, ինչը վկայում է տեսակային կազմի կայունության մասին:

▶ Արտադրական գործունեության ազդեցությունը շարունակում է մնալ տեղային, ժամանակավոր և մեծապես վերականգնելի:

▶ Հաշվետու ժամանակաշրջանում կենսամիջավայրերի փոխակերպման հետևանքով կենսաբազմազանության կորուստներ չեն հայտնաբերվել:

Վերականգնման և ռեկուլտիվացիայի միջոցառումները նախատեսվում է իրականացնել աստիճանաբար և հանքի փակման փուլում՝ ազդեցության ենթարկված կենսամիջավայրերի երկարաժամկետ վերականգնմանը նպաստելու նպատակով:

Հավելվածներ

Հավելված 1: Այս Հաշվետվության մասին

■ GRI 2-2, GRI 2-3, GRI 2-4, GRI 2-5

ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՅՍ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ Ե ՀԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԼԱՅՆ ՀՐԶԱՆԱԿԻՆ ՇԱՆՈԹԱՑՆԵԼ ԶՊՄԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ: ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Ե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԶԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ:

Մենք ձգտում ենք պահպանել հստակ և արդյունավետ հաղորդակցություն մեր շահագրգիռ կողմերի հետ, որի մասին վկայում է կայուն զարգացման ոլորտում հաշվետվողականության առաջատար համաշխարհային չափանիշներին հետևելու մեր հանձնառությունը: Հաշվետվությունը պատրաստվել է Հաշվետվողականության համաշխարհային նախաձեռնության (GRI) չափանիշներին և Կայուն զարգացման ոլորտում հաշվապահական հաշվառման չափանիշների խորհրդի (SASB) ուղեցույցներին համապատասխան: Այս տարի Հաշվետվության շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով Բնության հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբին (TNFD) վերաբերող բաժինը, որտեղ ներկայացվում է Ընկերության մոտեցումը՝ բնության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների բացահայտմանը, գնահատմանը և կառավարմանը:

Ոչ ֆինանսական տեղեկատվության բացահայտումների համար ներկայացվում են «Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տվյալները՝ բացառելով վերջինիս դուստր ընկերություններին, իսկ ֆինանսական տեղեկատվության բացահայտումները ներառում են «Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի տվյալները, ինչպես նշված է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

ԶՊՄԿ-ն յուրաքանչյուր տարի հրապարակում է կայուն զարգացման հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանը համապատասխանեցնելով ֆինանսական տարվա հետ: Այս Հաշվետվությունը ներառում է ԶՊՄԿ-ի 2025թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի տվյալները և կրապարակվի 2026թ. օգոստոսին:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների տվյալների փոփոխություններ չեն կատարվել, եթե Հաշվետվությունում այլ բան նշված չէ: 2023 թ. համադրելի տվյալները, եթե սույն հաշվետվությունում ներկայացված չեն, կարելի է գտնել մեր 2024 թ. Կայուն զարգացման հաշվետվությունում: Մենք գիտակցում ենք անկախ վավերացման կարևորությունը, և այս Հաշվետվությանը կից ներկայացված է Անկախ հավաստիացման եզրակացությունը:

Հավելված 2: Կրկնակի էականության գնահատում

■ GRI 3-1

ԶՊՄԿ-ն իրականացրել է կրկնակի էականության գնահատում (ԿԵԳ)՝ կայուն զարգացմանն առնչվող էական ազդեցությունները, ռիսկերը և հնարավորությունները հայտնաբերելու և գնահատելու համար: Գնահատման ընթացքում հաշվի են առնվել ինչպես Ընկերության գործունեության ազդեցությունը մարդկանց և շրջակա միջավայրի վրա, այնպես էլ կայուն զարգացմանը վերաբերող այն ռիսկերը և հնարավորությունները, որոնք ունեն կամ կարող են ողջամտորեն ակնկալվել, որ կունենան ֆինանսական ազդեցություն Ընկերության վրա:

Գնահատումը ներառել է ԶՊՄԿ-ի գործառնությունները և արժեշղթայի՝ հանքաքարի արդյունահանումից մինչև վերջինիս սպառումն ընկած փուլերը, ներառյալ հիմնական մատակարարներին, կապալառուներին և փոխադրման ծառայություններ մատուցողներին: Գնահատման շրջանակն արտացոլել է Ընկերության բիզնես մոդելը, գործունեությունը, արտադրանքը, գործունեության տարածքները, շահագրգիռ կողմերի խմբերը, բիզնես հարաբերությունները և արտաքին գործառնական միջավայրը: Հաշվետվողականության շրջանակը համապատասխանում է Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունների շրջանակին:

Գնահատումն ընդգրկել է մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջանը և դիտարկել է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակային հորիզոնները, որոնք ԶՊՄԿ-ի կողմից սահմանվել են հետևյալ կերպ՝ կարճաժամկետ՝ մինչև 1 տարի, միջնաժամկետ՝ 1-ից 5 տարի և երկարաժամկետ՝ ավելի քան 5

տարի: Այս ժամանակային հորիզոնները կիրառվել են հետևողականորեն ինչպես ազդեցությունները, այնպես էլ ֆինանսական ռիսկերը և հնարավորությունները գնահատելիս:

Գործընթացը համակարգվել է Կայուն զարգացման տնօրինության կողմից և իրականացվել է Կայուն զարգացման, ֆինանսների, ռիսկերի կառավարման, իրավաբանական, համապատասխանության, մարդկային ռեսուրսների, գնումների, գործառնությունների, վաճառքի և ներքին աուդիտի ստորաբաժանումների համապատասխան ներքին փորձագետների մասնակցությամբ: ԶՊՄԿ-ն օգտագործել է Նաև կառավարման գործող գործընթացներից, այդ թվում՝ ձեռնարկության ռիսկերի կառավարման, համապատասխանության մոնիտորինգի, ներքին աուդիտի, ռազմավարական և ֆինանսական պլանավորման, գնումների, մարդկային ռեսուրսների կառավարման և շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացներից ստացված տեղեկատվությունը:

Գնահատումն իրականացվել է ԶՊՄԿ-ին վերաբերող հատուկ տվյալների, ներքին փաստաթղթերի, փորձագետների դատողությունների և դիտարկումների, ռիսկերի կառավարման մասին առկա տեղեկատվության և արտաքին միջավայրի, այդ թվում՝ կարգավորող դաշտի, շուկայի և ոլորտի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Այն դեպքերում, երբ քանակական տվյալները հասանելի չէին, ամբողջական չէին կամ բավարար մանրամասնությամբ չէին ներկայացված, ԶՊՄԿ-ն հիմնվել է ներքին և արտաքին փորձագետների դատողությունների վրա:

Ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների հայտնաբերում

ԶՊՄԿ-ն գնահատման գործընթացը սկսել է իր բիզնես մոդելի, ռազմավարության, գործունեության, արտադրանքի և ծառայությունների, գործունեության տարածքների և արժեշդթայի վերլուծությամբ։ Այդ վերլուծության հիման վրա հայտնաբերվել են Ընկերության համար արդիական հանդիսացող կայուն զարգացմանն առնչվող հարցերը և կազմվել է փաստացի և հնարավոր ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների նախնական ցանկը՝ Կայուն զարգացման հաշվետվությունների եվրոպական ստանդարտների (ESRS) թեմատիկ ուղղություններով։

Ազդեցությունները հայտնաբերվել են գնահատելով, թե ինչպես է ԶՊՄԿ-ն իր գործունեության և գործարար հարաբերությունների միջոցով ազդում կամ կարող է ազդել մարդկանց և շրջակա միջավայրի վրա։ Այդ գնահատման շրջանակում դիտարկվել է, արդյոք ազդեցությունները պայմանավորված են Ընկերության գործունեությամբ, արդյոք Ընկերությունը նպաստել է դրա առաջացմանը կամ արդյոք այն կապված է Ընկերության հետ՝ արժեշդթայի, հանքաքարի արդյունահանումից մինչև վերջինիս սպառումն ընկած փուլերի միջոցով։ ԶՊՄԿ-ն դիտարկել է փաստացի և հնարավոր, դրական և բացասական ազդեցությունները և դասակարգել է դրանք ըստ արժեշդթայում ունեցած դիրքի, ժամանակային հորիզոնի և մարդու իրավունքների վրա ազդեցության։

Շահագրգիռ կողմերի տեսակետները հավաքագրվել են աշխատողների և շահագրգիռ կողմերի հարցումների, բողոքների դիտարկման մեխանիզմների, ազդարարման

Գնահատում և առաջնահերթությունների սահմանում

ԶՊՄԿ-ն գնահատել է ազդեցությունները հիմնվելով դրանց ծանրության աստիճանի վրա։ Բացասական ազդեցության դեպքում ծանրության աստիճանը որոշվել է հաշվի առնելով ազդեցության մասշտաբը, ընդգրկման շրջանակը և անդառնալի բնույթը։ Մասշտաբն արտացոլել է ազդեցության լրջությունը, ընդգրկման շրջանակը՝ դրա տարածվածությունը, իսկ անդառնալի բնույթը՝ այն չափը, որով դրա հետևանքները կարելի է վերացնել կամ շտկվել։ Դրական ազդեցությունը գնահատելիս հաշվի են առնվել միայն մասշտաբը և ընդգրկման շրջանակը։

շնարավոր ազդեցության դեպքում հաշվի է առնվել նաև դրա հավանականությունը՝ բացառությամբ մարդու իրավունքների հետ կապված հնարավոր բացասական ազդեցության։ Այդ ազդեցությունը գնահատելիս ԶՊՄԿ-ն կիրառել է «հավանականության նկատմամբ ծանրության աստիճանի գերակայության» սկզբունքը, որը նշանակում է, որ հավանականությունն առանձին չի գնահատվել և էականության վերաբերյալ եզրակացությունը հիմնվել է հնարավոր ազդեցության ծանրության աստիճանի վրա։ Այդ մոտեցումը կիրառվել է բացառելու այն իրավիճակը, երբ մարդու իրավունքների վրա հնարավոր լուրջ ազդեցությունը չի ընդգրկվի

հարթակների, մատակարարների և կապալառուների հետ փոխգործակցության, համայնքների ներգրավվածության և փոխգործակցության այլ գործող գործընթացների միջոցով։ Այն դեպքերում, երբ ազդակիր շահագրգիռ կողմերի հետ ուղղակի փոխգործակցությունը հնարավոր չի եղել, մարդկանց և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով ԶՊՄԿ-ն հիմնվել է իր ներքին փորձառության ու գիտելիքների, բողոքների և դժգոհությունների դիտարկման վերաբերյալ առկա տվյալների, ոլորտին առնչվող տեղեկատվության, արտաքին համադրելի ցուցանիշների և այլ համապատասխան աղբյուրներից ստացված տվյալների վրա։

Կայուն զարգացման հետ կապված ռիսկերն ու հնարավորությունները հայտնաբերվել են գնահատելով, թե ինչպես կարող են կայուն զարգացման հարցերն ազդել Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի, ֆինանսավորման հասանելիության և կապիտալի արժեքի վրա։ ԶՊՄԿ-ն դիտարկել է նաև, թե արդյոք բնական, մարդկային կամ սոցիալական ռեսուրսներից կախվածությունը կարող է առաջացնել ֆինանսական ռիսկեր կամ հնարավորություններ և արդյոք հայտնաբերված ազդեցությունը կարող է վերածվել ֆինանսական հետևանքների, օրինակ՝ Նորմատիվաիրավական պահանջների հետ կապված ռիսկերի, վերականգնման ծախսերի, աշխատանքի խափանումների, գնորդների ակնկալիքների, հեղինակության վրա ազդեցության կամ ֆինանսավորման պայմանների միջոցով։

Գնահատման շրջանակում միայն այն պատճառով, որ դրա առաջացման հավանականությունը անորոշ է կամ դժվար է գնահատել։

Ռիսկերը և հնարավորությունները գնահատվել են հիմնվելով դրանց հնարավոր ֆինանսական ազդեցության չափի և համապատասխան ժամանակային հորիզոններում ի հայտ գալու հավանականության վրա։ Ազդեցության չափը գնահատելիս ԶՊՄԿ-ն հաշվի է առել նաև հնարավոր հետևանքները ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի, ֆինանսավորման հասանելիության և կապիտալի արժեքի համար։ Զանալական ֆինանսական տվյալների առկայության դեպքերում գնահատումը հիմնվել է այդ տվյալների վրա, մացած դեպքերում կիրառվել են ֆինանսների, ռիսկերի և բիզնեսի ոլորտի փորձագետների որակական դատողությունները։

ԶՊՄԿ-ն կիրառել է նախապես սահմանված գնահատման չափանիշներ և սահմանաչափեր ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների առաջնահերթությունը սահմանելու համար։ Գնահատման չափանիշներն առանձին անդադարձել

են ազդեցության էականությանը և ֆինանսական էականությանը, մինչդեռ էականության վերաբերյալ վերջնական եզրակացությունը կայացվել է կրկնակի էականության սկզբունքի հիման վրա։ Կայուն զարգացման թեման համարվել է էական, եթե էական է եղել ազդեցության կամ ֆինանսական էականության տեսանկյունից, կամ երկու տեսանկյուններից միաժամանակ։ Ծանրության աստիճանի, չափի և հավանականության գնահատման սանդղակները, կիրառված կշիռները և սահմանաչափը, որին հասնելու կամ որը գերազանցելու դեպքում հարցը համարվել է էական, ներկայացված են Ընկերության ԿԷԳ մեթոդաբանությունում։

Ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների միջև փոխկապակցվածության դիտարկում

Գնահատման շրջանակում ԶՊՄԿ-ն գնահատել է հայտնաբերված ազդեցությունների և դրանց հետ կապված ֆինանսական ռիսկերի ու հնարավորությունների միջև փոխկապակցվածությունը։ Բացասական ազդեցությունը վերլուծվել է որոշելու համար, արդյոք այն կարող է հանգեցնել ֆինանսական ռիսկերի, այդ թվում՝ համապատասխանության ապահովման ծախսերի ավելացման, կարգավորող մարմինների կողմից կիրառվող տույժերի, դատական վարույթների, վերականգնման ծախսերի, աշխատանքի խափանումների, հեղինակությանը վնաս հասցնելուն, գնորդների կորստի կամ ֆինանսավորման ծախսերի աճի։

Նմանապես, դիտարկվել են դրական ազդեցությունը և կայուն զարգացման հետ կապված նախաձեռնությունները դիտարկվել են որոշելու համար, արդյոք դրանք կարող են ստեղծել հնարավորություններ, ինչպիսիք են՝ գործառնական արդյունավետության

Գնահատման արդյունքում հայտնաբերվել է 49 էական ազդեցություն, 22 էական ռիսկ և 9 էական հնարավորություն։ Գնահատման արդյունքները համապատասխանում են կայունության 8 էական թեմաներին, որոնք ներառում են 31 ենթաթեմաներ։ Արդյունքներն ամփոփված են հաջորդ էջերում ներկայացված կրկնակի էականության գնահատման աղյուսակում։ Այդ ութ թեմաներն ընտրվել են գնահատման ընթացքում ուսումնասիրված ESRS թեմատիկ ստանդարտների ամբողջական փաթեթից։ Ոչ էական համարված թեմաները, այդ թվում՝ ESRS S2 (Արժեշդթայի աշխատողներ) և ESRS S4 (Սպառողներ և վերջնական օգտագործողներ), գնահատվել են նույն հիմունքով և շարունակվում են դիտարկվել։

Ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների միջև փոխկապակցվածության դիտարկում

բարձրացումը, շուկա մուտք գործելու գործընթացի բարելավումը, գնորդների հետ հարաբերությունների ամրապնդումը, կայուն ֆինանսավորման հասանելիությունը, աշխատողների հետ երկարատև աշխատանքային հարաբերությունների պահպանման ավելի բարձր ցուցանիշի ապահովումը կամ բիզնես մոդելի դիմակայունության բարելավումը։

ԶՊՄԿ-ն դիտարկել է նաև կախվածությունն այն ռեսուրսներից և հարաբերություններից, որոնց վրա հիմնված է իր բիզնես մոդելը, այդ թվում՝ կախվածությունն էներգիայից, ջրից, որակավորված աշխատուժից, մատակարարներից, կապալառուներից, տեղական համայնքներից և ֆինանսավորումից։ Այդ կախվածությունները հաշվի են առնվել գնահատելու համար, թե արդյոք կայուն զարգացման հարցերը կարող են ազդել Ընկերության ռազմավարության, գործունեության, ֆինանսական պլանավորման կամ ռիսկերի կառուցվածքի վրա։

Կառավարում, ներքին ստուգում և ինտեգրում կառավարման գործընթացներում

ԿԷԳ գործընթացն անցել է ներքին ստուգման և վավերացման փուլերը։ Ազդեցությունների, ռիսկերի և հնարավորությունների նախնական ցանկը և գնահատման արդյունքները ստուգվել են Կայուն զարգացման տնօրինության կողմից։

ԿԷԳ-ի արդյունքները նախատեսված են ծառայելու որպես հիմք կայուն զարգացման հետ կապված նկատառումների՝ համապատասխան կառավարման գործընթացներում հետագա ինտեգրման համար։ ԿԷԳ-ի միջոցով հայտնաբերված կայուն զարգացմանն առնչվող ռիսկերը, ըստ անհրաժեշտության և գործնական կիրառելիության, կարող են դիտարկվել Ընկերության ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման, ներքին հսկողության, ռազմավարական պլանավորման կամ ֆինանսական պլանավորման գործող գործընթացների համատեքստում։

Նմանապես, ԿԷԳ-ի միջոցով բացահայտված հնարավորությունները կդիտարկվեն ռազմավարության մշակման, առևտրի պլանավորման, գործառնությունների բարելավման, ներդրումների պլանավորման կամ ֆինանսավորման նկատառումների համատեքստում՝ Ընկերության գործունեությանը և որոշումների կայացմանը համապատասխան։

ԶՊՄԿ-ն կօգտագործի ԿԷԳ արդյունքները կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվողականությանը, ղեկավարության քննարկումներին և կիրառելի ստանդարտներով պահանջվող գործողությունների, քաղաքականությունների, նպատակների և ցուցանիշների հետագա մշակմանն աջակցելու նպատակով։ Բացի այդ, ԶՊՄԿ-ն կապահովի, որ ԿԷԳ-ը ենթարկվի արտաքին աուդիտի և վերանայվի առնվազն տարին մեկ անգամ։

Էական թեմաներ, ազդեցություններ, ռիսկեր և հնարավորություններ

Ստորև բերված աղյուսակի տվյալները հիմնված են ԿԷԳ-ի վերջնական արդյունքների վրա և ամփոփ կերպով ներկայացնում են գնահատման արդյունքում ԶՊՄԿ-ի կողմից հայտնաբերված էական ազդեցությունները, ռիսկերը և հնարավորությունները

Կրկնակի էական Թեմաների Ամփոփ աղյուսակ

Կայունության հարցերի նկարագիր	Տեսակը		Բնույթը	Տեղադրությունը արժեշղթայում	Ժամանակային հորիզոն	
	Ազդեցություն	Ռիսկ	Հնարավորություն	Դրական/Բացասական Փաստացի/Հնարավոր	Վերին արժեշղթա, Սեփական գործունեություն, Ստորին արժեշղթա	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
ESRS E1. Կլիմայի փոփոխություն						
Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմում						
Շրջանակ 1-ի ԶԳ արտանետումներ դիզելային վառելիքի/այլ վառելիքի այրումից հանքարդյունաբերական շարժական սարքավորումներում (ինքնաթափ բեռնատարներ, բեռնաքարձիչներ, հորատման սարքեր), տեղամասերում շահագործվող գեներատորներում և ջեռուցման համակարգերի/կաթսայատների համար նախատեսված ստացիոնար այրման կայանքներում:	✔			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Շրջանակ 2-ի ԶԳ արտանետումներ՝ պայմանավորված գնված էլեկտրաէներգիայի սպառմամբ, որն օգտագործվում է հանքաքարի մանրացման, աղացման, ֆլոտացիայի, ջրի մղման և ջրահեռացման գործընթացներում:	✔			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Շրջանակ 3-ի արդյունահանման հետ կապված ԶԳ արտանետումներ առաջացած արտադրությունից և հիմնական նյութերի/ռեսուրսների փոխադրումից (պայթուցիկ նյութեր, ֆլոտացիայի ռեագենտներ, պողպատ, պահեստամասեր, անվադողեր, ցեմենտ և արտապատվիրված ծառայություններ):	✔			Բացասական/Փաստացի	Վերին արժեշղթա	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Շրջանակ 3-ի սպառման հետ կապված ԶԳ արտանետումներ խտանյութերի/արտադրանքի փոխադրման և հետագա մշակման/ձուլման/զտման գործընթացների արդյունքում:	✔			Բացասական/Փաստացի	Ստորին արժեշղթա	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի ԶԳ արտանետումների կրճատում գործընթացների արդյունավետության բարձրացման միջոցով (մեկ տոննայի հաշվով էներգիայի սպառման (կվտժ) նվազեցում, մանրացման գործընթացի արդյունավետության բարձրացում, գործընթացների կառավարման բարելավում, կրկնակի մշակման անհրաժեշտության և կորուստների կրճատում):	✔			Դրական/Հնարավոր	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ Երկարաժամկետ
Շրջանակ 1-ի և Շրջանակ 2-ի ԶԳ արտանետումների կրճատում վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացման (էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի/տեղում էլեկտրաէներգիայի արտադրության միջոցով) և հնարավորության դեպքում սարքավորումների էլեկտրաֆիկացման միջոցով:	✔			Դրական/Հնարավոր	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ Երկարաժամկետ
Գործառնական ծախսերի ավելացման ռիսկ դիզելային վառելիքի/այլ վառելիքի գների աճի և վառելիքի որակի/արտանետումների համար գործող կանոնների խստացման հետևանքով, ածխածնի գնագոյացման մեխանիզմների/ակցիզային հարկի/արտանետումների առևտրի համակարգի հնարավոր ծախսեր ուղղակի այրման արտանետումների հետ կապված, սպասարկման և փոխարինման կապիտալ ծախսերի ավելացում՝ շարժական սարքավորումների արտանետումների ստանդարտներին համապատասխանելու նպատակով, հնարավոր տուգանքներ անհամապատասխանության համար և հարկադիր գործողությունների հետևանքով առաջացած պարապլուրներ:		✔		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Պղնձի և մոլիբդենի խտանյութի, բազմամետաղային հանքաքարի և զտված կապարի նկատմամբ պահանջարկի կառուցվածքային աճը (էլեկտրաֆիկացում, էլեկտրացանց, վերականգնվող էներգիայի աղբյուրներ, էլեկտրական մեքենաների մատակարարման շղթաներ, էներգաարդյունավետություն, էներգիայի պահպանման համակարգ) նպաստում է ծավալների ավելացմանը, գների աճին երկարաժամկետ հեռանկարում, պայմանագրերի ավելի բարենպաստ պայմանների/արտադրանքի նախնական գնման ընտրության հնարավորությունների ընդլայնմանը (այդ թվում՝ պայմանագրերի ավելի երկար ժամկետների սահմանմանը):			✔	Կիրառելի չէ	Ստորին արժեշղթա	Միջնաժամկետ Երկարաժամկետ
Էլեկտրաէներգիա						
Հանքարդյունաբերությունում և ներքին փոխադրումներում վառելիքի սպառման ինտենսիվությունը, որն ազդում է կլիմայի վրա ուղղակի այրման արդյունքում առաջացող արտանետումների միջոցով (կապված Շրջանակ 1-ի արտանետումների հետ):	✔			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Հանքարդյունահանման և հանքաքարի վերամշակման (հատկապես մանրացման և ջրի մղման գործընթացներում) բարձր էներգատարությունը, որը հանգեցնում է կլիմայի վրա ավելի մեծ անուղղակի ազդեցության՝ էլեկտրաէներգիայի սպառման միջոցով (Շրջանակ 2-ի արտանետումների հետ կապված):	✔			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Էլեկտրաէներգիայի գների տատանումների, սակագների բարձրացման և էլեկտրաէներգիայի գներում ածխածնի հետ կապված ծախսերի հնարավոր արտացոլման հետևանքով ծախսերի աճի ռիսկ էլեկտրամատակարարման խափանումների/ սահմանափակումների ռիսկ, որը կարող է բացասաբար ազդել արտադրության վրա, էներգաարդյունավետության բարձրացման, պահուստային էլեկտրամատակարարման կամ էլեկտրացանցին միացման արդիականացման համար կապիտալ ծախսերի հնարավոր անհրաժեշտություն, կապիտալի արժեքի հնարավոր աճ արտանետումների բարձր ինտենսիվության պահպանման դեպքում:		✔		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Որպես կանոն, էլեկտրաէներգիայի ամենամեծ ծավալը սպառվում է մանրացման և ջրի մղման գործընթացներում. նպատակային արդիականացումները (բարձր ճնշման գլանային աղացներ (HPGR)/փոփոխական արագության շարժիչներ (VSD), տեխնոլոգիական շրջափուլի օպտիմալացում և գործընթացների կառավարման բարելավում) կարող են ապահովել ծախսերի կայուն մակարդակ և նվազեցնել կախվածությունն էլեկտրաէներգիայի գների տատանողականությունից:			✔	Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ

Կայունության հարցերի նկարագիր	Տեսակը		Բնույթը	Տեղադրությունը արժեշղթայում	Ժամանակային հորիզոն	
	Ազդեցություն	Ռիսկ	Հնարավորություն	Դրական/Բացասական Փաստացի/Հնարավոր	Վերին արժեշղթա, Սեփական գործունեություն, Ստորին արժեշղթա	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Հարմավորադականություն կլիմայի փոփոխությանը						
Տեղի շրջակա միջավայրի/համայնքների դիմակայունության նվազում, եթե հանքի ենթակառուցվածքների և հողերի կառավարման միջոցառումների դեպքում հաշվի չեն առնվում տեղումների/ջերմաստիճանի փոփոխվող օրինաչափությունները՝ դրանով իսկ խորացնելով տեղական համայնքների խոցելիությունը (օրինակ՝ անձրևաջրերի ոչ համապատասխան կառավարումը կարող է հանգեցնել մակերևութային հոսքի առավելագույն մակարդակների բարձրացմանը և հոսանքն ի վար գտնվող տարածքներում էրոզիայի ուժեղացմանը):	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ երկարաժամկետ
Կլիմայական գործոնները հաշվի չառնող ենթակառուցվածքը և հողային/ջրային ռեսուրսների ոչ պատշաճ կառավարումը մեծացնում են կլիմայի փոփոխությունների ֆիզիկական հետևանքների հետ կապված ծախսերի (վերանորոգման կապիտալ ծախսեր, մաքրման ծախսեր, ապահովագրավճարներ), արտադրական պարապյուրդների և կարգավորող մարմինների կողմից հնարավոր պատժամիջոցների կիրառման հավանականությունը, եթե մակերևութային հոսքը/էրոզիան հանգեցնեն բնապահպանական օրենսդրության խախտումների, դա կարող է նաև առաջացնել թույլտվությունների տրամադրման սահմանափակումներ և տեղական համայնքների դիմադրություն, ինչը կարող է հանգեցնել ժամանակացույցով սահմանված ժամկետների երկարաձգման և մեղմման միջոցառումների հետ կապված լրացուցիչ ծախսերի:		✓		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ երկարաժամկետ
ESRS E2.Աղտոտում						
Օդի աղտոտում						
Պայթեցման, մանրացման, մաղման, փոխակրիչների, պահեստակույտերի, պոչամբարի չոր մակերեսների, հանքահանման ուղիների և երթևեկության արդյունքում առաջացող չվերահսկվող փոշու արտանետումները (10/2.5 միկրոմետր չափով մասնիկներ՝ PM10 և PM2.5) ազդում են հարակից բնակավայրերի մթնոլորտային օդի որակի վրա:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Պոչամբարի և դատարկ ապարների լցակույտերի տարածքներից քամու միջոցով տարածվող փոշի, որը մեծացնում է հողի, բուսածածկի, շենքերի և մակերևութային ջրերի վրա փոշու մասնիկների նստեցման ծավալները:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Փոշու արտանետումների նվազեցում՝ ջրցան համակարգերի, փոշեպաշտպան ծածկերի, փոխակրիչների ժապավենների ծածկապատման և ճանապարհների բարելավման միջոցով:	✓			Դրական/Հնարավոր	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Հարկադիր գործողությունների ռիսկ, որոնք պահանջում են կայունացման միջոցառումներ (պոչամբարի կառավարում, ռեկուլտիվացիոն շերտ, քամուց պաշտպանող պատնեշներ, կապակցանյութեր)՝ ավելացնելով պահպանման կապիտալ և գործառնական ծախսերը, երրորդ կողմերի հնարավոր պահանջները (գույքի/առողջությանը հասցված վնաս) և հեղինակությանը հասցված վնաս, որը կարող է բասացաբար ազդել թույլտվությունների ստացման և ֆինանսավորման հասանելիության վրա:		✓		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Ջրի աղտոտում						
Հանքավայրի/վերամշակման կայանների հոսքաջրերում թափոնների (օրինակ՝ մետաղների, կախյալ մասնիկների ընդհանուր քանակի (TSS), ջրածնային ցուցիչի (pH), սուլֆատների) թույլատրելի սահմանաչափը գերազանցող քանակ, ինչը հանգեցնում է հոսանքն ի վար գտնվող մակերևութային ջրերի որակի վատթարացման:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Հանքաքարի պահեստներից, դատարկ ապարներից, պոչամբարից և բացահանքի ճանապարհներից աղտոտված անձրևաջրերը կախյալ մասնիկները և լուծված աղտոտիչները տեղափոխում են ընդունող ջրային մարմիններ:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Աղտոտող նյութերի ծավալների ավելացում վարարումների ժամանակ, եթե գերազանցվում է կուտակման և մաքրման համակարգերի թողունակությունը, ինչը հանգեցնում է աղտոտման դրվագային ազդանքներ:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Տույժերի առաջացման և թույլտվությունների պահանջներին չհամապատասխանելու հետևանքների ռիսկ, ներառյալ՝ արտադրության պարտադիր կրճատումը, արտանետվող ջրի համար ավելի խիստ սահմանաչափերի սահմանումը կամ թույլտվության կասեցումը, զգալի կապիտալ ծախսեր մաքրման համակարգերի արդիականացման համար (չեզոքացում, պարզեցում/զտում, մետաղների հեռացում) և ընթացիկ գործառնական ծախսեր ռեազենտների/շլամի կառավարման համար, իրավական ռիսկերի և երկրից դուրս գտնվող շահագրգիռ կողմերի կողմից ճնշման գործադրման հավանականության մեծացում՝ արտադրության հետագա փուլերի վրա ենթադրվող ազդեցության դեպքում ՝		✓		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Ստեղծել կայուն և մաքրման և ավտոմատացման համակարգեր (մետաղների հեռացում, չեզոքացում, պինդ թափոնների կառավարում) և, հնարավորության դեպքում, ստանալ օգտակար նյութեր (օրինակ՝ կորզել մետաղներ տեխնոլոգիական հոսքերից/շլամից):			✓	Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ երկարաժամկետ
Հողի աղտոտում						
Մետաղ պարունակող փոշու նստեցում (հանքաքարի/խտանյութի բեռնաթափման և տեղափոխման աշխատանքներից, պոչամբարից, բացահանքի ճանապարհներից), ինչը նպաստում է հարակից տարածքներում հողի աստիճանական աղտոտմանը:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Հողերի ռեկուլտիվացիա և որակի բարելավում հանքարդյունաբերական աշխատանքներից հետո՝ օրգանական նյութերի ավելացման, կրայնացման և ֆիտոռեմեդիացիայի միջոցով:	✓			Դրական/Հնարավոր	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ երկարաժամկետ
Շատ մեծ մտահոգություն առաջացնող նյութեր (SVHC)						
Նորմատիվաիրավական պահանջների փոփոխության ռիսկ՝ կապված հանքաքարում բնական ճանապարհով առաջացող՝ շատ մեծ մտահոգություն առաջացնող նյութերի (մկնդեղ, կադմիում, կապար) առկայության հետ, արտանետումների սահմանաչափերի խստացում, օգտագործվող շատ մեծ մտահոգություն առաջացնող նյութերի համար թույլտվության ընթացակարգերի պահանջներ, պատասխանատվություն աշխատողների՝ քաղցկեղաձին, մուտագեն և վերադարձողականության վրա վնասակար ազդեցություն ունեցող (CMR) նյութերի ազդեցությանը ենթարկվելու համար, վնասակար ազդեցության վերահսկման միջոցառումների հետ կապված ծախսեր, մատակարարման շղթաներից դուրս մնալու ռիսկ՝ այն դեպքերում, երբ պահանջվում է շատ մեծ մտահոգություն առաջացնող նյութերից զերծ արտադրանք:		✓		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ երկարաժամկետ

Կայունության հարցերի նկարագիր	Տեսակը		Բնույթը	Տեղադրությունը արժեշղթայում	Ժամանակային հորիզոն	
	Ազդեցություն	Ռիսկ	Հնարավորություն	Դրական/Բացասական Փաստացի/Հնարավոր	Վերին արժեշղթա, Սեփական գործունեություն, Ստորին արժեշղթա	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
ESRS E3. Ջրային ռեսուրսներ						
Ջրի սպառում						
Ջրի զուտ սպառման բարձր ցուցանիշ՝ հանքաքարի վերամշակման գործընթացում (ներառյալ՝ գոլորշիացումը, կորուստը պղջերում, խոնավությունը խտանյութում), ինչը նվազեցնում է տեղական ջրային ռեսուրսների հասանելիությունն էկոհամակարգերի և այլ օգտագործողների համար, հատկապես սակավաջուր ժամանակներում:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Ջրի զուտ սպառման նվազեցում՝ ջրի օգտագործման գործընթացների օպտիմալացման և վերամշակման ընթացքում կրկնակի օգտագործման միջոցով, ջրհավաք ավազանին հասանելի ջրի ծավալի ավելացում և էկոլոգիական հոսքի պայմանների բարելավում:	✓			Դրական/Հնարավոր	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Ջրի հասանելիության սահմանափակումների (թույլտվությունների սահմանաչափեր, ջրադի սեզոնային սահմանափակումներ) ազդեցության ռիսկ, ինչը կարող է հանգեցնել արտադրողականության պարտադիր կրճատմանը կամ ավելի բարձր ծախսատարությամբ գործառնական մոդելների կիրառմանը, գործառնական ծախսերի ավելացում՝ այլընտրանքային ջրամատակարարման ապահովման նպատակով (պոմպակայաններ, պահեստավորում, մաքրում) և կապիտալ ծախսերի ավելացում՝ արդյունավետության բարձրացման նպատակով, հանքի փական/պահուստների ձևավորման ծախսերի հնարավոր աճ, եթե ջրային հաշվեկշռի կառավարումն ավելացնի երկարաժամկետ պարտավորությունները:		✓		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Ներդրումներ գործընթացների օպտիմալացման ուղղությամբ (խտացում, վերականգնում, արտահոսքի նվազեցում, ջրային հաշվեկշռի կառավարման բարելավում)՝ մեկ տոննայի հաշվով ջրի զուտ սպառումը և գործառնական տատանողականությունը նվազեցնելու նպատակով:			✓	Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ Երկարաժամկետ
Ջրադի ծավալ						
Մակերևութային ջրերի մեծածավալ ջրառը նվազեցնում է գետերի/առուների բազային և սեզոնային հոսքերը, ինչը կարող է հանգեցնել ջրային կենսամիջավայրի և էկոհամակարգային ծառայությունների վատթարացմանը:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Ջրադի ծավալները և եղանակները, որոնք մեծացնում են ջրային ռեսուրսների համար մրցակցությունը տեղական համայնքների և գյուղատնտեսության հետ (Ընկերության գործունեության ազդեցությունն արտաքին միջավայրի վրա. ընդհանուր օգտագործվող ռեսուրսների հասանելիության/որակի նվազում):	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Կարգավորող մարմինների կողմից ջրադի թույլտվությունների և էկոլոգիական հոսքի պահանջների պահպանման խստացման ռիսկ, ինչը կարող է հանգեցնել թույլատրելի ջրադի ծավալների կրճատման, արտադրական գործընթացների խափանումների և պարտադիր կապիտալ ծախսերի (ջրամբարների կառուցում, ջրադի համակարգերի վերանախագծում, ջրջանցիկ հոսքերի ապահովում) և գործառնական ծախսերի (մոնիտորինգի և համապատասխանության ապահովման հաշվետվություններ):		✓		Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
Մշակել ջրի կրկնակի օգտագործման ավելի բարձր ցուցանիշների ապահովման չափելի պլան և հրապարակել ինտենսիվության ցուցանիշները (մ ³ /տոննա)՝ կիրառելով ավտոմատացման և չափագրման համակարգեր արդյունավետությունը ստուգելու նպատակով:			✓	Կիրառելի չէ	Սեփական գործունեություն	Միջնաժամկետ Երկարաժամկետ
Ջրի արտանետում						
Արտադրական ջրերի արտահոսք դեպի մակերևութային ջրային մարմիններ, մետաղների և սուլֆատների բարձր խտություն պարունակող դրենաժային ջրերի արտահոսք դեպի մակերևութային ջրային մարմիններ և հանքավայրի տարածքներից կախյալ մասնիկներ ու աղտոտիչներ պարունակող անձրևաջրերի արտահոսք դեպի ջրային մարմիններ:	✓			Բացասական/Փաստացի	Սեփական գործունեություն	Կարճաժամկետ Միջնաժամկետ Երկարաժամկետ
ESRS E4. Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր						
Կենսաբազմազանության կորստի հանգեցնող անմիջական գործոններ. հողօգտագործման փոփոխություն, քաղցրահամ ջրի օգտագործման փոփոխություն և ծովերի օգտագործման փոփոխություն						
